

ՈՒՒՍ




ԱՐԱՐԱՏԻ

Թիվ 1 (19), Վարդ - ապրիլ, 2010 թ.

Հայ - քուրթական հարաբերությունների
կարգավորման միակ ճանապարհը իրավական ուղին է

Քոբայր 12-13-րդ դդ.

Իրականությունն այն է, որ փարածաշրջանի եվ ոչ մի ժողովուրդ ու երկիր անմասն չի մնալու ապագայի սպառնալիքներից եվ դավադրություններից, եթե նրանցից ամեն մեկն իր կարգին չընտրի գոյություն ունեցող խնդիրների ու հակամարտությունների խաղաղ կարգավորման իրավական ճանապարհը:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Մշտական Ձինված Չեզոքություն ¹ ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարության գլխավոր ուղղությունը	էջ 1-4	
Հայաստանի Հանրապետության Օրենքը Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին	էջ 5	
ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիրը	էջ 5	
Կոնվենցիա Չեզոք պետությունների և անձանց իրավունքների և պարտավորությունների մասին ցամաքային պատերազմի դեպքում	էջ 6-7	
Արձանագրությունների կետերը վերցված են եվրոպառլամենտի 1987-ի բանաձևի դրույթներից	էջ 8-10	
Եվրոպառլամենտի 1987 թ. հունիսի 18-ի բանաձևը	էջ 10-11	
Ղարաբաղյան հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միակ ճանապարհը իրավական ուղին է	էջ 12-13	
Յուրաքանչյուր հայ պետք է դառնա այն կաթիլը, որը քար է ծակում	էջ 14	
Ժողովուրդների մշտական դատական ատյանի վճիռը	էջ 15	
Հայկական պատմական հուշարձանների վիճակը Արևմտյան Հայաստանում	էջ 16-17	Սամվել Կարապետյան
Խորհրդային Հայաստանի տարածքային կորուստները Անդրֆեդերացիայի շրջանակներում	էջ 18-21	Աշոտ Սահակյան
Հայ զինվորականներն Օսմանյան բանակում. ծառայություն և ոչնչացում	էջ 22-23	
«Հայերուն քարայրը»՝ Շեղդադիեն	էջ 24	Վերժինե Սվազյան
Հայոց ցեղասպանությունը և Ռուսաստանի արձագանքը	էջ 25	Ստեփան Ստեփանյան
Աշխարհը ճանաչում և դատապարտում է Հայոց ցեղասպանությունը	էջ 26-27	
Պայքարի առաջնորդներից ու գաղափախոսներից...	էջ 28	
Գուրգեն Յանիկյանի երեւանյան հուշերը	էջ 29	
Արցախյան ազատամարտ. «Սևան» ջոկատ	էջ 32	
Թուրքիայի ռազմական օգնությունը Ադրբեջանին	էջ 33	Հայկ Ռեմոյան
Յովհաննես Մարտիկեան. «Կյանքի պայքարը»	էջ 34-35	Սալէհ Ջահր Էլտին
Կարկառ ամրոցը Եփրատի արեւմտյան ափին	էջ 36	Ջենմա Բաղդադյան
Շապիկի լուսանկարը՝ Հարություն Ստեփանյանի		

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու և խմբագիր՝ Տիգրան Փաշաբեզյան

փոխխմբագիր՝ Ջենմա Բաղդադյան էջադրող՝ Վարդուհի Հովհաննիսյան

Այս համարը պատրաստվել է գունավոր պատճենահանման եղանակով:

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Okht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue:
Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90

E-mail:
oukhtaradi@yahoo.com
www.oukhtarati.com

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:



Մշտական Ձինված Չեզոքություն¹

ՀՀ արսափին ֆաղափականության ռազմավարության գլխավոր ուղղությունը

Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների, Սադրիդյան նորացված սկզբունքների ստեղծած մտահոգությունների և (Կոնգո, Կոսովո...) Կովկասին սպառնացող տարածաշրջանային քառակողմ պատերազմի² ու կանխավ ծրագրված քառսի սպառնալիքների առիթով

Ինչպես վարպետ խմբավարն է նվագախմբի աղմուկի մեջ փնտրում-գտնում հարկավոր նոտան, այնպես էլ երկրի ղեկավարությունն է պարտավոր հասարակական-քաղաքական աղմուկի ու բազմաձայնության մեջ փնտրել-գտնել ժամանակի հրամայականով պայմանավորված-թելադրված երկրի զարգացման ճշմարիտ ուղին: Իրատեսական քաղաքականության իրականացման տեսանկյունից, որի մասին վերջին ժամանակներս այդքան շատ է խոսվում, Հայաստանի և հայության համար դա Մշտական Ձինված Չեզոքության ճանապարհի ընտրությունն է:

Շատ փաստեր ու տեղեկություններ են կուտակվել հաստատելու, որ Հայաստանի և հայության (ՀՀ-ի, ԼՂՀ-ի և սփյուռքահայության³) համար Մշտական Ձինված Չեզոքության տարբերակի ընտրությունը ռազմավարական միակ ընտրությունն է, որը, ճշմարիտն ասած, առաջին հերթին «ճանապարհային քարտեզի»⁴, Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների և Սադրիդյան (նորացված և չնորացված) սկզբունքների ստեղծած սպառնալիքները հաղթահարելու պարտադրանքով է պայմանավորված⁵:

Խնդիրը բոլորովին այն չէ, որ Արձանագրությունների վավերացմամբ Հայաստան պետությունը հրաժարվում է Վուդրո Վիլսոնի Իրավարար վճռով հայությանը հատկացվող Հայաստանի **դե յուրե** տարածքներից, այլ այն, որ այդ տարածքներն այդպիսով դառնում են իբր պատկանելիություն չունեցող, հետևաբար և հակամարտության ու վեճի առարկա տարածքներ, որոնք նույն այդ Արձանագրությունները պարտադրող կողմը՝ ԵՄ-Իսրայել-ԱՄՆ ալյանսը, կարող է որպես նվիրատվություն խոստանալ որոշակի շահագրգիռ կողմերի՝ փոխարենը հատուկ «ծառայություններ» պահանջելով նրանցից:

Օրինակ, թուրքերից պահանջելով ՆԱՏՕ-ի բանակի կազմում կռվել ոչ միայն Իրաքում և Քրդական Բանվորական Կուսակցության⁶, այլև Աֆղանստանում «Ալ Բաիդայի զինյալների դեմ» և կամ քրդերից պահանջելով կռվել տարածաշրջանում բոլոր ուղղություններով՝ ամենքի դեմ⁷: Հասկանալի է, որ դա առաջին հերթին ծուղակ է քրդերի համար, բայց որը չհասկանալու դեպքում, հետևանքները աղետալի կարող են լինել ոչ միայն քրդերի, այլև ասիական տարածաշրջանի բոլոր երկրների ու ժողովուրդների համար՝ Սիրիայից մինչև Աֆղանստան, Պակիստանից մինչև Հնդկաստան ու Չինաստան: Վկա՝ 2008-ի վրաց-օսական պատերազմի դառը փորձը: Ադրբեջանը, պարզապես, չհասցրեց իր բախտը փորձել, նախախնամությունը նրան ևս մեկ հնարավորություն տվեց:

Քննենք այլ փաստեր ու իրողություններ ևս.

- **ժամանակին Հայությունը** (կամա, թե ակամա) մասնակցեց Առաջին և Երկրորդ աշխարհամարտերին: Օտար

երկրների բանակների և ռազմական դաշինքների կազմում հայոց մասնակցությունը այդ երկու պատերազմներին փաստում է, որ անցյալում դրանք հեռանկարային և արդյունավետ չեն եղել՝ ազգային-պետական շահերն հետապնդելու տեսակետից: Նույն այդ պատճառով ներկայի նմանատիպ ծրագրերն ու (կամա, թե ակամա) մասնակցությունը կրկին հեռանկարային և արդյունավետ չեն կարող լինել Հայաստանի ու սփյուռքահայության համար: Ուստի, Հայաստանն ու հայությունը, գլոբալ, թե լոկալ նոր առնակատումների, հակամարտությունների և պատերազմների դեպքում, պարտադրված է որդեգրել Ձինված⁸ չեզոքության մարտավարություն:

- **1918-1921 թթ. ռազմաքաղաքական փորձն** արդեն իսկ բավարար է հասկանալու ներկայիս ռազմաքաղաքական և քաղաքակրթական վտանգները և դրանց մեջ Ռուսաստանի նետորոցկիստական քաղաքական դիրքորոշման կրկնությունը⁹: Դրանք լուրջ պատճառներ են առանձին հույսեր չկապելու համար ՀԱՊԿ անվտանգության համակարգի հուսալիության հետ: ՀԱՊԿ արագ արծազանքման ուժերը կան նրանցում ներգրավված ռուսական զինված ուժերը, պարզապես, կարող են մի քանի ժամով ուշանալ, չասելու համար՝ կարող են մի քանի օրով ուշանալ, և դրանով հայերին չեն զարմացնի. վերջին 120 տարիների ռազմաքաղաքական իրադարձությունների Հայոց պատմությունը հենց միայն այդպիսի փաստերով ու դրվագներով է գերբեմնված: Վերջին անգամ ուշացան Սունգայիթում մի քանի ժամով, Բաքվում՝ մի քանի օրով: Եվ միգուցե, իրատեսական քաղաքականության կողմնակիցները, ժողովրդին անտեղի ու վտանգավոր զիջումներ առաջարկելու փոխարեն, ստեղծված իրավիճակից դուրս գալու իրապես հուսալի ելք որոնեն ու գտնեն, որն այս դեպքում կարող է լինել Մշտական Ձինված Չեզոքության այլընտրանքը: **«Ցամաքային պատերազմի դեպքում չեզոք երկրների և անձանց իրավունքների և պարտավորությունների մասին»** Կոնվենցիայի առաջին հոդվածում ասված է. **«Չեզոք երկրների տարածքն անձեռնմխելի է»:** Конвенция “О правах и обязанностях нейтральных держав и лиц в случае сухопутной войны”, (Гаага, 18 октября 1907 года), **Статья 1. “Территория нейтральных держав неприкосновенна”.**

- **Սրբափեցնող** նշանակություն ունի վարչապետ Երդողանի Թուրքիայի հայերին հալածելու և վտարելու հայտարարությունը: Երիտթուրքերն էլ այդպես սկսեցին մարդկության դեմ հանցագործությունների շարքը՝ սկզբում իրականացնելով 1909-ի Ադանայի հայերի կոտորածը: Նույն ձեռագրով Ադրբեջանի ղեկավարները 1988-1990 թթ. ձեռնարկեցին Ադրբեջանի 500 հազար հայ քաղաքացիների հալածանքները, կոտորածն ու բռնազաղթը՝ հետագայում լայնածավալ ռազմական ագրեսիա ձեռնարկելով ԼՂՀ-ի և ՀՀ-ի



Առաջին և Երկրորդ աշխարհամարտեր



դեմ... Պետք է հիշել նաև առ այսօր գործող գործաչույան թելադրանքը, ըստ որի, հաղթողներ ու պարտվողներ իբր չպետք է լինեն, չասելով, որ պետք է հաղթի երրորդ՝ պատերազմը ծրագրող և հրահրող կողմը:

- **Եվրոմիության** մահմեդականացմանը զուգահեռ ընթացում է ՆԱՏՕ-ի շարքային զորակազմի մահմեդականացումը, որը նույնպես լավատեսություն չի ներշնչում: Ըստ այդմ՝ **Առաջին**՝ Կոստվոն վերածվում է ՆԱՏՕ-ի եվրոպական ռազմաբազայի, որի բնակչությունը մի կողմից համալրելու է ՆԱՏՕ-ի զորակազմը, քանի որ աշխատանք և ապրուստի միջոցներ չունի, մյուս կողմից՝ ապահովելու է ռազմակայան-պետության ենթակառուցվածքների կենսագործունեությունը:

Երկրորդ՝ վերջերս Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը Կոնգոյում էր, իր հետ էին նաև թուրք գործարարներ: ՆԱՏՕ-ի աֆրիկյան ռազմաբազան տեղակայվելու է Կոնգոյում, որի զորակազմը համալրելու են ալբանացիները, թուրքերը, քրդերը, իսկ թուրք գործարարները ապահովելու են Աֆրիկա մայրցամաքի ռազմական պետության ենթակառուցվածքների անխափան աշխատանքը: Կոստվոյում ՆԱՏՕ-ի ռազմաբազայի խնդիրները, իրենց կարծիքով, իբր կարգավորել են: Կոնգոյում ավարտական փուլին է: Առջևում Կովկասն է, դեռևս՝ նախապատրաստման վիճակում:

Ռալֆ Պիտերսի «Միջին Արևելքի նոր քարտեզը ըստ արյունակցական կապերի և հավատի մասնությունների» հոդվածում, մասնավորապես, ասված է. «Իսկ բոլոր նրանց, ովքեր մերժում են «պատկերացնել աներևակայելին»՝ հայտարարելով, թե սահմանները վերջնական են և անփոփոխ, արժե հիշեցնել, որ սահմանները երբեք էլ ստատիկ, կայուն չեն եղել: Դարերի ընթացքում փոխվել են և հիմա էլ են փոխվում (Կոնգոյից մինչև Կոստվո և Կովկաս)»: Մեկ այլ տեղում հոդվածագիրը շարունակում է զարգացնել այդ միտքը. «Մինչ այդ մեր համազգեստ հագած տղամարդիկ և կանայք շարունակելու են պայքարն ընդդեմ ահաբեկչության և հանուն անվտանգության ու ժողովրդավարության: Ներկա պարտադրված միությունների (Անկարա և Կարաչի) առկայությունն անգամ բերրի իմը և կրոնական ծայրահեղությունների և ահաբեկչական խմբավորումների կազմավորման համար»: (Տես, «Ազգ», 25.08.2006: Տես, «Ուխտ Արարատի», թիվ 3 (14), 2007 թ., էջ 29-33)

- **Չետաքրքրական են** արևմուտքի քաղաքական գործիչների, եվրոկոմիսարների և ՆԱՏՕ-ի ղեկավարության հայտարարություններն այն մասին, որ իրենք պաշտպանում են Ադրբեյջանի, Վրաստանի տարածքային ամբողջականությունը: Դրանք մի կողմից ցույց են տալիս իրերի դրությունը նշյալ ուղղություններով, մյուս կողմից՝ հաստատում, որ Թուրքիան, այնուհանդերձ, մասնատվելու է: Բայց մեծ, թե փոքր կայսրությունների փլուզումը ցավագին գործընթաց է, ոչ միայն կայսրության, այլև շատ այլ երկրների ու ժողովուրդների համար, ինչպես ցավագին էր Օսմանյան կայսրության փլուզումը, ԽՍՀՄ-ի ինքնափլուզումը:

- **Մեկ այլ մտահոգության առիթ է** տարածքներ ու պետություններ բռնազավթելու Պենտագոնի զինվորական մասնագետների առաջարկած նոր ծրագիրը, ըստ որի՝ կազմավորվելու են նոր, դյուրաշարժ զորաբանակներ և քաղաքական ղեկավարություն՝ ժողովրդավարություն հաստատելու համար ոչ ժողովրդավարական երկրներում: Դա նշանակում է, որ կանոնավոր բանակները կռվելու են անգն բնակչության դեմ, որովհետև թիրախ ընտրված

երկրների Ձինուժն ու բանակները նախապես զինաթափվելու ու զորացրվելու են, և այդ երկրները չեն ունենալու քաղաքական ղեկավարություն:

Երկրների բանակները զինաթափելու իմաստով հետաքրքրական է նայել ՄԱԿ-ի 3ազգայնակի հռչակագիրը, որի II գլխի, 9-րդ հոդվածի 4-րդ կետը պարունակում է զինաթափման մասին վավերագրերի կիրառման պարտադրանք, իսկ 11-րդ կետում ասված է. «**Համատեղ գործողություններ իրականացնել դադարեցնելու համար փոքր զինատեսակների և թեթև զենքերի անօրինական փոխադրումները, հատկապես առավել թափանցիկ դարձնելով զենքերի փոխադրումները և օժանդակելով տարածաշրջանային զինաթափման միջոցառումներին...**»:

Այսինքն, տարածաշրջանային նոր տիպի պետություններում, որպիսին արդեն Եվրոմիությունն է, ինչպիսին պետք է լինի Աֆրիկան, իսկ ներկայիս՝ հրատապ իրականացման դրված Կովկասյան պետությունը, մասնակից բոլոր երկրները, կամավոր կերպով և օտարերկրյա բանակների միջոցով, պետք է զինաթափեն սեփական բանակները: Դրան համապատասխանող դրույթը կանխավ ներառված է Միջազգային պայմանագրերի մասին 33 օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետում (22.02.2007 թ.), ինչը ժողովրդին զրկելու է պաշտպանության և ինքնապաշտպանության իրավունքից: Ակնհայտ է, որ սպառնալից իրավիճակներում հայությունը (ինչպես 1988-1990 թթ. կանխավ զինաթափված 33-ի ու ԼՂՀ-ի հայությունը) ստիպված է լինելու աշխարհագրային ուժերով պաշտպանել իրեն ու իր երկիրը: Ահա դեպքերի հենց այդ տեսակի զարգացում թույլ չտալու նկատառումով է, որ Հայաստան-Թուրքիա Արձանագրություններում նույնպես ներառված է սույն հռչակագրի 9-րդ հոդվածի 11-րդ կետի պահանջը. «**վերահաստատելով իրենց պատրաստակամությունը՝ ակտիվորեն սատարել միջազգային հանրության գործողություններին՝ ընդդեմ տարածաշրջանում և աշխարհում անվտանգության և կայունության դեմ**

Առաջին և երկրորդ աշխարհամարտեր



առկա սպառնալիքների, ինչպիսիք են՝ ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցագործությունները, թմրանյութերի և զենքի ապօրինի շրջանառությունը»՝ որպես Հայաստան-Թուրքիա երկկողմ հանձնառություն:

- **Ողջ թափով** գործողության մեջ է Հայոց ցեղասպանության դատապարտման¹⁰ (ոչ թե ճանաչման) գործընթացի սկզբնավորումը խափանելու, Հայկական հարցում ՄԱԿ-ի ցեղասպանության հանցագործության պատժի մասին Կոնվենցիան շրջանցելու, ասիական տարածաշրջանում կուտակված խնդիրներին իրավական լուծումներ տալու փոխարեն քաղաքական կամային լուծումներ առաջարկելու գերտերությունների քաղաքական ձեռագիրը:

ՄԱԿ-ի ցեղասպանության հանցագործության պատժի և պատերազմի հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին Կոնվենցիաների գործողությունները դադարեցնելու, հին և նոր ցեղասպանություններն անպատիժ թողնելու, նորերին ճանապարհ հարթելու հարցերին է միտված Միջազգային քրեական դատարանի Հռոմի Ստատուտի կանոնադրական գործողությունը: Ճիշտ է, Ստատուտի զենցիղին վերաբերող 5-րդ և 6-րդ հոդվածներում ներառվել են ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի բոլոր դրույթները, սակայն, Ստատուտի արդեն 11-րդ հոդվածում գրված է. «**Դատարանը իրավասու է միայն սույն Ստատուտի ընդունման թվականի ուժի մեջ մտնելուց հետո իրականացված հանցագործու-**



թյունների նկատմամբ: Այսինքն՝ մինչ Ստատուտի ընդունման թվականը կատարված հանցագործությունները դատարանը չի քննում, հակառակ այն բանի, որ մարդկության դեմ իրականացված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամն է չի կիրառվում:

Ստացվում է, որ Ստատուտի միջոցով փորձ է արվելու աննկատ շրջանցել 1948 թ. և 1968 թ. Կոնվենցիաները և անպատիժ թողնել Ստատուտի ընդունման թվականից առաջ կատարված հանցագործությունները, իսկ այն երկրները, որոնք կմիանան Ստատուտին շատ ավելի ուշ, նրանք կարող են իրականացնել ինչպես ցեղասպանություն, այնպես էլ պատերազմական հանցագործություններ, քանի որ պատժի ենթակա կլինեն միայն Ստատուտին միանալուց հետո կատարված հանցագործությունների համար: Այսինքն, վերջիններիս համար վաղեմության ժամկետը չի գործի:

Միջազգային քրեական դատարանի Հռոմի Ստատուտը ընդունվել է 1998-ի հուլիսի 17-ին և դրանով, փաստորեն, ստեղծվել է համաշխարհային պետության դատական ամբողջական համակարգ, որին 2004-ի դրությամբ մասնակից են դարձել 60 պետություն (ըստ երևույթին, դրանք Կոսովոյի անկախությունը ճանաչած 60 պետություններն են), ինչը նշանակում է, որ դա արդեն գործող փաստաթուղթ է՝ համաձայն հռչակագրի 126-րդ հոդվածի:

Статья 126. Вступление в силу.

1. Настоящий Статут вступает в силу в первый день месяца, следующего после 60-го дня после сдачи на хранение Генеральному секретарю Организации Объединенных Наций 60-й ратификационной грамоты или документа о принятии, утверждении или присоединении.

2. Для каждого государства, которое ратифицирует, принимает, утверждает Статут или присоединяется к нему после сдачи на хранение 60-й ратификационной грамоты или документа о принятии, утверждении или присоединении. Статут вступает в силу в первый день месяца, следующего после 60-го дня после сдачи таким государством своей ратификационной грамоты или документа о принятии, утверждении или присоединении.

- **Փաստերը շրջանցելու կամ նենգափոխելու** արևմտյան քաղաքական շրջանակների ներկայացուցիչների գործելակերպի վերջին օրինակը Շվեդիայի խորհրդարանի Քրիստոնեա-դեմոկրատական սոցիալիստական կուսակցության պատգամավոր Պիտեր Վեյդրուդի հայտարարությունն է այն մասին, թե իբր ՄԱԿ-ի Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին Կոնվենցիան հետադարձ ուժ չունի և հեռանկարային չէ Հայոց ցեղասպանությունը դատապարտելու հարցով ընթանալ իրավական ճանապարհով: Իբր պետք է շարունակել ընթանալ քաղաքական ճանաչումների ճանապարհով: Սա **առաջին** հերթին թելադրանք և հորդոր է ՀՀ իշխանություններին, թե ի՞նչ անել և ինչպե՞ս անել: **Երկրորդ**՝ ԵՄ-Իսրայել-ԱՄՆ ալյանսի համար ժամանակ շահելու քայլ է, որպեսզի վերջինս, ի վերջո, հասնի Թուրքիայի և Հայաստանի կողմից Արձանագրությունների վավերացմանը, ինչի միջոցով մի նոր ծանր հարված հասցնի Միջին Արևելքում գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման 120-ամյա ջանքերին՝ շարունակելով հակամարտությունների պատանդի կարգավիճակում պահել տարածաշրջանի բոլոր պետություններին ու ժողովուրդներին: Եվ **երրորդ**՝ դա հարված է Հայկական հարցի արդարացի լուծման, ավելի քան 100-ամյա ջանքերին: Մինչև հիմա՝ 95 տարում, Հայոց ցեղասպանությունը ճանաչել են 20 պետություն, ինչը նշանակում է, որ ՄԱԿ-ի անդամ մնացած երկրներից Հայոց ցեղասպանության ճանաչման հասնելու համար հայությունից կամ այդ հարցում մասնագիտացած կազմակերպություններից կպահանջվի ևս..., բայց եկեք չհաշվենք: Նկատենք միայն, որ դրանից հետո էլ խնդիրը չի լուծվում, որովհետև դեռ հայտնի չէ՝

Թուրքիան ճանաչելու է այն և կամ առաջիկա տարիներին Թուրքիա պետություն լինելու է, թե՞ ոչ...:

Շվեդ պատգամավորի հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, որովհետև եթե ՄԱԿ-ի Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին Կոնվենցիայում 1948 թվականին վաղեմության ժամկետի մասին հատուկ չի նշված, ապա հետագայում, այդ հարցով շահարկումների բոլոր ճանապարհները փակելու նպատակով, 1968 թվականից գործում է ՄԱԿ-ի Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին Կոնվենցիան, որի առաջին հոդվածում ասված է. **«Ոչ մի տեսակի վաղեմության ժամկետ չի կիրառվում հետևյալ հանցագործությունների նկատմամբ... պատերազմական հանցագործությունների... ինչպես նաև ցեղասպանության հանցագործության...»:** Ստորև մեջբերում ենք նաև Կոնվենցիայի ռուսերեն բնօրինակի այդ հատվածը:

Конвенция “О неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества”, 26 ноября 1968г.

Статья 1.

Никакие сроки давности не применяются к следую- щим преступлениям, независимо от времени их совершения:

а) **военные преступления**, как они определяются в Уставе Нюрнбергского международного военного трибунала от 8 августа 1945 года и подтверждаются резолюциями 3 (I) от 13 февраля 1946 года и 95 (I) от 11 декабря 1946 года Генеральной Ассамблеи Организации Объединенных Наций, а также, в частности, «серьезные нарушения», перечисленные в Женевских конвенциях о защите жертв войны от 12 августа 1949 года,

б) **преступления против человечества**, независимо от того, были ли они совершены во время войны или в мирное время, как они определяются в Уставе Нюрнбергского международного военного трибунала от 8 августа 1945 года и подтверждаются в резолюциях 3 (I) от 13 февраля 1946 года и 95 (I) от 11 декабря 1946 года Генеральной Ассамблеи Организации Объединенных Наций, изгнание в результате вооруженного нападения или оккупации и бесчеловечные действия, являющиеся следствием политики апартеида, **а также преступление геноцида, определяемое в Конвенции 1948 года о предупреждении преступления геноцида и наказании за него**, даже если эти действия не представляют собой нарушения внутреннего законодательства той страны, в которой они были совершены.

- **Կոսովոն** ամեն գնով Սերբիայից անջատելու և անկախացնելու Մարտի Ատիսաարիի ծրագիրն¹¹ իրականացվեց որպես մարդկության դեմ ուղղված միջազգային մի նոր հանցագործություն՝ ընդդեմ ՄԱԿ-ի հնարավոր ու անհնար բոլոր նորմերի ու սկզբունքների, Կոնվենցիաների ու Հռչակագրերի, այդ թվում, Մարդու Իրավունքների Համընդհանուր Հռչակագրի և Բնիկ Ժողովուրդների իրավունքների մասին Հռչակագրի պահանջների: Կոսովոն, պատմական, մշակութային և հոգևոր, բարոյական և իրավական բոլոր նորմերին ու սկզբունքներին հակառակ, արևմուտքը անջատեց Սերբիայից, այնտեղ եվրոպական և նատուալ գինու- ժի նոր ռազմական պետություն ստեղծելու համար: Կոսովոյի անկախությունը ճանաչել են արևմտյան-նատուական ազդեցության և ենթակայության տակ գտնվող 60 պետու- թյուններ: Կոսովոյի հարցով Սերբիայի բողոքը Հաագայի միջազգային դատարանում է: Դատարանը դժվարին կացու- թյան մեջ է: Եթե արդարացնի Կոսովոյի անկախության փաստը, ապա աշխարհում նոր թափ կհաղորդի սպանելու, հափշտակելու, կողոպտելու և էթնիկ էքսպանսիա իրակա-



նացնելու միջոցով այլոց հայրենիքներն ու քաղաքակրթական տարածքները զավթելու և գողունը վայելելու մարդկության դեմ ուղղված հանցագործություններին: Ի՞նչ է պատասխանելու Սերբիայի ներկայացրած բողոքի հայցին Հաագայի միջազգային դատարանը, ասելու է, որ Կոստվոյի անկախությունը ճանաչած 60 պետություններ խախտել են միջազգային իրավունքի ու բարոյականության բոլոր նորմերն ու սկզբունքները...: Համբերենք և կտեսնենք:

- **Սիգրացիան**, փախստականները և զբոսաշրջությունը որպես երկրների ազգագրական պատկերը փոխելու և ներդրված անջատողական տարրի միջոցով տվյալ երկիրը մասնատելու միջազգային հանցագործ քաղաքականություն: Դրա զոհերն են՝ Սերբիան՝ հանձին Կոստվոյի, առաջիկայում լինելու են Գերմանիան, Ֆրանսիան, Շվեդիան, Նիդերլանդները... նաև ՀՀ-ն՝ համաձայն Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների, եթե իհարկե դրանք վավերացվեն: Ուշադրություն դարձնենք նաև արտադրություն չունեցող մեր երկրի էկոնոմիկայի նախարարության անվանմանը. այն կոչվում է ՀՀ էկոնոմիկայի և տուրիզմի նախարարություն: Ամեն ինչ հենց այդպես էլ սկսվում է: Գերմանիայում թուրքերը, որպես էժան աշխատուժ, հայտնվեցին 1960-ական թվականներին, այժմ այնտեղ նրանց թիվը 5 միլիոն է: Վերջերս վարչապետ Էրդողանը վարչապետ Սերկեյին առաջարկել է Գերմանիայում թուրքերենի ուսուցմամբ դպրոցներ և գիմնազիաներ բացել: Անգելա Մերկելը կարծես մերժել է առաջարկը: Բայց դա առաջին փորձն է: Հետագայում, անշուշտ, կլինեն այլ փորձեր և միջազգային ճնշումներ նույնպես, իսկ ավելի ուշ՝ նաև մշակութային ինքնավարության առաջարկներ... մինչև, որ կգա նոր Կոստվոյի նախադեպի ի հայտ գալու ժամանակը Գերմանիայում: (ԲՏԿ, Главные новости, 23.03.2010)

Այսպես, զգոնության կոչող փաստերն ու տվյալները ավելի քան շատ են:

Այն ամենը, ինչի մասին խոսում ենք, շատ հաճախ և ավելի շուտ՝ հետևանքներ են, քան պարտադրող իրողություններ: Հարկավոր է մտածել դրանք ծնող պատճառները վերացնելու մասին: Եթե մենք, որ ցեղասպանություն վերապրած և նոր ցեղասպանական գործողությունների վտանգին ենթակա ժողովուրդ ենք, չձեռնարկենք այդ հետևանքները ծնող պատճառների չեզոքացման գործը, ուրիշը մեր փոխարեն դա չի անելու: Եթե մենք չպաշտպանենք մեզ և մեր անժամանցելի իրավունքները, ուրիշը դա չի անելու: Եվ եթե մենք մեր վճռական մի նախաձեռնությամբ չվերածենք մեր հայրենի տարածքները այլևս մշտական անձեռնմխելի տարածքների, ուրիշը դա չի անելու: Հենց այդպես է, որ կա, ամեն բան մեր ձեռքում է, ավելի ճիշտ, հենց հիմա, մեր քաղաքական վերնախավի ձեռքում, բայց եթե նա թերամա իր պարտքը կատարել, կգա ժողովրդի գործի անցնելու ժամանակը:

«Ուխտ Արարատի», ՀԱՀԳԲ-ի ազատամարտիկների և նախկին քաղաքատարկյալների հասարակական նախաձեռնություն

2 ապրիլի 2010 թ.

Ծանոթագրություն

1. Միջազգային իրավական դաշտում պետության և համայնքի չեզոքությունը կարգավորվում է **«Ցամաքային պատերազմի դեպքում չեզոք երկրների և անձանց իրավունքների և պարտավորությունների մասին»** Կոնվենցիայով, Հաագա, 18 հոկտեմբերի 1907թ.:

2. Տես, «www.armor.am» կայք, Ս. Կանսարական, **«Ի՞նչ են Հայաստան-Թուրքիա Արձանագրությունները»**: Տես, «Ուխտ Արարատի», թիվ 2 (18), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2009 թ.: Պարբերականի այս թիվն ամբողջովին նվիրված է **Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների** հարցերին:

3. Տես, Ն. Հովհաննիսյան, **«Լիբանանյան ճգնաժամը և**

Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը» (1975-1982 թթ.), Հայաստան, 1982:

4. **«Ճանապարհային քարտեզի»** բովանդակությունը տես, «Ուխտ Արարատի», թիվ 2 (18), 2009 թ., էջ 7:

5. Հիրավի, զարմանահարաշ երևույթ է դիմակայության էֆեկտը. եթե չլինեին Սիդնեյի համալսարանի դասախոս Արմեն Կաքավյանի ՀԱՀԳԲ-ին վերաբերող արտահայտությունները, դժվար թե այդքան խորն ուսումնասիրեինք հայության աշխարհագրային պաշտպանության միջազգային իրավունքի հարցերը և եթե չլինեին Արձանագրությունների ու Մադրիդյան նորացված սկզբունքների ստեղծած սպառնալիքները, դժվար թե միջազգային իրավունքի էջերում հասնեինք Մշտական Զինված Չեզոքության սկզբունքին և փակուղուց դուրս գալու նրա ընձեռած իրատեսական հնարավորություններին Հայաստանի ու հայության համար...:

6. 2009-ի ապրիլի 7-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովում ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբաման հայտարարեց, որ այսուհետ թուրքերը պայքարելու են ոչ միայն Քրդական Բանվորական Կուսակցության, այլև Ալ Քաիդայի զինյալների դեմ: Թուրքերը Ալ Քաիդայի զինյալների դեմ կռվելու համար առաջարկ կատանան համալրելու ՆԱՏՕ-ի զորաբանակները, որը և կնշանակի, թե Եվրոպայի մահմեդականացմանը զուգահեռ կսկսվի ՆԱՏՕ-ի բանակի շարքային զորակազմի մահմեդականացումը՝ Կոստվոյի ալբանացի, Եվրոպայի և Թուրքիայի ու այլ վայրերի թուրք և քուրդ զինյալներով:

7. Այս տարբերակը կառաջարկվի քրդերին՝ պայքարի մեջ մտնելու մի քանի ճակատներով՝ սիրիական, իրաք-իրանյան, թուրքական և կովկասյան ճակատներում՝ վաստակելու համար քրդական անկախ պետություն ունենալու իրավունքը: Արձանագրությունների վավերացումից հետո նրանց ևս կխոստանան Արևմտյան Հայաստանը և հայկական բռնազավթված այլ տարածքներ, իսկ թե իրականում ինչ կանեն՝ անշնորհակալ աշխատանք է գուշակելը, մանավանդ, որ մեր իրավունքներից ոչինչ չենք զիջելու: Ում ասես կխոստանան, բայց կարծում ենք նաև, որ բոլորը գիտեն եվրոպական խոստումների արժեքը: Ով դեռ չգիտի, կարող է Ֆրիտյոֆ Նանսեն կարդալ:

8. Տես, **«Հայ ժողովրդի ինքնապաշտպանության բնական, նաև միջազգային իրավունքի մասին»** հոդվածը, «Ուխտ Արարատի» պարբերական, թիվ 1 (17), մարտ-ապրիլ, 2009 թ., էջ 22: Նկատենք, որ այսօր պատերազմելու ձևերը փոխված են, բանակները պատերազմում են անգեմ բնակչության դեմ, այդպես է Իրաքում, այդպես է Աֆղանստանում: ՀՀ-ն ծրագրում են զինաթափել, ինչը հաստատում է, թե հայության պաշտպանությունը աշխարհագրային պաշտպանության ձևն է:

9. Տես, **Լև Տրոցկի, «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում»**: Հոդվածը լույս է տեսել Ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատի «Ժիզն նացիոնալնուստեյ» թերթում, 4-ը մարտի 1921 թ., Մոսկվայում, Ա. Սկաչկո ստորագրությամբ: Տրոցկին 1918-1924 թթ. Ռազմական և ծովային ժողովրդական կոմիսար էր: Ա. Սկաչկոն այդ գերատեսչության կադրերից էր, ում անուճով էլ Տրոցկին ստորագրել է հոդվածը: Տես, «Ուխտ Արարատի» պարբերական, թիվ 3 (14), հոկտեմբեր-նոյեմբեր, 2007 թ., էջ 18-22:

10. Տես, **«Հայոց ցեղասպանության ճանաչման ժամանակը և Հայոց ցեղասպանության դատապարտման ժամանակը»** հոդվածը, 10 մարտի 2010 թ., www.oukhtararati.com կայքում:

11. Տես, Խմբագրական «Ուխտ Արարատի», թիվ 2 (16), նոյեմբեր-դեկտեմբեր, 2008 թ., էջ 5:





Հայաստանի Հանրապետության Օրենքը Հայաստանի Հանրապետության միջազգային դայմանագրերի մասին

Ընդունվել է 22.02.2007-ին

ՔԼՈՒԽ 2

Հայաստանի Հանրապետության Միջազգային պայմանագրի սուբյեկտները եվ այդ պայմանագրով կարգավորվող հարաբերությունները

Հոդված 7. Միջազգային պայմանագրով կարգավորվող հարաբերությունները

1) Հայաստանի Հանրապետության միջպետական պայմանագրով կարող են կարգավորվել ցանկացած հարաբերություններ, որոնք համապետական նշանակություն ունեն և այդ իմաստով կարող են առնչվել ինչպես կառավարության, մեկ կամ ավելի գերատեսչության, այնպես էլ պետական այլ մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործառնությունների հետ:

2) Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթից, Հայաստանի Հանրապետության միջպետական պայմանագրով են կարգավորվում՝

1) այլ պետությունների հետ քաղաքական կամ ռազմական, բարեկամության և համագործակցության, պաշտպանության, ուժի կիրառումից կամ ուժի կիրառման սպառնալիքից փոխադարձաբար հրաժարվելու, խաղաղության կամ հաշտության, պետական սահմանի փոփոխություն կատարելու, միջպետական կազմակերպություններ ստեղծելու կամ դրանց անդամակցելու, հյուպատոսական հարաբերություններ հաստատելու, Հայաստանի Հանրապետության զինված ուժերը օտարերկրյա պետություններ խաղաղապահ կամ այլ նպատակներով ուղարկելու, Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպություններ

րի ռազմական բազաներ ստեղծելու կամ օտարերկրյա պետությունների կամ միջազգային կազմակերպությունների զինված ուժեր Հայաստանի Հանրապետության տարածքում ընդունելու, տեղակայելու, միջազգային վեճեր լուծելու, **զինաթափման**, ռազմական պարտավորություններ ստանձնելու, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության հարցեր շոշափող այլ հարաբերությունները,

2) քաղաքացիական, ընտանեկան, քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների հաստատման, ինչպես նաև հանձնման հետ կապված հարաբերությունները,

3) Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող մշակութային արժեքների և օբյեկտների օտարման հետ կապված հարաբերությունները:

Ծանոթագրություն

Չինաթափման դրույթը պայմանագրում գետեղված է Միջազգային Պայմանագրերի Մասին ՀՀ Օրենքով ՀՀ ազգային Բանակը **զինաթափելու**, Բանակը **զորացրելու** և ՀՀ Ձիճուճը **լուծարելու** նպատակով: Այդ դրույթը համապատասխանում է Հազարամյակի մարտահրավեր հռչակագրի և Հայաստան - Թուրքիա Արձանագրությունների այն դրույթներին, որոնք նշված են «Սշտական Ձինված Չեզոքություն, ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարության գլխավոր ուղղությունը» վերլուծական հոդվածում:

ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիրը

**Декларация тысячелетия
Организации Объединенных Наций
Утверждена резолюцией 55/2 Генеральной
Ассамблеи от 8 сентября 2000 года.**

Генеральная Ассамблея,
принимает нижеследующую
Декларацию:

**Декларация тысячелетия
Организации Объединенных Наций
II. Мир, безопасность и
разоружение**

8. Мы приложим все усилия к тому, чтобы освободить наши народы от бедствий войн, будь то внутри государств или между государствами, войн, которые за последнее десятилетие унесли более 5 миллионов жизней. Мы будем также добиваться устранения угроз, создаваемых оружием массового уничтожения.

9. Поэтому мы преисполнены решимости:

- укреплять уважение к принципу верховенства права, причем как в международных, так и во внутренних делах, и в частности обеспечивать выполнение государствами-членами решений Международного Суда, во исполнение Устава Организации Объединенных Наций, по любым делам, сторонами которых они являются;

...

- обеспечить соблюдение государствами-участниками договоров в таких областях, как контроль над вооружениями и **разоружение**, и норм международного гуманитарного права и права в области прав человека и **призвать все государства рассмотреть возможность**

подписания и ратификации Римского Статута Международного уголовного суда;

- предпринять согласованные действия для прекращения незаконного оборота стрелкового оружия и легких вооружений, особенно посредством обеспечения большей транспарентности в области передачи оружия и **поддержки региональных мер по**

разоружению, принимая во внимание все рекомендации предстоящей конференции Организации Объединенных Наций по проблеме незаконной торговли стрелковым оружием и легкими вооружениями;

- обратиться ко всем государствам с призывом рассмотреть возможность присоединения к Конвенции о запрещении применения, накопления запасов, производства и передачи противопехотных мин и об их уничтожении, а также измененному Протоколу о минах к Конвенции о конкретных видах обычного оружия.



Կ Ո Մ Վ Ե Ն Ց Ի Ա Չեզոք դեմոկրատիայի և անձանց իրավունքների և դատարարությունների մասին ցամաքային դատերազմի դեղին



Հասագ, 18 հոկտեմբերի 1907 թ.

(Սկիզբը տես, Միջազգային ընդհարումների խաղաղ կարգավորման մասին կոնվենցիայում)

Որպեսզի առավել ճշգրիտ կանոնակարգվեն չեզոք պետությունների իրավունքներն ու պարտավորությունները ցամաքային պատերազմի դեպքում և որոշվեն պատերազմողների դիրքերը, որոնք ապաստան են գտել չեզոք տարածքում,

Չգտելով նույն չափով բնորոշել, թե ինչ է Չեզոքությունը, սպասման մեջ, երբ հնարավոր կլինի լիարժեք ծավալով ճշգրտել պատերազմողների հետ հարաբերություններում մասնավոր անձանց չեզոք դրությունը,

Որոշեցին առ այդ հաստատել կոնվենցիա և ըստ այդմ նշանակեցին իրենց լիազորվածներին (լիազորվածների ցանկը), որոնք և, որպես ճանաչված անհրաժեշտ և օրինական ձևով կազմված իրենց իրավասություններով,

Համաձայնության եկան ներքոշարադրվածում:

ԳԼՈՒԽ Ի.

Չեզոք պետությունների իրավունքների և պարտավորությունների մասին

Հոդված 1. Չեզոք պետության տարածքն անձեռնմխելի է:

Հոդված 2. Պատերազմող կողմերին արգելվում է չեզոք պետության տարածքով զորք կամ զուսակ (փոխադրամիջոցներ՝ տրանսպորտ) տեղափոխել ռազմական կամ սննդամթերքի բեռով:

Հոդված 3. Պատերազմող կողմերին հավասարապես արգելվում է.

ա) Չեզոք տարածքում տեղադրել անլար հեռակապի կայաններ կամ այլ ամեն տեսակի սարքեր, նախատեսված կռվող ուժերի հաղորդակցությանը ծառայող միջոցների համար, թե ծովում և թե ցամաքում:

բ) Օգտվել նմանատիպ սարքավորումներից, կառույցներից, որոնք տեղադրված են եղել չեզոք պետության տարածքում պատերազմից առաջ, բացառապես ռազմական նպատակներով և չեն բացվել ընդհանուր օգտագործման համար:

Հոդված 4. Չեզոք պետության տարածքում պատերազմող կողմերի համար չեն կարող ձևավորվել զինջուկատներ և չեն կարող բացվել զինվորական հավաքագրման կետեր:

Հոդված 5. Չեզոք պետությունն իր տարածքում չպետք է թույլատրի որևէ գործողություն, նախատեսված 2 - 4 հոդվածներով: Նա պարտավոր է պատժել չեզոքությանը հակառակորդ ամեն գործողություն, սոսկ այն դեպքերում, երբ այդ գործողությունը իրականացվում է իր սեփական տարածքում:

Հոդված 6. Չեզոք պետության պատասխանատվություն չի առաջանում այն բանի հետևանքում, որ պատերազմողներից որևէ մեկին ծառայության մտնելու համար մասնավոր

անձիք անցնում են սահմանը:

Հոդված 7. Չեզոք պետությունը պարտավոր չէ խոչընդոտել պատերազմող պետություններից որևիցե մեկի հաշվին զենքի, զինամթերքի և, ընդհանրապես, բոլոր այն ամենի արտահանմանը կամ տրանզիտին, որոնք կարող են պիտանի լինել բանակին կամ նավատորմին:

Հոդված 8. Չեզոք պետությունը պարտավոր չէ արգելել, կամ սահմանափակել՝ հօգուտ պատերազմող կողմերի, իր կամ էլ մասնավոր ընկերության կամ անձանց սեփականություն հանդիսացող հեռագրական և հեռախոսային լարերից, նույնաբար՝ անլար հեռակապի ապարատներից օգտվելը:

Հոդված 9. Հոդվածներ 7 և 8-ում հիշատակված բոլոր միջոցներին վերաբերող բոլոր սահմանափակումները և արգելքները Չեզոք պետության կողմից պատերազմող կողմերի նկատմամբ պետք է իրականացվեն միատեսակ կերպով:

Չեզոք պետությունը պարտավոր է հետևել, որպեսզի նույն պարտավորությունը կատարվի մասնավոր հեռագրական, հեռախոսային, կամ անլար հեռագիր ունեցող սեփականատերերի, մասնավոր ընկերությունների կամ անձանց կողմից:

Հոդված 10. Չեզոք պետության կողմից իր չեզոքության դեմ ուղղված ոտնձգությունը նույնիսկ ուժային միջոցներով հակադարձելու գործողությունը չի կարող դիտվել որպես թշնամական գործողություն:

ԳԼՈՒԽ ԻԻ.

Չեզոք պետությունում պատասպարված պատերազմողների և նրա մոտ բուժման գտնվող վիրավորների մասին

Հոդված 11. Չեզոք պետությունը, որն իր տարածք է ընդունել պատերազմող կողմի բանակին պատկանող զորք, պարտավոր է պատասպարել նրան, պատերազմի վայրից հնարավորինս հեռու տարածքում:

Չեզոք պետությունը կարող է նրանց տեղավորել ճամբարներում, և նույնիսկ կալանավորել ամրոցներում, կամ նման նպատակներին հարմարեցված վայրերում:

Չեզոք պետությունից է կախված վճռել՝ արդյո՞ք կարող են սպաները գտնվել ազատության մեջ, տալով ազնիվ խոսք՝ առանց թույլության չլքելու չեզոք տարածքը:

Հոդված 12. Եթե գոյություն չունի հատուկ պայմանավորվածություն, ապա չեզոք պետությունը իր վրա է վերցնում ապաստան գտածների ապահովումը սննդով և հագուստով, ինչպես նաև ցուցաբերում է օգնություն մարդասիրական պահանջներին համապատասխան:

Ապաստան գտածների ծախսերը հատուցվում են հաշտության պայմանագիր կնքելուց հետո:

Հոդված 13. Չեզոք պետությունը, ընդունելով փախած ռազմագերիներին, նրանց թողնում է ազատության մեջ:

Եթե չեզոք պետությունը թույլատրում է նրանց բնակությունն իր տարածքում, ապա կարող է որոշել նաև բնակության վայրը:

Նույն կարգադրությունը կարող է կիրառվել այն ռազմագերիների նկատմամբ, որոնք բերվել են չեզոք պետության տարածքում ապաստան գտած զորքերի կողմից:

Հոդված 14. Չեզոք պետությունը կարող է թույլատրել պատերազմող կողմերի վիրավորների և հիվանդների տեղափոխումն իր տարածքով, պայմանով, որ տեղափոխող գնացքները չտեղափոխեն ոչ զորք և ոչ էլ զինամթերք: Նման դեպքում չեզոք պետությունը պարտավոր է անհրաժեշտ նախազուշական և վերահսկողական միջոցներ ձեռնարկել:

Նման պայմաններում պատերազմող որևէ մեկի կողմից չեզոք տարածք տեղափոխված հակառակորդի վիրավորներն ու հիվանդները պետք է չեզոք պետության կողմից պահվեն այնպես, որպեսզի սրանք չկարողանան դարձյալ մասնակցել ռազմական գործողություններին:



Նույնափսի պարտականություն է ընկնում չեզոք պետության վրա, մյուս բանակի վիրավորների և հիվանդների վերաբերմամբ, որոնք վստահված են իր խնամքին:

Հոդված 15. Չեզոք տարածքում ապաստանած վիրավորների և հիվանդների նկատմամբ կիրառվում է ժնկյան կոնվենցիան:

ԳԼՈՒԽ III.

Չեզոք անձանց մասին

Հոդված 16. Չեզոք են համարվում պետությունների այն հպատակները, որոնք չեն մասնակցում պատերազմին:

Հոդված 17. Չեզոքը չի կարող վկայակոչել իր չեզոքությունը՝

ա) եթե նա թշնամական գործողություն է կատարել պատերազմողի դեմ:

բ) եթե նա կատարում է գործողություն հոգուտ պատերազմողի, այսինքն, եթե նա կամավորապես ծառայության է մտնում կողմերից մեկի զինված ուժերի շարքերում:

Նման դեպքում պատերազմողի կողմից չեզոքը չպետք է արժանանա ավելի դաժան վերաբերմունքի, ի վնաս որի հրաժարվել է չեզոքությունից, քան այն վերաբերմունքը, որին կենթարկվեր պատերազմող մյուս պետության հպատակը:

Հոդված 18. Չեն կարող որպես պատերազմողներից որևէ մեկի օգտին կատարվող հոդված 17-ի բ. կետով ամրագրված գործողությունները դիտարկվել՝

ա) պատերազմողներից մեկին տրամադրված վարկերը կամ փոխառությունները, եթե դրանք տրամադրողը, կամ փոխառուն չի բնակվում իր կողմից գրավյալ տարածքի վրա, և տրամադրված առարկաները չեն ծագում տվյալ տարածքից:

բ) Ոստիկանության կամ քաղաքացիական վարչության տրամադրած ծառայությունները:

ԳԼՈՒԽ IV.

Երկաթուղու շարժակազմի մասին

Հոդված 19. Չեզոք պետության տարածքում սկիզբ առնող երկաթուղու շարժակազմը, անկախ որևէ պետության, մասնավոր ընկերության կամ անձի պատկանելիությունից, և ճանաչված, որպես այդպիսին, չի կարող ենթարկվել բռնագրավման և օգտագործվել պատերազմողի կողմից, ի բացառյալ այն դեպքերը և այն չափով, թե երբ և ինչպես է պահանջում ծայրահեղ անհրաժեշտությունը: Նա պետք է հնարավոր արագությամբ ետ ուղարկվի իր ծագման երկիրը:

Անհրաժեշտության դեպքում Չեզոք պետությունը կարող է նույն չափով կանգնեցնել և օգտագործել շարժակազմի անհրաժեշտ քանակություն, որը ծագում է պատերազմող պետության տարածքից: Վճարումը կատարվում է երկու կողմից էլ, օգտագործված շարժակազմի, դրա ժամկետի համապատասխան:

ԳԼՈՒԽ V.

Ամփոփիչ դրույթներ

Հոդված 20. Ներկա կոնվենցիայի դրույթները իրագործվում են պայմանավորվող պետությունների միջև և սոսկ այն դեպքում, երբ բոլոր պատերազմող կողմերը մասնակից են Կոնվենցիային:

Հոդված 21. Սույն Կոնվենցիան պետք է ռատիֆիկացվի հնարավորինս կարճ ժամկետում:

Ռատիֆիկացիաները պետք է պահպանության հանձնվեն Հաագայում:

Ռատիֆիկացիայի ի պահպանության առաջին հանձնման մասին կազմվում է արձանագրություն, ստորագրված դրան մասնակցող պետությունների ներկայացուցիչների և Նիդեռլանդների Արտաքին գործոց մինիստրի կողմից:

Ռատիֆիկացիաների ի պահպանության հաջորդ հանձնումները իրագործվում են գրավոր տեղեկացումների միջոցով, ուղղված Նիդեռլանդների կառավարությանը և ուղեկց-

վում են ռատիֆիկացիոն ակտերով:

Ռատիֆիկացիայի ի պահպանության առաջին հանձնման մասին վկայագրված պատճեն հողվածի նախորդ մասում հիշատակված ծանուցման հետ միասին, ռատիֆիկացիայի ակտերի հետ համահավասար, Նիդեռլանդների կառավարության միջնորդությամբ և դիվանագիտական ճանապարհով անմիջապես փոխանցվում է Խաղաղության երկրորդ Համաժողովին հրավիրված պետություններին, և նույն շարքում Կոնվենցիային միացած այլ պետություններին:

Հոդվածի նախորդ հատվածում նշված դեպքերում, հիշյալ կառավարությունը տեղյակ է պահում նրանց նույն ժամանակ և նույն օրը, երբ ստացել է ծանուցումը:

Հոդված 22. Սույն Կոնվենցիան չստորագրած պետություններին հնարավորություն է տրվում միանալ նրան:

Այն պետությունը, որը ցանկանում է միանալ Կոնվենցիային, գրավոր տեղեկացնում է իր մտադրության մասին Նիդեռլանդների կառավարությանը, փոխանցելով նրան իր միանալու ակտը, որը պիտի պահպահվի նշյալ կառավարության արխիվում:

Այդ կառավարությունն անմիջապես փոխանցում է Խաղաղության երկրորդ Համաժողովին հրավիրված և բոլոր մյուս պետություններին վկայագրված ծանուցման պատճեն, դրա հետ միասին կոնվենցիային միանալու ակտը, նշելով օրը, երբ ինքը ստացել է ծանուցումը:

Հոդված 23. Սույն Կոնվենցիան ռատիֆիկացիաների առաջին հանձնման մասնակից պետությունների համար ուժի մեջ կմտնի այդ արձանագրության հանձնումից 60 օր անց:

Այն պետությունների համար, որոնք ավելի ուշ կմիանան Կոնվենցիային, այն ուժի մեջ կմտնի 60 օր անց, երբ Նիդեռլանդների կառավարությունը կստանա ռատիֆիկացիոն ակտը, կամ միանալու մասին ծանուցումը:

Հոդված 24. Այն դեպքում, երբ պայմանավորված կողմերից որևէ մեկը հրաժարվում է սույն Կոնվենցիայից, այդ մասին գրավոր տեղեկացնում է Նիդեռլանդներին կառավարությանը, որն էլ իր հերթին անմիջապես տեղյակ է պահում վկայագրված պատճենի ստացման մասին, նշելով ստացման օրը:

Այդ հրաժարումը կարող է իսկական համարվել սոսկ այն պետության համար, որն այդ մասին ծանուցել է, և միայն մեկ տարի այն բանից հետո, երբ ծանուցումը ստացել է Նիդեռլանդների կառավարությունը:

Հոդված 25. Նիդեռլանդների Արտաքին գործոց նախարարության կողմից կազմված ցանկն իր մեջ կամփոփի ռատիֆիկացիաները ի պահ հանձնելու օրը, համաձայն Հոդված 21-ի 3-րդ և 4-րդ մասերի, նմանապես կոնվենցիային միանալու ծանուցման ստացման օրը (Հոդված 22. մաս 2.) և հրաժարման մասին տեղեկացումը (Հոդված 24. մաս 1.):

Պայմանավորված ամեն պետություն կարող է ծանոթանալ այդ ցանկին և խնդրել տրամադրել իրեն վկայագրերի պատճենները:

Ի հաստատումը սրա, լիազորները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Իրագործված է Հաագայում, հոկտեմբերի տասներին, հազար ինը հարյուր յոթ թվականին, մեկ օրինակից, որը կպահվի Նիդեռլանդների կառավարության արխիվում և որի վկայագրված պատճենները դիվանագիտական ճանապարհով կհանձնվեն այն պետություններին, որոնք հրավիրված են Խաղաղության երկրորդ Համաժողովին:

(ստորագրություններ)

Պաշտոնական ռուսերենից թարգմանությունը մերն է:





ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՏԵՐԸ ՎԵՐՑՎԱԾ ԵՆ ԵՎՐՈՊԱՌԼԱՄԵՆՏԻ 1987-Ի ԲԱՆԱԶԵՎԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՑ

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև 2009-ի հոկտեմբերի 10-ին ստորագրված Արձանագրությունների կետերը վերցված են Եվրոպական պառլամենտի 1987-ի հունիսի 18-ին ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» Բանաձևի դրույթներին:

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրված Արձանագրությունների ի հայտ գալուց ի վեր, որոնք, ի դեպ, սխալմամբ կոչում են հայ - թուրքական արձանագրություններ, և դրանց բովանդակությանը ծանոթանալուց հետո մենք կարծիք հայտնեցինք, որ դրանք ամենևին էլ Հայաստան - Շվեյցարիա - Թուրքիա բանակցությունների հետևանք չեն, այլ՝ ինչ որ այլ վայրում պատրաստված և կողմերին պարտադրված փաստաթղթեր: Չէինք կարծում, թե այդքան արագ կունենանք մեր կարծիքը հաստատող ապացույց: Պարզվեց, որ Արձանագրությունների նախահիմքը դա Եվրոպական պառլամենտի 1987-ին ընդունած «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» Բանաձևն է:

Ինչպես կհամոզվեք հետագայում, «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» Բանաձևը իրականում Եվրոպական մի ծրագիր է, որի նպատակը Հայկական հարցի իրական լուծումը շրջափակելը, խոչընդոտելը, շրջանցելն է...

Արձանագրությունների դրույթները կամ ամբողջովին կրկնում են Եվրոպական պառլամենտի Բանաձևի դրույթները, կամ շատ դեպքերում, ինչպես օրինակ, Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, հետքայլ են կատարում: Այստեղ կներկայացնենք երկու փաստաթղթերի մի շարք կետերի համեմատական վերլուծությունները, իսկ հողվածին կից՝ Բանաձևի և Արձանագրությունների ամբողջական տեքստերը:

Նախ՝ խոսենք փաստաթղթերի պատվիրատուի մասին:

1. Երկու փաստաթղթերի՝ և՛ Բանաձևի, և՛ Արձանագրությունների պատվիրատուն Եվրոպան է, 1987-ին՝ Եվրոպական պառլամենտը, 2009-ին՝ Եվրոպական միությունը:

Բանաձևում դա այսպես է ձևակերպված. Եվրոպական պառլամենտը

«1. Այն կարծիքն է հայտնում, որ Հայկական հարցը, ինչպես նաև Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հարցը պետք է քննարկվեն Թուրքիայի և Եվրոպական Տնտեսական Համագործակցության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում, ընդգծում է, որ դեմոկրատիան կարող է արմատապես հաստատվել մի երկրում այն պայմանով միայն, եթե այդ երկիրը ճանաչի և հարստացնի իր պատմությունը իր էթնիկական և մշակութային այլազանությամբ»:

Արձանագրություններում գրված է այսպես.

«վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ, Հելսինկյան եզրափակիչ ակտով, Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիայով իրենց ստանձնած պարտավորությունները»:

2. Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում Բանաձևը՝

«3. Պահանջում է (Եվրոպական) խորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917 թվականների հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև»:

Արձանագրություններում Հայաստանն ու Թուրքիան

«2. համաձայնում են՝

երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև կանոնավոր կերպով անցկացնել քաղաքական խորհրդակցություններ, իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրություն՝ առկա խնդիրների սահմանման ու առաջարկների ձևակերպման համար»:

Այսինքն՝ Բանաձևի համեմատ, որը պահանջում էր ճնշում գործադրել Թուրքիայի վրա՝ ճանաչելու Հայոց ցեղասպանությունը, Արձանագրություններում հետքայլ է կատարվել, և հարցը տեղափոխվել է քննարկումների և երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսության ոլորտ:

3. Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման հարցում,

Բանաձևը՝

«2. Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թվականներին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 9-ին:

Նշում է միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և ամենայն հաստատականությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանության՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ»:

Արձանագրությունները նշում են՝

«հաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը, ինչպես սահմանված է միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով»:

Այստեղ Եվրոպական պառլամենտը ավելի հեռում է գնացել և, ակնհայտորեն չափազանցելով իր իրավասություններն ու միջազգային դատարանի գործառնություններով, Բանաձևի 2-րդ կետում նշել է. «ամենայն հաստատականությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանության՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ»: Արձանագրությունների վերոհիշյալ կետով ՀՀ-ն հրաժարվում է տարածքային պահանջներից, որը Բանաձևի պահանջներից մեկն է՝ հրաժարումը «նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ»:

4. Հայության իրավունքների հարցում Բանաձևը՝

«5. Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը, երաշխավորելու իր իրավունքները որպես փոքրամասնություն և անարգել օգուտելու մարդու և քաղաքացիների իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում»:

Այս կերպ՝ Բանաձևը մեկ հարվածով արևմտահայության իրավունքները հավասարեցնում է Թուրքիայում ապրող փոքրամասնությունների իրավունքներին.




5. Հայոց ազգային ազատագրական պայքարի հարցում Բանաձևը՝

«12. **Վճռականորեն դատապարտում է այն բոլոր բռնի գործողություններն ու ահաբեկչության ձևերը, որոնք ի գործ են դրվում առանձին կազմակերպությունների կողմից,** և հատկանշական չեն հայ ժողովրդի համար, և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին»:

Արձանագրությունները՝

«**դատապարտելով ահաբեկչության, բռնության և ծայրահեղականության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից, խոստանալով ձեռնպահ մնալ նման գործողությունների խրախուսելուց ու հանդուրժելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում:**»

Այստեղ ավելի հեռուն է գնացել Արձանագրությունների կետը, որը կրկնելով ահաբեկչությունը դատապարտելու Բանաձևի կետը, ինչը իրականում հայության ազգային ազատագրական պայքարի ելելու կամ ինքնապաշտպանության դիմելու իրավունքի մերժումն է՝ հավելում է, որ դատապարտելի են **բռնության ու ծայրահեղականության** բոլոր ձևերը **անկախ դրանց պատճառներից:** Փաստաթղթերի հեղինակները ասես 1890-ական կամ 1918-1920 թթ. ապրելիս լինեն, երբ հայոց իրավունքների պաշտպանության համար պայքարի ելած հայ ֆիդայիները ներկայացվում էին իբրև ահաբեկիչներ, իսկ Ջորավար Անդրանիկի Առաջին հարվածող զորամասը և այլ հայրուկային խմբերը՝ **«զինված բանդաներ»:** (Տես, Բաբուժի պայմանագրի 5-րդ հոդվածը, Ալեքսանդրապոլի պայմանագրի 4-րդ հոդվածը, Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածը, Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածը: Այս թեմայով տես, ինչպես «Հայ ժողովրդի ինքնապաշտպանության բնական, նաև միջազգային իրավունքի մասին» հոդվածը, «Ուխտ Արարատի» պարբերական, թիվ 1 (17), մարտ - ապրիլ, 2009 թ., էջ 22: Տես, «Ուխտ Արարատի» հասարակական նախաձեռնության «Բաց մասնակը Լոս Անջելեսի «Նոր օր» թերթի նախկին խմբագիր Վաչէ Սեմերճեանին», www.oukhtararati.com):



6. Հայոց պատմամշակութային արժեքների և հուշարձանների հարցը,

Բանաձևը՝ Եվրոպական պառլամենտը՝

«8. Համարում է, որ **հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև թուրքահայերի կրոնական - ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը** պետք է դիտել որպես թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքակրթությունների՝ մասնավորապես կայսրության մասն կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս»:

Արձանագրությունները հորդորում են՝

«համագործակցել գիտության և կրթության ոլորտներում համապատասխան հաստատությունների միջև հարաբերությունները խրախուսելու, ինչպես նաև մասնագետների և ուսանողների փոխափոխումը խթանելու միջոցով և **աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման** և համատեղ մշակութային ծրագրեր սկսելու նպատակով»:

Բոլորին է հայտնի, որ հայոց քաղաքակրթական հարուստ ժառանգությունը թուրքիայում ամեն օր ոչնչացվում է: Մշակութային ցեղասպանության այդ փաստը նսեմացնելու ու չեզոքացնելու նպատակով խնդիրը հանգեցվում է թուրքահայերի կրոնական - ճարտարապետական ժառանգության պահպանման հարցին: Արձանագրություններում

խոսվում է **երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման** մասին, որը բնավ չի համապատասխանում գոյություն ունեցող իրողություններին:

7. Եվրոպական պառլամենտի մասնագետների, ավելի ճիշտ կլինի ասել Եվրոպական պառլամենտի և Եվրոպական այլ հարակից կառույցների ենիսարների ու կոմիսարների մասնակցության հարցը,

Բանաձևը՝

«13. Կոչ է անում Եվրոպական Տնտեսական Համագործակցության անդամ երկրներին՝ հռչակելու «20-րդ դարում գործարկված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես գոհ գնացած **հայերի ու հրեաների:** Վավերացնում է **իր պարտավորությունը իրապես նպաստելու այն նախաձեռնություններին, որոնց նպատակն է հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացումը:**»

Արձանագրությունները նշում են՝

«Ըստ անհրաժեշտության, **միջազգային փորձագետներ** կմասնակցեն ենթահանձնարարողվների շախտանքներին»:

Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են, չէ որ իրենց իսկ առաջադրած սկզբունքների ու դրույթների իրականացման գործընթացները իրենք էլ պարտավորված են վերահսկել...

Եզրակացություն: 1987 թվականին Եվրոպական պառլամենտի ընդունած Բանաձևը սփյուռքահայերը ընդունեցին որպես

ձեռքբերում, որպես հաղթանակ: Անհրաժեշտ է հաշվի առնել այն իրողությունը, որ տասնամյակներ շարունակ Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության խնդիրը փակուղի էր մտցվել և բնական էր, որ Բանաձևի 2-րդ կետի 1-ին պարբերությունը, որտեղ նշված էր, թե՛

Եվրոպական պառլամենտը «Գտնում է, որ **ողբերգական իրադարձությունները**, որ տեղի ունեցան **1915-1917 թվականներին** Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» Կոնվենցիայի, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 9-ին»՝

համարվել նվաճում:

Նույն 2-րդ կետի 2-րդ պարբերության ձևակերպումը այն է՝

Եվրոպական պառլամենտը «Նշում է միաժամանակ, որ **ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և ամենայն հաստատականությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանության՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ:**»

Հաղթահարելի էր թվում, մանավանդ, եթե իրականացվում էր Հայոց ցեղասպանության դատապարտման խնդիրը:

Մնացած կետերի կարևորությունը խամրում էր սրանց առաջ և բնական էր, որ սփյուռքահայությունը այսքան ժամանակ փորձ չէր անում վերադառնալու Բանաձևի դրույթների քննարկմանը: Սակայն, այսօր ոչ միայն սփյուռքահայությունը, այլև գերազանցապես ՀՀ-ի, ԼՂՀ-ի ու Ջավախքի հայությունը պարտավոր է դա անել հատկապես այն պատճառով, որ դրանք դարձել են Հայաստան - Թուրքիա Արձանագրությունների դրույթներ ու կետեր և հավակնում են



իրենց տրամաբանությամբ «ուղղորդել», առանց չափազանցության, համայն հայության և հայոց պետականության ներկան և ապագան:

Այսքան լուրջ է խնդիրը: Նախկինում՝ Եվրոպական պառլամենտի Բանաձևը, ներկայիս՝ Հայաստան - Թուրքիա Արձանագրությունների վավերացումը վերաբերում են ոչ միայն Թուրքիայի Հանրապետությունը մասնատելու և Արևմտյան Հայաստանն ու հայոց բռնազավթված այլ տարածքները, օրինակ, քրդերին նվիրաբերելու ծրագրերին, այլև հայոց անժամանցելի հիմնարար իրավունքների չեզոքացմանը, մասնավորապես, Հայոց ցեղասպանության դատապարտման և վնասների հատուցման և ԱՄՆ 28-րդ նախագահ Վուդրո Վիլսոնի կայացրած Իրավարար վճռին Հայաստան - Թուրքիա սահմանի վերաբերյալ:

Արձանագրությունների վավերացման ճակատագիրը չի կարող կապված լինել Թուրքիայի Միլլի մեջլիսում այն վավերացնել - չվավերացնելու հարցին: Իսկ եթե պարզվի, որ Թուրքիայի այսօրվա քաղաքական վերնախավին՝ Էրդո-

ղան - Գյուլ - Դավութօղլուին չի հուզում Թուրքիան մասնատելու սպառնալիքն ու ծրագիրը, ինչպես նախկինում Թալեաթ - Էնվեր - Ջեմալ քաղաքական վերնախավին չի հուզեց Օսմանյան կայսրության փլուզման սպառնալիքն ու ծրագիրը...

Արձանագրությունների ճակատագիրը մեր քաղաքական վերնախավը պետք է վճռի, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովը՝ հիշելով, թե որքան թանկ նստեց 1908-ի քաղաքական սխալը ոչ միայն հայության, այլև թուրքական պառլամենտի հայ պատգամավորների և Օսմանյան կայսրության հայ քաղաքական վերնախավի վրա...

Պատմությունը կրկնվում է միայն նրանց համար, ովքեր պատմությունից դասեր չեն քաղում:

«Ուխտ Արարատի», ՀԱԳԳ-ի ազատամարտիկների և նախկին քաղաքանտարկյալների հասարակական նախաձեռնություն
3 մարտի 2010 թ.

ԵՎՐՈՊԱՌԼԱՄԵՆՏԻ 1987 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի ԲԱՆԱՁԵՎԸ

Եվրոպական պառլամենտը 1987 թ. հունիսի 18-ին բանաձև է ընդունում Հայկական հարցի քաղաքական լուծման մասին, որի տեքստը ընթերցողին ենք ներկայացնում ամբողջությամբ.

«10. Հայկական հարց
A 2-33/87

Եվրոպական պառլամենտը՝

- Նկատի ունենալով սոցիալիստների խմբի անունից պր. Սաբիի և մյուսների կողմից ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստաթուղթ 2-737/84 թ.).

- Պր. Կոլոկոտրոնիսի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի և ապրիլի 24-ը հայկական ցեղասպանության հիշատակի օր հայտարարելու մասին (փաստ. B 2-360/85 թ.).

- Եվրոպական պառլամենտի քաղաքական հանձնաժողովի զեկուցագիրը (փաստ. A. 2-33/87/9.).

Ա. հաշվի առնելով՝

- Պր. ժակեի և նրա համախոհների ներկայացրած առաջարկությունը հայ ժողովրդի կացության մասին (փաստ. 1-782/81 թ.).

- Սոցիալիստների խմբի անունից տիկ.

Դյուպորի և պր. Գլինի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստ. 1-735/83 թ.).

- Տիկ. Դյուպորի գրավոր հարցումը Հայկական հարցի մասին.

- Եվրոպական խորհրդի մշակութային գործերի միջխորհրդի խորհրդակցության 1986 թ. նոյեմբերի 13-ին ընդունած որոշումը, որը վերաբերում է Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանությանը ներառյալ ԵՏՀ (Եվրոպական Տնտեսական Համագործակցության երկրների) տարածքից դուրս գտնվող հուշարձանները.

Բ. Համոզված լինելով, որ Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի պատմության ճանաչումն իսկ ենթադրում է նրա ինքնության ճանաչումը որպես էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնություն.

Գ. Նկատի ունենալով, որ հայերը այդ իրադարձությունները (1915 թ. կոտորածները) որակում են որպես կազմակերպված ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի 1948 թ. Կոնվենցիայի.

Դ. Նկատի ունենալով, որ թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը որպես անհիմն.

Ե. Հաստատելով, որ թուրքական կառավարությունը, մերժելով մինչև օրս ճանաչել 1915 թվականի ցեղասպանությունը, շարունակում է այդպիսով զրկել հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից.

Զ. Նկատի ունենալով, որ պատմականորեն ապացուցված հայկական ցեղասպանությունը մինչև այժմ ոչ ենթարկվել է քաղաքական դատապարտման և ոչ էլ ստացել է համապատասխան հատուցում.


Է. Նկատի ունենալով, որ Թուրքիայի կողմից հայկական ցեղասպանության ճանաչումը այսուհետև կդիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգնման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը.

Ը. Խորապես ափսոսանք հայտնելով և դատապարտելով 1973-ից 1986 թվականների ընթացքում հայկական խմբավորումների անիմաստ ահաբեկչությունը, ինչպես նաև բազմաթիվ մահափորձերը, որոնց հետևանքով զոհվեցին կամ վիրավորվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ, ինչը դատապարտվեց հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից.

Թ. Նկատի ունենալով, որ բոլոր իրարահաջորդ թուրքական կառավարությունների անհաշտ դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը.

1. Այն կարծիքն է հայտնում, որ Հայկական հարցը, ինչպես նաև Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հարցը պետք է քննարկվեն Թուրքիայի և Եվրոպական Տնտեսական Համագործակցության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում, ընդգծում է, որ դեմոկրատիան կարող է արմատապես հաստատվել մի երկրում այն պայմանով միայն, եթե այդ երկիրը ճանաչի և հարստացնի իր պատմությունը իր էթնիկական և մշակութային այլազանությամբ:

2. Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917 թվականներին Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն, համաձայն «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մա-





սին» կոնվենցիայի, ընդունված ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1943 թվականի դեկտեմբերի 9-ին:

Նշում է, միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և ամենայն հաստատականությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանության՝ առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի նկատմամբ:

3. Պահանջում է (Եվրոպական) խորհրդից ճնշում գործադրել ներկայիս թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917 թվականների հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև:

4. Ելնում է նրանից, որ հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության կողմից գործադրած ցեղասպանության մերժումը ներկայիս թուրքական կառավարության կողմից, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարումը Կիպրոսում, թուրքական օկուպացիոն գործերի պահպանումը, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը, այդ երկրում (Թուրքիայում) իսկական պաշտամենտար դեմոկրատիայի բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը, այս ամենը հանդիսանում են անհաղթահարելի արգելքներ Եվրոպական Տնտեսական Համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

5. Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը, երաշխավորելու իր իրավունքները որպես փոքրամասնություն և անարգել օգտվելու մարդու և քաղաքացիների իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում:

6. Վճռականորեն պահանջում է, որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակույթի և կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք, նաև հաստատականորեն հանդես է գալիս (պատմական) հուշարձանների պահպանության գործի բարելավման, այդ թվում նաև՝ թուրքահայերի կրոնական - ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին և ցանկություն է հայտնում, որպեսզի Եվրոպական Տնտեսական Համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակին օժանդակող հնարավոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

7. Այս կապակցությամբ կոչ է անում Թուրքիայի անշեղորեն պահպանել իր երկրում ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923 թ. Լոզանի պայմանագրի 37-46-րդ հոդվածները, ստորագրված Եվրոպական Տնտեսական Համագոր-

ծակցության անդամ պետությունների մեծամասնության կողմից:

8. Համարում է, որ հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև թուրքահայերի կրոնական - ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես Թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքականությունների՝ մասնավորապես կայսրության մասն կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

9. Կոչ է անում այսպիսով Եվրոպական Տնտեսական Համագործակցությանը տարածել Թուրքիայի հետ համագործակցության համաձայնությունը նաև մշակութային ասպարեզի վրա՝ այդ երկրում քրիստոնեական կամ այլ՝ ինչպես օրինակ՝ դասական անտիկ շրջանի, խեթական, օսմանյան և այլն քաղաքակրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

10. Իր մտահոգությունն է հայտնում այն դժվարությունների առթիվ, որոնց առնչվում է Իրանի հայ համայնքը մայրենի լեզվի գործածության և կրոնական կանոնների համապատասխան կրթության գործը կազմակերպելու հարցերում:

11. Հանդես է գալիս ընդդեմ խորհրդային Միությունում հայ ազգաբնակչության անհատական ազատությունների խախտումների:

12. Վճռականորեն դատապարտում է այն բոլոր բռնի գործողություններն ու ահաբեկչության ձևերը, որոնք ի գործ են դրվում առանձին կազմակերպությունների կողմից, և հատկանշական չեն հայ ժողովրդի համար, և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

13. Կոչ է անում Եվրոպական Տնտեսական Համագործակցության անդամ երկրներին՝ հռչակելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես զոհ գնացած հայերի ու հրեաների:

Վավերացնում է իր պարտավորությունը իրապես նպաստելու այն նախաձեռնություններին, որոնց նպատակն է հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացումը:

14. Հանձնարարում է իր նախագահին՝ սույն բանաձևը փոխանցելու (Եվրոպական պաշտամենտի քաղաքական) հանձնաժողովին, Եվրոպական խորհրդին, Եվրոպական Տնտեսական Համագործակցության անդամ-երկրների արտաքին գործերի մինիստրների խորհրդակցությանը, «ԵՏՀ-Թուրքիա» ընկերակցության խորհրդին, ինչպես նաև թուրքական, իրանական և խորհրդային կառավարություններին և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին»:

Ծանոթագրություն

1. Պետք է լինի՝ 1948 թվականի դեկտեմբերի 9-ի...
2. Տես, Լենդրուշ Խուրշուդյան, Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 58-70:

Քանի դեռ Ղարաբաղյան հիմնախնդիրը չի լուծվել, սահմանը չի բացվի

«Թուրքիան չի հրաժարվում հայ-թուրքական արձանագրություններից, սակայն քանի դեռ Ղարաբաղյան հիմնախնդիրը չի լուծվել, սահմանը չի բացվի», ըստ թուրքական ՉԼՄ-ների՝ հայտարարել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: «Կարծում եմ՝ եթե Ղարաբաղյան հիմնախնդիրը լուծվի, սահմանի բացման հետ կապված ոչ մի հարց չի լինի: Այդ պատճառով Միսակի խումբը պետք է ակտիվացնի իր գործունեությունը: Ես Վաշինգտոնում քննարկել եմ այդ թեման ԱՄՆ և Ռուսաստանի նախագահների հետ, նաև նախագահ Մարկոզիի հետ վերջերս Փարիզ կատարած այցի ընթացքում: Սակայն նրանք արդեն 20 տարի է չեն կարող արդյունքի հասնել այդ հարցում», - նշել է նա:

Թուրքիայի վարչապետի խոսքերով՝ հարցի լուծումը պետք է գտնել Ադրբեջան-Հայաստան-Թուրքիա համատեղ հանդիպումների ընթացքում: «Մենք պետք է հաղթահարենք Ադրբեջանի և Հայաստանի միջև առկա հակամարտությունը: Հայ-թուրքական արձանագրություններից մենք չենք հրաժարվում, մենք ձգտում ենք տարածաշրջանում խաղաղություն հաստատել: Սահմանը փակվել է Ադրբեջանի տարածքների օկուպացման հետևանքով, և քանի դեռ սահմանի փակման այդ պատճառը չի վերացվել՝ արձանագրությունները չեն վավերացվի Թուրքիայի խորհրդարանում», - հայտարարել է Էրդողանը:

/www.yerkir.am/ 19.04.2010 թ.

Պարաբաղյան հակամարտության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման միակ ճանապարհը իրավական ուղին է

Միջազգային ընկերակցությունը երբեք ազնիվ չի եղել Հայկական հարցում, նրանում ներառված խնդիրներում: Այդպես էր անցյալում, այդպես է այսօր: Հենց դա նկատի ունենալով՝ Ֆրիտյոֆ Նանսենը, երբ նշում էր. «Կարեկցում են հայ ժողովրդին, որ խճճվեց եվրոպական քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե իր անունը երբևէ հնչած չլիներ եվրոպացի որևէ քաղաքագետի բերանից» (Ֆրիտյոֆ Նանսեն, «Խաբված ժողովուրդ», ԵՊՀ հրատ., Երևան, 2000, էջ 272-273):

Այսօր շատ հարմարավետ և մոդայիկ է դարձել տարբեր երկրների ու ժողովուրդների դեմ իրականացվող բռնություններն ու ագրեսիաները բացատրել «երկակի ստանդարտների», տերությունների «ազգային շահերի», «նավթամուղերի ու գազամուղերի ճանապարհների» շուրջ աշխույժ և անսթոր քաղաքական շահարկումով¹, առանց նկատի առնելու, որ դրանով «արդարացվում են» մեծ, թե փոքր պետությունների պատասխանատու պաշտոնյաների կողմից մարդկության դեմ իրականացվող հանցագործությունները, որովհետև այդ գործողություններն ուղեկցվում են ժողովուրդների կոտորածներով, բռնագաղթերով, մարդկանց մեծ ու փոքր խմբերի կյանքի, զույքի, ազատությունների իրավունքների համատարած ոտնահարումների փաստերով:

Այդպես է և հայ ժողովրդի պատմության արդի շրջանում՝ 1988-ի փետրվարից սկսած:

Աշխարհում չկա մի հակամարտություն, որի կարգավորման իրավական տարբերակը գոյություն չունենա, և դրանց մեջ ցայսօր չկա մեկը, հատկապես, եթե դա հայկական խնդիր է, որի կարգավորման համար, ինչպես անցյալում, այնպես էլ 1988-ից սկսած, միջազգային ընկերակցությունը իրավականի փոխարեն հենց միայն կամային-քաղաքական լուծումներ չառաջադրի: Եվ դա անում է մի այնպիսի կատարյալ համառությամբ, որն ի վերջո, վերածվում է միջազգային «քաղաքական կապրիզի»:

1. - Ղարաբաղյան հակամարտություն: Ղարաբաղյան հակամարտության արդի շրջանը, որ սկզբնավորվեց 1988-ից, ձգվում է արդեն շուրջ 22 տարի, իսկ հանգուցալուծումը այդպես էլ չի երևում: Խոսքն այն մասին չէ, որ գերտերությունների շահերի ու ծրագրերի համատեքստում հակամարտությունը մերթ սառեցվում է, մերթ՝ բորբոքվում, այլ նրա, որ հակամարտության խաղաղ կարգավորման իրական ուղիներն այդպես էլ թաքուն են պահվում և հայտնությունից, և՛ հակամարտությանը կամ, թե ակամա ներգրավված այլ ժողովուրդներից:

Մինչդեռ այդ ուղիները գոյություն ունեն:

Դրանցից մեկը հակամարտությունների խաղաղ կարգավորման միջազգային ընդունված կարգն ու համաձայնությունն է, որ կոչվում է **Միջազգային բախումների խաղաղ լուծման Կոնվենցիա, Հաագա, 18 հոկտեմբերի 1907 թ. /Конвенция о мирном решении международных столкновений, Гаага, 18 октября 1907 года/**.

Ի՞նչ է ասում այդ փաստաթուղթը: Հաագայի Կոնվենցիան հակամարտության խաղաղ կարգավորման համար նախատեսում է իրավական գործողությունների երեք փուլերի ու քայլերի հետևյալ հաջորդականությունը.

ա) **Առաջին փուլում**, համաձայն Կոնվենցիայի 2-րդ բաժնի 2-րդ հոդվածի պահանջի, հակամարտող կողմերը պետք է օգտվեն մեկ կամ մեկից ավելի բարեկամ երկրների միջնորդական առաքելության ծառայություններից: Համաձայն Կոնվենցիայի 2-րդ բաժնի 5-րդ հոդվածի պահանջի՝ միջնորդական առաքելությունը համարվում է ավարտված այն պահից, երբ հակամարտող կողմերից մեկը կամ միջնորդը համոզվում է, որ հաշտության առաջարկները չեն ընդունվում հակամարտող կողմերից որևէ մեկի կողմից:

բ) **Երկրորդ փուլում**, համաձայն Կոնվենցիայի 3-րդ բաժնի 9-րդ հոդվածի, ստեղծվում է հակամարտության պատճառները հետաքննող հանձնաժողով, որն անցկացնում է հակամարտության պատճառների անաչառ ու բարեխիղճ հե-

տաքննություն և իր առաջարկություններն է ներկայացնում հակամարտող կողմերին: Եթե հետաքննող հանձնաժողովի առաջարկները նույնպես չեն ընդունվում հակամարտող կողմերից որևէ մեկի կողմից, ապա հարցը տեղափոխվում է հաջորդ փուլ:

գ) **Երրորդ փուլում**, համաձայն Կոնվենցիայի 4-րդ բաժնի 2-րդ գլխի 41-րդ հոդվածի, հարցը ներկայացվում է հատուկ այդ խնդրի համար ստեղծվող միջնորդական դատարան, որի որոշումներն արդեն պարտադիր են հակամարտող կողմերի համար:

Արդ, նշված քայլերից ո՞րն է, որ իրականացվել է Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման համար:

Առաջին. Հայտնի է, որ 1992-ի մարտի 24-ին ԵԱՀԿ-ի Հելսինկիի լրացուցիչ հանդիպման ժամանակ առաջարկ է եղել առաջիկայում՝ ամռանը, Մինսկ քաղաքում իրավիճակի հատուկ կոնֆերանս և ստեղծել աշխատանքային խումբ, որը պետք է զբաղվի Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հարցերով՝ հիմնվելով ԵԱՀԿ սկզբունքների ու պարտավորությունների վրա: Ուշադրություն դարձնենք այն փաստին, որ ԵԱՀԿ-ն այն ժամանակ միջազգային կազմակերպություն էր, իսկ 2009 թվականից նա արդեն ընդհանուր պետություն հանդիսացող Նոր Եվրոպայի պետական կառույց է: Նշենք նաև, որ առ այսօր Մինսկի կոնֆերանսը չի իրավիճակ:

Երկրորդ. ԵԱՀԿ Մինսկի խումբն անցնող 18 տարիների ընթացքում իրականացրել է Հակամարտությունների խաղաղ կարգավորման Կոնվենցիայի 1-ին և 2-րդ բաժինների պահանջները միայն: Այսինքն, 18 տարի շարունակ առաջարկներ է մշակել և ներկայացրել կողմերին, որոնք նույն հետևողականությամբ մերժվել են: Մինչդեռ, եթե միջնորդական առաքելությունը գտնվեր իրավական դաշտում, ապա պարտավոր էր համաձայն Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջի ավարտված համարել իր գործունեությունը և առաջարկել հակամարտող կողմերին խնդիրը տեղափոխել 3-րդ բաժնով կարգավորվող փուլ և, ըստ այդմ, ստեղծել միջազգային հետաքննող հանձնաժողով:

Երրորդ. Հաագայի Կոնվենցիայի 2-րդ բաժնի 8-րդ հոդվածը նշում է, որ միջնորդական առաքելությունը պետք է ուղղված լինի չեզոքացնելու պատերազմի վտանգը և միջնորդ երկրները նույնպես պարտավորություն են կրում պահպանելու խաղաղության ռեժիմը²: Մինչդեռ, Մինսկի խումբը ճնշումներ է գործադրում ԼՂՀ-ի, ՀՀ-ի և հայության վրա՝ պատերազմի հնարավոր վերսկսման սպառնալիքով նրանցից զիջումներ կորզելու համար:

Այնինչ, Կոնվենցիայի հաջորդ քայլով, ինչպես նախատեսված է 2-րդ բաժնի 2-րդ հոդվածում, վաղուց պետք է ստեղծվեր հետաքննող հանձնաժողով, որի գործունեությունը նույնպես կանոնակարգված է մի շարք հոդվածներով: Ստացվում է, որ Հակամարտությունների խաղաղ կարգավորման Կոնվենցիայի հաջորդ փուլի, երկրորդ քայլի պահանջը կատարելու համար Մինսկի խմբին չի բավարարել 18-ամյա գործունեության ժամանակաշրջանը և, անշուշտ, հայտնի չէ, թե դեռ ինչքան ժամանակ է պահանջվելու այդ փուլին վերջապես անցում կատարելու համար:

Այնպիսի է, որ եթե Ղարաբաղյան հակամարտության միջազգային խաղաղ կարգավորումը 1992-ից ընթանար Հաագայի Կոնվենցիայի հոդվածների ու դրույթների պահանջներով, ապա պատերազմը շատ ավելի շուտ կավարտվեր, քան 1994-ին և հակամարտությունն էլ այսպես երկար չէր ձգձգվի՝ հավելյալ զոհեր ու նոր կորուստեր խլելով կողմերից:

Ասվածից հետևում է, որ ինչպես ԵԱՀԿ-ի և Մինսկի խմբի, այնպես էլ ՀՀ Արտաքին գործերի նախարարության կատարած աշխատանքները կարելի է գնահատել անբավարար, չասելու համար հակամարտության կարգավորումը խոչընդոտող՝ խանգարող, գործունեություն:

Իսկ խնդրի լուծումը հետևյալն է. ՀՀ-ն և ԼՂՀ-ն դիմում են



Մինսկի խմբի համանախագահ երկրների ղեկավարներին, հակամարտության կարգավորմամբ շահագրգիռ բոլոր կողմերին, ինչպես նաև ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին՝ առաջարկելով, Մինսկի խմբի միջնորդական առաքելության այս ձևաչափը համարել սպառված, և գործողությունը տեղափոխել կարգավորման հաջորդ փուլ, ըստ այդմ՝ ստեղծել հետաքննող հանձնաժողով, մանավանդ որ Մադրիդյան նորացված (թե՛ չնորացված) սկզբունքները չեն տալիս հակամարտության իրական լուծման բանալին:

2. - Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում, Հայաստան-Թուրքիա Արձանագրություններ: Ինչ ասվեց վերևում ամբողջությամբ վերաբերում է նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրին, որի ուղղությամբ 2001-ից գործող հայ-թուրքական հաշտեցման հասարակական ձևաչափերը, ինչպես նաև պատմաբանների հանձնաժողով ստեղծելու առաջարկները պետք է համարել իրենց սպառած, իսկ այդ ընթացքում մի շարք երկրների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործողություններն ու փաստերը, որպես Հաագայի Կոնվենցիայով կատարված միջնորդական դիվանագիտական առաքելություն՝ պետք է համարել անօգուտ, որովհետև մյուս կողմը՝ Թուրքիայի Հանրապետությունը, միևնույն է մնում է Հայոց ցեղասպանության ժխտողականության դիրքերում, որը հնարավորություն չի տալիս բանակցությունների միջոցով հասնել որևէ շոշափելի արդյունքի:

Այլ է 2009-ից Հայաստան-Թուրքիա Արձանագրությունների խնդիրը, որոնք, երբ իրեն իրենց անուններով ենք կոչում, պետք է համարել գերտերությունների աշխարհաքաղաքական կարիքներն իրագործող պատվեր, ինչպես նաև ՀՀ-ի և ԹՀ-ի ներքին գործերին միջամտելու կոպիտ փորձ: Իրականում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրում նույնպես պետք է անցնել հարաբերությունների կարգավորման իրավական հարթություն և գործել համաձայն Հաագայի Կոնվենցիայի 3-րդ բաժնի դրույթների: Դա նշանակում է, որ գերտերությունները պետք է դադարեցնեն ճնշումները ՀՀ-ի, ԼՂՀ-ի և Հայկական Սփյուռքի վրա, վերջ տան Ցեղասպանության դատապարտման Կոնվենցիան շրջանցելու իրենց փորձերին, որոնք վտանգում են ոչ միայն հայության և Հայաստանի, այլև տարածաշրջանի բոլոր ժողովուրդների ու պետությունների անվտանգությունը:

Կովկասում խուսափելու համար բալկանյան ողբերգության կրկնությունից՝ ՀՀ-ին, ԼՂՀ-ին և Մինսկի համանախագահ երկրներին առաջարկում ենք, արդ և այսուհետ, հակամարտությունների խաղաղ կարգավորման համար ընթանալ

հենց միայն միջազգային իրավական ճանապարհով ու այն սահմանող և առաջնորդող Հաագայի 1907 թվականի հոկտեմբերի 18-ի Կոնվենցիայով:

3. Գ. - Իրավիճակից դուրս գալու ուղիները, որ առաջարկում են Հայաստանին իբր իրատեսական քաղաքականություն վարելու կողմնակիցները, ամեն տեսակ զիջումների գնալն է, ինչը նշանակում է տարածաշրջանում հայության և Հայաստանի վերջը: Մեկ այլ տարբերակով դա Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումն է, որը ներկայացվում է որպես անվնաս քայլ, և որն իրականում նշանակում է փոխադարձ ճանաչում, ինչն իր հերթին նշանակում է ձևացնել, թե ՀՀ-ն և ԹՀ-ն խնդիրներ չունեն և կամ, որ այդ խնդիրների լուծումները կրկին հետաձգվում են անորոշ ժամանակով:

Իրականությունն այն է, որ տարածաշրջանի և ոչ մի ժողովուրդ ու երկիր ամնասն չի մնալու ապագայի սպառնալիքներից և դավադրություններից, եթե նրանցից ամեն մեկն իր կարգին չընտրի գոյություն ունեցող խնդիրների ու հակամարտությունների խաղաղ կարգավորման իրավական ճանապարհը:

Բոլոր ոչ իրավական՝ քաղաքական, տարբերակները գերտերությունների համար պատանդի կարգավիճակում են պահելու հակամարտող կողմերին՝ նրանց երկրներն ու սերունդները, և հիսուն տարին մեկ նոր ուժով է բորբոքվելու հակամարտությունն ու դիմակայությունը, պատերազմն ու քառսը՝ Բալկաններում, Միջին Արևելքում, Կովկասում, Աֆղանստանում: Հենց այն գծով, որի շուրջ սիրում է դատողություններ անել Թուրքիայի նոր Արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավլաթօղլուն, ում ի դեպ, ժամանակին կոչել էին Արևելքի Քիսիմցեր:

1. Բուն խնդիրները չնկատելու, շրջանցելու արդի վերլուծաբանների ու քաղաքագետների վարքագիծը հիշեցնում է այն հայտնի առակը, երբ ապարանցուն հարցնում են. «Տեսնո՞ւմ ես այն անտառը»: Վերջինս պատասխանում է. «Լավ չեմ տեսնում, ծառերը խանգարում են»:

2. Տարածաշրջանում խաղաղության ռեժիմի պահպանման կարևոր քայլերից մեկն էլ կարող է լինել ՀՀ-ի կողմից Աշտական Ձինված Չեզոքության հայտարարությունը: Այդ մասին տես, «Աշտական Ձինված Չեզոքություն ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարության գլխավոր ուղղությունը» հոդվածն այս համարում, էջ 1-4: Այս հոդվածն ամբողջությամբ տես, www.oukhtarati.com կայքում:

КОНВЕНЦИЯ О МИРНОМ РЕШЕНИИ МЕЖДУНАРОДНЫХ СТОЛКНОВЕНИЙ

(Гаага, 18 октября 1907 года)

РАЗДЕЛ I.

О сохранении всеобщего мира.

Статья 1. С целью предупредить, по возможности, обращение к силе в отношениях между Государствами, договаривающиеся Государства соглашаются прилагать все свои усилия к тому, чтобы обеспечить мирное решение международных несогласий.

РАЗДЕЛ II.

О добрых услугах и посредничестве.

Статья 2. Договаривающиеся Государства соглашаются, в случае важного разногласия или столкновения, прежде чем прибегнуть к оружию, обращаться, насколько позволят обстоятельства, к добрым услугам или посредничеству одной или нескольких дружественных Держав.

Статья 5. Обязанности посредника прекращаются с того времени, когда одна из спорящих Сторон или сам посредник удостоверяется, что предложенные средства примирения не были приняты.

РАЗДЕЛ III.

О международных следственных комиссиях.

Статья 9. В международных спорах, не затрагивающих ни чести, ни существенных интересов, и проистекающих из

разногласия в оценке фактических обстоятельств дела, договаривающиеся Государства признают полезным и желательным, чтобы Стороны, не достигшие соглашения дипломатическим путем, учреждали, насколько позволят обстоятельства, международную следственную комиссию, на коей будет лежать обязанность облегчать разрешение этих споров, выяснением вопросов факта посредством беспристрастного и добросовестного их расследования.

РАЗДЕЛ IV.

О международном третейском суде.

Глава II. О постоянной палате третейского суда.

Статья 41. Договаривающиеся Государства, желая облегчить возможность обращаться без замедления к третейскому суду в случае международных споров, которые не могли быть улажены дипломатическим путем, обязываются сохранить в том виде, как она была учреждена Первой конференцией Мира, Постоянную Палату Третейского Суда, доступную во всякое время и действующую, при отсутствии иного о сем условия, сообразно порядку производства, изложенному в настоящей конвенции.



ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՅ ՊԵՏՔ Է ԴԱՌՆԱ ԱՅՆ ԿԱԹՈՒԼ, ՈՐԸ ԶԱՐ Է ԾԱԿՈՒՄ

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը
Վաշինգտոնի Ազգային տաճարում,
Վուդրո Վիլսոնի շիրիմին այցելությունից հետո

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր մենք միասին մեր հարգանքի տուրքը մատուցեցինք նախագահ Վուդրո Վիլսոնի շիրիմին՝ մարդու և ԱՄՆ-ի առաջնորդի, ում մեր ժողովուրդը հիշում է ու միշտ կհիշի որպես հայ ժողովրդի իսկական բարեկամի: Նախագահ Վիլսոնը մեծ գործիչ էր, գործիչ, ում իր հայրենիքից հազարավոր մղոններ հեռու բնակվող հինավուրց ժողովուրդը գրեթե հարյուր տարի անց էլ շարունակում է մեծարել ու փոխանցել այդ մեծարանքը սերունդե սերունդ: Վիլսոնը հայերիս համար ոչ միայն կորուսյալ հայրենիքի իղձը կենարար հողով ամրացրեց, այլև աշխարհին պատվիրան բողոք այն մասին, որ մեծերը կարող են և պարտավոր են թույլ չտալու փոքր ժողովրդի տառապանքների կրկնություն: «Դուք մտածե՞լ եք Հայաստանի տառապանքների մասին: Դուք օժանդակեցի՞ք հայերին այն բանից հետո, երբ նրանք տառապանքներ կրեցին: Այժմ զորակցե՞ք, որ նրանք այլևս երբեք չտառապեն»: Նախագահ Վիլսոնի՝ 1919 թ. փետրվարի 26-ի բուստոնյան ելույթի այս բառերը հնչում են մինչ օրս, ինչն իրականում նա հղում էր ողջ մարդկությանը: «Ձորակցե՞ք, որ այլևս հայերը երբեք չտառապեն»՝ այս խոսքով ԱՄՆ-ի 28-րդ նախագահը դեռ 90 տարի առաջ փաստացիորեն ձևակերպում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պահանջը, քանզի հենց ճանաչումով է սկսվում ցեղասպանությունների և սպազա բոլոր տառապանքների կանխարգելումը: Այսօր մենք գլուխ ենք խոնարհում Նախագահի շիրիմի առջև և զեկուցում, որ Հայոց ցեղասպանությունից ինձնուհիմն տարի հետո էլ աշխարհի շատ երկրներ, կազմակերպություններ և քաղաքական գործիչներ, այդ թվում և իր հայրենիքում, շարունակում են գործել վիլսոնյան պատգամի տրամաբանությամբ: Հայ ժողովուրդը հիշում և հիշելու է բոլորին. անուն առ անուն:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ամերիկահայությունը, հատկապես վերջին տասնամյակներում, դարձել է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործի ամենաեռանդուն ու ամենահետևողական օղակներից մեկը և, համոզված եմ, այսուհետ և՛ ջանալու է բազմապատկված ճիգերով: Ոչ ոք չի կարող կասեցնել անխուսափելին:

Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման նախօրեին ոմանք մտավախություն ունեին, թե դրանով կդանդաղեցվեն կամ ժամանակավորապես կսառեցվեն ցեղասպանության ճանաչմանն ուղղված միջազգային քայլերը: Ժամանակը ցույց տվեց, որ այդ մտավախություններն անհիմն են և անհիմն կլինեն այնքան ժամանակ, քանի մենք բոլորս պատրաստ ենք առավել ջանքերի, պատրաստ ենք նոր պայքարի:

Անցած ամիսներին մենք ձեզ հետ միասին վկան եղանք Թուրքիայի դատապարտված փորձերին՝ պառակտելու հայրենիքն ու սփյուռքը, իրավիճակը ներկայացնելու այնպես, թե իբր գոյություն ունի երկու տարբեր կարծիք Հայաստանում և սփյուռքում: Այսօր մենք միասին կրկին հերքում ենք նման սին պատրանքները: Չկա՝ Հայաստանի հայության և սփյուռքի հայության կարծիքների տարբերություն. կա միասնական հայ ժողովուրդ, և նա տեր է իր արդար դատին:

Այո՛, մենք պատրաստ ենք և ցանկանում ենք բնականոն



ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը
Վուդրո Վիլսոնի շիրիմի մոտ

հարաբերություններ ունենալ մեր բոլոր հարևանների հետ, բայց մենք չենք հանդուրժի, որ պայմաններ թելադրվեն մեզ: Այս առավոտ ես հանդիպեցի Թուրքիայի վարչապետի հետ: Մեր դիրքորոշումը եղել է մնում է շատ հստակ. Թուրքիան չի կարող նախապայմանների լեզվով խոսել Հայաստանի և հայության հետ: Մենք դա պարզապես թույլ չենք տա: Մենք չենք պատրաստվում որևէ ձևաչափում քննության առարկա դարձնել ցեղասպանության եղելության փաստը կամ ձևացնել, թե հավատում ենք, որ Թուրքիան կարող է որևէ դրական դերակատարություն ունենալ Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացում: Ցանկացած նոր արտաքին քաղաքական ուղեգիծ ենթակա է փորձությունների, որովհետև մենք անցնում ենք չտրորված արահետով: Ես վստահ եմ, որ Հայաստանը պատվով է բռնելու նաև այս քննությունը:

Հարգելի՛ հայրենակիցներ,

Դուք, որպես արտերկրում ապրող, բայց հայության ցավերով ու շահերով տոգորված հավաքականություն, անխորտակելի ուժ եք. դուք Հայաստանի միջազգային քաղաքական կշռի կարևոր բաղկացուցիչն եք: Սա գիտակցում են թե՛ մեր բարեկամները, թե՛ մյուսները: Դուք ձեր կեցվածքով ու վճռականությամբ ապացուցում եք, որ սխալ են եղել բոլոր այն հաշվարկները, ըստ որոնց՝ հայությանը կարելի է փոշիացնել ու ոչնչացնել ցրելով աշխարհով մեկ: Յուրաքանչյուր հայ, որ մայրցամաքում էլ լինի, պետք է հուռնա այն կաթիլը, որը քար է ծակում: Մենք ինչն այդ ճանապարհին ենք: Մեր ժողովրդի դահիճները մեզ այլընտրանք չեն թողել: Եվ մենք բարգավաճելու ենք, մենք ծակելու ենք տարբերության, ցինիզմի ու երկերեսանիության քարը: Դրա համար մենք ունենք բավականաչափ համբերություն, հավատ և նպատակասլացություն:

Հայրենակիցներ,

Թույլ տվեք խոսքս ավարտել երախտագիտության բառերով՝ ուղղված մի երկրի ու մի ժողովրդի, որ ծնել է դեսպան Մորգենթաուի և նախագահ Վիլսոնի պես գործիչներ: Հայությունն ուժեղ է և կարողանում է ինքնարտահայտվել Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Դա անշուշտ ձեր արժանիքն է, բայց ձեր արժանիքը լինելուց զատ, ամերիկյան ազատության արժանիքն է: Մենք շնորհակալ ենք այս մեծ ու հզոր երկրին, որ այսօր էլ իր զգալի դերակատարությունն ունի հայ ժողովրդի կյանքում: Աստված պահի Ամերիկան, Աստված պահի Հայաստանը և փառք հայ ժողովրդին:

ՀՀ նախագահի մամուլ գրասենյակ
13.04.2010 թ.



ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՎՃԻՌԸ

1984 թ. ապրիլի 16-ին Փարիզում տեղի ունեցավ Ժողովուրդների մշտական դատական ատյանի Հայոց ցեղասպանությանը նվիրված հատուկ նստաշրջան, որը կայացրեց հետևյալ վճիռը¹.

«Ատյանը գտնում է, որ.

1. Հայ ազգաբնակչությունը կազմել է և կազմում է մի ժողովուրդ, որի հիմնարար իրավունքները՝ թե՛ անհատական, թե՛ հավաքական, պետք է հարգվեին և պետք է հարգվեն միջազգային իրավունքին համապատասխան:

2. Հայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը բռնազաղթի և կոտորածի ճանապարհով հանդիսանում է ցեղասպանության հանցագործություն, որը չունի վաղեմության ժամկետ² ըստ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայի սահմանման:

Սույն հանցագործությունը դատապարտելու առումով վերը հիշատակված Կոնվենցիան նկատի ունի այդ պահին գործող օրենքը և հաշվի է առնում նախկինում ուժի մեջ եղող կանոնները, որոնք գոյություն ունեին ամբաստանվող հանցագործ ակտերի կատարման ժամանակ:

3. Երիտթուրքերի կառավարությունը մեղավոր է այդ ցեղասպանության համար, նկատի ունենալով 1915-ից 1917 թթ. ընթացքում կատարվածը:

4. Հայերի ցեղասպանությունը նաև «միջազգային հանցագործություն է», որի համար պետք է պատասխանատվություն կրի Թուրքական պետությունը, առանց պատրվակելու այն հանգամանքը, թե նախկին ու ներկա պետությունների միջև հաջորդականություն չկա՝ պատասխանատվությունից խուսափելու համար:

5. Այդ պատասխանատվությունը առաջին հերթին պահանջում է պաշտոնապես ճանաչել ցեղասպանության իրողությունը և հայ ժողովրդի կրած համապատասխան կորուստները:

6. Միավորված Ազգերի Կազմակերպությունը և նրա յուրաքանչյուր անդամն իրավունք ունի պահանջելու այս ճանաչումը և դրանում աջակցելու հայ ժողովրդին»:

Ստորև ներկայացնում ենք ժողովուրդների մշտական ատյանի վճռի ամբողջ տեքստի ռուսերեն տարբերակը:

ВЕРДИКТ ПОСТОЯННОГО ТРИБУНАЛА НАРОДОВ ПО ГЕНОЦИДУ АРМЯН

(16 апреля 1984 г.) ...

По этим причинам

в ответ на вопросы, которые были поставлены перед ним, Трибунал настоящим считает, что:

1. армянское население составляло и составляет народ, фундаментальные права которого, как индивидуальные, так и коллективные, должны и будут уважаться в соответствии с международным правом;

2. уничтожение групп армянского населения посредством депортации и резни составляет преступление

геноцида, которое не имеет срока давности по определению Конвенции о предупреждении преступления геноцида и наказании за него от 9 декабря 1948 г. Что касается осуждения этого преступления, то вышеуказанная Конвенция декларирует существующее право и включает нормы, которые уже действовали в то время, когда инкриминировались эти акты;

3. младотурецкое правительство повинно в этом геноциде, в том, что касается действий, совершенных в период между 1915 и 1917 г.;

4. геноцид армян является также «международным преступлением», за совершение которого турецкое государство должно нести ответственность и не ссылаться на нарушение континуитета как предлог, чтобы избежать этой ответственности;

5. эта ответственность подразумевает прежде всего обязательство признать официально факт этого геноцида и ущерб, который в результате него понес армянский народ;

6. ООН и каждый из ее членов имеют право требовать этого признания и помочь армянскому народу в этом отношении.

— — — — —

Печатается по: A Crime of Silence. The Armenian Genocide: Permanent Peoples Tribunal. Pierre Vidal-Naquet, preface, Gerard Labiridian. London: Zed Books, 1985.

Ծանոթագրություն

1. Տես, Լենդրուշ Խուրշուդյան, Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 58-70:

2. Ժողովուրդների մշտական դատական ատյանի վճռի երկրորդ կետը Հայկական հարցը գրքում կամ միտումնավոր սխալ է թարգմանվել, կամ միտումնավոր սխալով է տպագրվել սխալ արտահայտելու համար արտահայտված մտքի բուն իմաստն ու բովանդակությունը: Уничтожение групп армянского населения посредством депортации и резни составляет преступление геноцида, которое не имеет срока давности по определению Конвенции о предупреждении преступления геноцида и наказания за него от 9 декабря 1948 г. թարգմանվել է այսպես. «Հայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը բռնավտարման և զանգվածային ջարդերի ճանապարհով հանդիսանում է ցեղասպանության հանցագործություն՝ ոչ ենթակա Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայի կարգադիր սահմանումների շրջանակներին»: Մինչդեռ պետք է լիներ հետևյալ կերպ. «Հայ ազգաբնակչության խմբերի բնաջնջումը բռնազաղթի և կոտորածի ճանապարհով հանդիսանում է ցեղասպանության հանցագործություն, որը չունի վաղեմության ժամկետ՝ ըստ Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայի սահմանման»:

ՀԱԱԳԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՔՆՆԵԼ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Այս մասին եզրակացություն է կազմվել ՀՀ արդարադատության նախարար Գևորգ Գանիելյանի և Երևանում գտնվող Հաագայի միջազգային դատարանի դատախազ Լուիս Մորենո-Օկամպոյի հանդիպման ընթացքում: Վերջինս նշել է, որ հարցի քննության համար պետք է հաշվի առնել նաև Հայաստանի ՄԳ-ի դիրքորոշումը Հռոմի դատական միտում ձեռք բերված համաձայնության վերաբերյալ: Գևորգ Գանիելյանն իր հերթին շեշտել է, որ «Ցեղասպանության ճանաչումն առաջին հերթին անհրաժեշտ է Թուրքիային»: /www.azg.am/ 08.04.2010 թ.



ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տեղասպանությունն էթնիկական կամ կրոնական խմբի ոչ միայն ֆիզիկական, այլև նրա ազգային ու հոգևոր մշակույթի ոչնչացումն է:

Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում կերտել է մշակույթի բազմաբնույթ ու մեծաքանակ կոթողներ: Դրանց հիմնական մասը գտնվում է հայերի պատմական բնօրրան Հայաստանի տարածքում: Մեծաթիվ են նաև հայկական գաղթավայրերում գտնվող հուշարձանները:

Պատմական հայտնի իրադարձությունների բերումով ներկայիս Հայաստանի Հանրապետությունն իր սահմաններում ներառում է պատմական Հայաստանի տարածքի շուրջ 1/8 մասը, իսկ մնացածը հարևան պետությունների կազմում է: Այդ իսկ պատճառով հայկական պատմական հուշարձանների մեծագույն մասը ևս գտնվում է ներկայիս Հայաստանի սահմաններից դուրս: Հայաստանի հարևան պետությունները (Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան, Իրան) հայկական պատմական հուշարձանների պահպանության հարցում դրսևորել են տարբեր մոտեցումներ:



Մշո Աք. Վարապետ 4-18-դդ դդ.

Թուրքիայում և Ադրբեջանում տասնամյակներ շարունակ և առ այսօր շարունակվող հայկական պատմական հուշարձանների համատարած ոչնչացման կամ յուրացման պետական քաղաքականության արդյունքում անվերադարձ կորստյան են մատնվել համամարդկային արժեք ունեցող հազարավոր բազմադարյան հուշարձաններ (վանական համալիրներ, եկեղեցիներ, խաչքարեր ու տապանաքարեր, հայերեն վիճագրեր և այլն): Ցավոք, պետք է արձանագրել, որ վերջին տարիներին առանց այդ էլ անմխիթար վիճակում գտնվող հայկական պատմական հուշարձանները **Վրաստանի** տարածքում ևս ենթարկվում են անմախաղեպ ավերման և յուրացման: Ուշագրավ է, որ ջարդարարությանն առավել ենթակա են հատկապես այն հուշարձանները, որոնք փաստում են հայերի ներկայությունն իրենց պատմական հայրենիքում: Ոչնչացվող հուշարձանների շարքում առաջին տեղում են քրիստոնեական մշակույթի ակնհայտ շերտ հանդիսացող հայերեն արձանագրություններն ու խաչքարերը, ապա վանքերն ու եկեղեցիները, մինչդեռ հայկական կամուրջներն ու բերդերը, աղբյուրներն ու բնակելի կամ հասարակական կառույցները գրեթե նույնությամբ պահպանվել են, քանի որ, թուրքերի կարծիքով, դրանք յուրացնելն ու աշխարհին թուրքական ներկայացնելը դժվար գործ էր:

Վերջին տարիների ցավալի նմուշներից է Ադրբեջանի հանրապետության կազմի մեջ մտնող Նախիջևանում գտնվող Ջուղա քաղաքի դարավոր գերեզմանատան 4000-ից ավելի անկրկնելի գեղարվեստական և պատմական արժեք ներկայացնող խաչքարերի միտումնավոր ոչնչացումը, որը ոչնչով չէր տարբերվում Աֆղանստանի Բամիան քաղաքում Թալիբանի իրագործած Բուդդաների ժայռակերտ արձանների ջարդարարությունից:

Որևէ ժողովրդի քաղաքակրթության ոչնչացումը դա-

տապարտելի է և միանգամայն անհարիր ու անթույլատրելի միջազգային կազմակերպությունների, ինչպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ԻԿՈՄՈՍ-ի անդամ և եվրոպական ընտանիքի մաս կազմելուն հավակնող պետության համար:

Թուրքիան դեռևս շարունակում է հերքել 1894-1896 թթ., 1909 թ., և 1915-1923 թթ. պետականորեն ծրագրված ցեղասպանությունը և աշխատում հայկական հուշարձանների ոչնչացմամբ քողարկել հայ ժողովրդի և պետության գոյությունն իր արևելյան տարածքներում:

Հայկական մշակույթը համաշխարհային քաղաքակրթության մաս է կազմում, և հայկական քրիստոնեական ճարտարապետության պահպանումը միջազգային հասարակության կարևորագույն խնդիրներից է:

Անառարկելի փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի հանդեպ գործադրված զանգվածային կոտորածների տարիներին երիտթուրքերի կառավարությունը ձգտում էր ոչնչացնել հայկական քաղաքակրթության ամեն մի նշույլ: 1912-1913 թթ. թուրքական կառավարության ներքին գործերի նախարարության հանձնարարությամբ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանը կազմել էր կայսրության տարածքում գտնվող հայկական գործող վանքերի և եկեղեցիների ցուցակը: Համաձայն Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կազմած վիճակագրության 1912 թ. Արևմտյան Հայաստանում գործող հայկական վանքերի և եկեղեցիների թիվը հասնում էր 2200-ի: Այս կառույցներից շուրջ



Մշո Աք. Վարապետ՝ 1972 թ.

2150-ը եղեռնի տարիներին թալանվել ու հրկիզվել են: Այդպիսով, իր բնօրրանում մի ամբողջ ժողովրդի հազարամյակների ընթացքում ստեղծած քաղաքակրթության բազմաթիվ հուշարձաններ ոչնչացվեցին: Այդ գործողությունների կանխանատված ձևն ու չափերը հաստատում են թուրքական կառավարության ծրագրած եղեռնը հայ մշակույթի հանդեպ:

Հանրապետական Թուրքիան չի ընդունել և շարունակում է ժխտել հայերի ցեղասպանության փաստը: Դեռ ավելին, ժամանակակից Թուրքիայում ցեղասպանության ժխտումը դարձել է պետական քաղաքականություն: Այդ նպատակով ստեղծված և կառավարությունից օժանդակվող հատուկ կազմակերպությունները զբաղվում են հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող բազմաթիվ գրքերի հրատարակությամբ և տարածմամբ: Թուրքերին են վերագրվում հայերի հոգևոր և մշակութային արժեքները, միտումնավոր ոչնչացվում են հուշարձանները, խտրական վերաբերմունքի են արժանանում հայկական կրթական հաստատությունները թուրքափայ փոքրաթիվ գաղութներում: Հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի վրա ծրագրված հարձակումը երկու գլխավոր նպատակ ունի.

1. Ապացուցել, որ Արևմտյան Հայաստանը երբեք հայերի բնօրրանը չի եղել:
 2. Թուրքիայում հայերի ցեղասպանություն տեղի չի ունեցել:
- 1928 թ-ից Թուրքիայում սկսվել է հայկական տեղա-



նուններն անվանափոխելու գործը: Այդ նպատակով թուրքական կառավարությունը հաճախ մի քանի անգամ փոփոխել է բնակավայրերի, գետերի և լեռների անունները: Վասպուրականում Մոկս ավանը դարձել է Մյուկյուս, ապա՝ Բախչիսարայ և Յուլսեյնիյե, Բերդաղը՝ Դինլենջե, Անձավը՝ Գյորուշլու, Սևանը՝ Օրթաջա, Արենը՝ Գյուլդուզլու, Յաճընը՝ Սալիմբեյլի: Ախթամարն ու Անին հայկական միակ հնություններն են, որոնք հիշատակվում են զբոսաշրջիկների ուղեցույցներում, այն էլ՝ թուրքացված ձևով, առանց նշելու դրանց հայկական ծագումը: Ախթամարը դարձել է Ակդամար (սպիտակ երակ), Անին՝ Անը (հուշ), իսկ Արարատ լեռը՝ Ադրըդաղ:



Տեկոր, լուսանկարը՝ 1911 թ.

1974 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն՝ 1915 թ-ից հետո կանգուն մնացած 913 շինություններից 464-ը լիովին ոչնչացվել է, 252-ը՝ վերածվել փլատակների, իսկ 197-ը՝ վերականգնման լուրջ կարիք ուներ: Հակառակ թուրքիայում ընդունված պատմական հուշարձանների պահպանության ու վերականգնման օրենքի գոյության, մինչև վերջերս ոչ մի հուշարձան չի վերականգնվել: Ներկայումս ավելի նենգափոխման ծրագիր իրականացնելով՝ սկսվել են Անիի պարիսպների «վերականգնման» աշխատանքները: Հայկական ճարտարապետական հուշարձանները հետևողականորեն պայթեցվում են, թիրախ են դառնում զինավարժությունների ժամանակ, դրանց սրբատաշ քարերն օգտագործվում են որպես շինանյութ, իսկ դեռ կանգուն մնացածները ծառայում են որպես զոն, պահեստ, նույնիսկ բանտ, որոշ դեպքերում նաև վերածվում մզկիթի կամ էլ հայտարարվում «սելջուկյան ճարտարապետության» նմուշներ:



Տեկոր, լուսանկարը՝ 2000 թ.

Հայկական եկեղեցիների ավերումը թուրքական իշխանությունները հաճախ պատճառաբանում են այս գոտում տեղի ունեցող երկրաշարժերով: Սակայն ինչպե՞ս են երկրաշարժերը ընտրություն կատարում միևնույն ժամանակամիջոցում սելջուկյան ոչ մի հուշարձան չավերելով:

Տարիներ շարունակ թուրքիայի լրատվամիջոցները տարածում են, թե իբր հարուստ հայերը նախքան երկրից «հեռանալը», իրենց ոսկիները թաքցրել են այն քարերի տակ, որոնց վրա առկա են «անհավատների» գրություններ և կամ խաչի քանդակ: Ոսկի զտնելու մարմաշով տարված ժողովուրդը քանդում է այն ամենը, ինչը հայկականություն է հուշում:

1965 թ. Քեբան ջրամբարի կառուցման ժամանակ, արհեստական լիճը սպառնալիք էր դարձել մի շարք պատմական հուշարձանների համար, և առաջ եկավ դրանք փրկելու խնդիրը: Առանձնապես կարևոր էին հինգ հուշարձաններ՝ 2 մզկիթները, 3 եկեղեցիները, որոնցից մեկում X դարի բացառիկ որմնանկարներ կային: Փրկարար գործողու-

թյունների շնորհիվ 2 մզկիթները քար առ քար տեղափոխվեցին նոր վայր, իսկ հայկական եկեղեցիները բացարձակապես անուշադրության մատնվեցին, չնայած դրանք այդ հուշարձաններից ամենահինն էին:

V դարում կառուցված Տեկորի եկեղեցին, որը կանգուն էր մինչ 1956 թ., թիրախ էր դարձել թուրքական բանակի հրետանային վարժությունների ժամանակ:

VII դարի հայկական Ծփնի գյուղի նույնանուն եկեղեցին վերանվանվել է Ջիբնի և վերածվել մզկիթի:

Բարդուղիմեոս Առաքյալի վանքը, որը կառուցվել էր իր նահատակության վայրում՝ Վասպուրական նահանգի Աղբակ գավառում ու համարվում էր հայ ժողովրդի և առհասարակ քրիստոնյա աշխարհի կարևորագույն սրբավայրերից մեկը, պայթեցվել է:

Սբ. Կարապետի վանքը թալանվել ու մասամբ ավերվել է 1915 թ., իսկ 1960-ական թթ. բանակի հրետանային զինավարժությունների արդյունքում վերածվել է քարակույտի, որը հետագայում օգտագործվել է նույն տարածքում գյուղ հիմնադրելու ժամանակ:

1915 թ. մեծ ավերածուծությունների է ենթարկվել Վարագավանքը, համալիրի մի մասն էլ գործածվել է որպես շտեմարան և զոն: 1998 թ., նույն տեղում, վանքի քարերով կառուցվել է մզկիթ:

X-XII դդ. կառուցված Խծկոնքի վանքի 5 եկեղեցիներից ներկայումս «հրաշքով» կանգուն է մնացել միայն Սբ. Սարգիս եկեղեցին, չնայած 6 տեղից եկեղեցու պատերը քանդելով մեծ բացվածքներ են առաջացրել:

1973 թ. Բիթլիսի թուրքական հոգևոր դպրոցի մոտ թափված հայերեն վիմագրերով բազմաթիվ քարաքեկորները «շինանյութ» են դարձել մզկիթի վերանորոգման համար:

Կիպրոսի բռնագրաված տարածքում, Նիկոսիայից 30 կմ հյուսիս-արևելք գտնվող Սբ. Մակարի վանքը 1997 թ. թալանվել ու ամբողջովին ավերվել է:

Կարսի Սբ. Առաքելոց եկեղեցին 1998 թ. վերածվել է մզկիթի:

Այսօր թուրքիան ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ է, սակայն բազում փաստերը վկայում են, որ ժամանակակից թուրքիան շարունակում է հայ ժողովրդի պատմության ու մշակույթի ջարդը:

ՍԱՍՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հուշարձանագետ

Արեւմտյան Հայաստանը դատարկվում է

Թուրքիայում ներքին գաղթը հասել է ահռելի չափերի: Միայն 2009 թ. երկրի արեւելյան եւ հարավարեւելյան շրջաններից դեպի արեւմտյան շրջաններ է տեղափոխվել 5.5 միլիոն մարդ:

CNNTurk-ի փոխանցմամբ՝ այս մասին է հայտարարել Դիարբեքիրի Դիջլե համալսարանի գրականության ֆակուլտետի սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ Ռ-յուսեփ Էրքանը:

Թուրք փորձագետի խոսքով՝ արեւելյան շրջանների բնակչությունը հիմնականում գաղթում է Մարդինից, Շանլուրֆայից, Վանից եւ Ադրբից՝ բնակություն հաստատելով Ստամբուլում, Անկարայում, Իզմիրում, Ադանայում, Մերսինում, Քոջանիլիում, Բուրսայում եւ Մանիսայում:

Ըստ Ռ-յուսեփ Էրքանի՝ Թուրքիայի արեւելյան շրջաններից տեղափոխությունների գլխավոր պատճառներն են գործազրկությունը եւ ցածր կենսամակարդակը: /www.hhpress.am/ 25.03.2010 թ.



ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ



Անդրկովկասում ազգամիջյան հակամարտությունների և լարվածությունների տարաբնույթ պատճառների համալիրում միշտ առաջնային են համարվել հողային և տարածքային հարցերը: Այս պարագան ամենևին էլ զարմանալի չէ. Կովկասում ազգային և հողային հարցերը, որպես կանոն, գրեթե միշտ նույնացվել են: Պատահական չէ, որ անդրկովկասյան ժողովուրդների համակեցությունը հասկանալի պատճառներով միշտ խաթարվել է վիճելի հողային տարածքների պատճառով:

Ցարական տիրապետության ժամանակ անդրկովկասյան նահանգների տարբեր շրջանների միջև հողային վեճերի արդարացի լուծման և արմատական կարգավորման մասին, բնականաբար, խոսք չի եղել չէր կարող, ավելին՝ ցարիզմը շահագրգռված էր այդ հակասությունների պահպանմանը և խորացմանը:

1917 թ. հետո, ստեղծված վարչա-քաղաքական նոր իրականության պայմաններում, սկսած Անդրկովկասյան կոմիսարիատից, ավարտած անկախ հանրապետությունների գոյությամբ, վիճելի հողատարածությունների խնդիրը, չնայած կարգավորման որոշակի փորձերի, ոչ միայն չլուծվեց, այլև առավել սրվեց ու բարդացավ: Փաստորեն, այդ ժամանակաշրջանում կենցաղային հող ունեցող նախկին վեճերը հասունացան՝ երբեմն վերածելով ռազմա-քաղաքական սուր առճակատման: Դրանից տուժում էին Անդրկովկասի ժողովուրդների խաղաղ համագոյակցության ուղղությամբ տարվող աշխատանքները: Հատկապես, վտանգվեց հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և տարածքային ամբողջականությունը: Դրա ցայտուն օրինակներն են Լոռու համար մղված հայ-վրացական և Ղարաբաղ-Չանգեզուր-Նախիջևանի շուրջ մղված հայ-ադրբեջանական պատերազմները:

1920-1921 թթ. Անդրկովկասի հանրապետությունների խորհրդայնացումը վերոշարադրյալ խնդիրների կարգավորման ուղղությամբ առաջին հայացքից իրականանալի հույսեր ներշնչեց: Այս կապակցությամբ, առաջին հերթին, կարևորվում էր Անդրֆեդերացիայի ստեղծումը, նրա դերը: ԽՍՀՄ մաս կազմելով Անդրկովկասն ապահովում էր իր արտաքին անվտանգությունը և արդեն կարող էր հիմնավորապես զբաղվել ներքին խնդիրների կարգավորմամբ, որոնցից ամենից նուրբը և բարդը, բնականաբար, նոր խորհրդայնացված հանրապետությունների միջև տարածքային վեճերն էին:

Հարկ ենք համարում նշել, որ խորհրդային պատմագիտության մեջ տարածքային վեճերի խնդիրը ոչ միայն ուսումնասիրված չէ, այլև, հասկանալի պատճառներով, գրեթե անտեսված է: Սակավ բացառություններից է Ս. Խարամանյանի աշխատությունը, որտեղ, սակայն, խնդրի նկատմամբ համապարփակ մոտեցում չկա, և քննարկված

են միայն առանձին հարցեր: Մինչդեռ խնդիրը պատմագիտականից բացի ունի նաև որոշակի արդիական գործնական նշանակություն՝ նկատի ունենալով տարածաշրջանում ձևավորված ներկա ռազմա-քաղաքական իրավիճակն ու համապատկերը:

Անդրֆեդերացիայի ստեղծմամբ երեք հարևան հանրապետություններն ընդհանուր վարչա-քաղաքական միավորի մեջ ներառելը, կուսակցական ու գաղափարախոսական առումով միասնական հայեցակարգի առկայությունը կարծես թե «եղբայրական» դաշնության շրջանակներում այլևս չպետք է խոչընդոտներ առաջացնեին, և ցանկացած վեճ պետք է կարգավորվեր խորհրդային արդարադատության նորմերին համապատասխան: Այդ էր հավաստում Անդրկովկասի խորհրդային ղեկավարությունը ինչպես ֆեդերատիվ, այնպես էլ հանրապետական մակարդակով՝ միշտ անթաքույց կերպով հպարտանալով, որ, ի տարբերություն 1918-1920 թվականների, իրենք նպատակադրվել են ազգային, հողային, տարածքային կարևոր խնդիրները կարգավորել այնպես, որ դրանք արդարության գերակա սկզբունքի հիմամբ լուծվեն մեկընդմիջտ:

Անդրկովկասում հողային վեճերն իրենց կառուցվածքային ու էթնիկական հատկանիշներով բազմաբնույթ էին և ոչ միանշանակ: Ըստ ծագման աղբյուրի կամ կողմերի՝ դրանք կարելի է տարբաժանել հայ-վրացականի, հայ-ադրբեջանականի և վրաց-ադրբեջանականի: Չնայած այս խայտաբղետությանը՝ տարածքային վեճերի ամբողջության մեջ խնդրո առարկա հանդիսացող տարածքների մասշտաբով, սրվածությամբ և բարդությամբ առանձնանում էին նախ՝ հայ-ադրբեջանական (ինչպես ժամանակի պաշտոնական փաստաթղթերում երբեմն նշվում էր՝ հայ-թաթարական), ապա՝ հայ-վրացական վեճերը: Ընդամին՝ քաղաքականից զատ դրանք ունեին նաև պատմական հիմք և անցյալ, ինչը նվազ կարևոր դեր չէր խաղում վեճերի բորբոքման կամ կարգավորման գործընթացում: Այսուհանդերձ, ամենևին չենք կամենում նսեմացնել կամ թերագնահատել վրաց-ադրբեջանական տարածքային վեճերի պարագան, պարզապես, հիմնախնդրի ամբողջ համակարգում այն նշանակալից և տեսանելի դեր չէր խաղում:

Բնավ պատահական չէր, որ Անդրկովկասյան հանրապետություններից ամեն մեկը յուրովի էր մոտենում խնդրին ու ձգտում հնարավորության սահմաններում բավարարել սեփական շահերը: Այդ հանգամանքը մեկ անգամ ևս վկայում էր, որ գոյություն ունեցող հակասությունների պարագայում ընդհանրապես խոսել խորհրդային հանրապետությունների շահերի ու նպատակների միանմանության և ընդհանրության մասին՝ իրականությանը չի համապատասխանում:

Ներքին սահմանների որոշման համար ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոն 1921 թ. մայիսի 2-ին Անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչներից հանձնաժողով ստեղծեց, որի նախագահը Ս. Կիրովն էր: Սակայն, նշված ժամկետում հանձնաժողովն ի զորու չէր կարող լուծելու իր առջև դրված խնդիրը: Այդպիսի կարևոր հարցերի նկատմամբ ցուցաբերվող շտապողականությունը, անշուշտ, վկայում էր նաև ոչ լուրջ մոտեցման և հապշտապ լուծումներ տալու ցանկության մասին: Ավելորդ չէ նշել, որ հիշյալ հանձնաժողովում գերակշռում էին ադրբեջանցիները (3) և վրացիները (2): Միակ հայը Ա. Բեկզադյանն էր, որ այդ պաշտոնում նշանակվել էր ՀԿ(բ)Կ կենտկոմի կողմից: Վերջինս համանման առաքելությամբ ներկայացուցիչներ էր ուղարկել Չանգեզուր՝ Բ. Հարությունյանին և Ի. Դովլաթյանին:

Ս. Կիրովի գլխավորած վերոհիշյալ հանձնաժողովը



1921 թ. հունիսի 25-26-ը կայացած նիստերում փորձեց վերջնական լուծում տալ վեճերին: Ա. Բեկզադյանը, ներկայացնելով Հայաստանի կորուստներն ու ծանր քաղաքական-տնտեսական վիճակը, «հանուն ընդհանուր համերաշխության» Վրաստանին և Ադրբեջանին առաջարկում էր որոշակի տարածքային զիջումներ կատարել Հայաստանին Ախալքալաքի գավառ, Շուլավեր, Լոռի, Լեռնային Ղարաբաղ: Սակայն վրացիները դեմ էին նույնիսկ Լոռու «Չեզոք գոտին» տալուն, իսկ ադրբեջանցիները լսել անգամ չէին ուզում Ղարաբաղի զիջման մասին:

Վրացիների այն պնդումից հետո, թե Լոռին հանդիսանում է զուտ վրացական տարածք, Ա. Բեկզադյանը հրաժարվում է հանձնաժողովի աշխատանքներին մասնակցել: Վրացական և ադրբեջանական կողմերի անզիջողականության հետևանքով հանձնաժողովի աշխատանքը ծախողվում է, և խնդրի լուծումը հանձնվում է Կովկասյան բյուրոյին: Ադրբեջանի ներկայացուցիչ Հունեյնովը, Նարիմանովին տեղյակ պահելով հանձնաժողովի աշխատանքի մասին, հատկապես ընդգծում էր «Չեզոք գոտու» հարցի «չատ խրթին» լինելը:

ՀԿ(Բ)Կ Դիլիջանի բյուրոն և հեղկոմը Կովկասյան բյուրոյին և ՀԿ(Բ)Կ կենտկոմին ուղղված նամակում իրենց հերթին հիմնավորված դնում էին Լոռին Հայաստանին միացնելու, ինչպես նաև Ղարաքիլիսա-Սադախլու երկաթգիծը Հայաստանի տարածքում պահպանելու անհրաժեշտության հարցը:

Այս հարցերը Ստալինի մասնակցությամբ քննարկվեցին Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 7-ի նիստում: Որոշվեց «Չեզոք գոտին» ամբողջությամբ ընդգրկել Հայաստանի կազմում, իսկ Ախալքալաքը և Խրամի շրջանը Հայաստանին միացնելու հարցը փոխադրել ՎԿ(Բ)Կ կենտկոմ՝ քննարկման:

1921 թ. նոյեմբերի սկզբին պայմանագիր կնքվեց ՎԽՍՀ-ի և ԱԽՍՀ-ի միջև, նոյեմբերի 6-ին ՀԽՍՀ-ի և ՎԽՍՀ-ի միջև: Մեզ առանձնապես հետաքրքրում է վերջինը: Այն ստորագրել էին Հայաստանի կողմից՝ Ա. Մյասնիկյանը, Վրաստանի կողմից՝ Պ. Մոխրամանովը: Համաձայն այդ պայմանագրի՝ Վրաստանի կազմ էին մնում 8 գյուղեր, որոնց թվում՝ Աղբյուրի, Օփրեթը, Խոժոռնին, Բրդաձորը և Սադախլուն: Հայաստանի կազմում ամրագրվեց դեռևս հուլիսի 25-ին Ս. Տեր-Գաբրիելյանին գրած նամակում Մյասնիկյանի նշած Լոռու տարածքը՝ «այսպես կոչված անգլիական սահմաններում՝ Վորոնցովկայի, Պրիվոլնոյի, Տափաստանի, Ալավերդու շրջանի հետ»: Հայ-վրացական համաձայնագրով ընդունված սահմանագծի մասին Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը (ՆԳԺԿ) տեղեկացրեց Ջալալօղլիի գավառային հեղափոխական կոմիտեի (գավիտեկոմ) նախագահին: Հիշյալ շրջանների ընդունման համար Հայաստանի կողմից ներկայացուցիչ նշանակվեց Լոռու գավիտեկոմի նախագահ Խ. Օհանջանյանը: Այդ մասին արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ա. Մռավյանը տեղեկացրեց վրացի իր պաշտոնակցին՝ Ա. Սվանիձեին: Միաժամանակ ՆԳԺԿ-ի կողմից ներկայացուցիչ էր նշանակվել գավառի զինկոմ Ստեփանյանը: Չնայած համաձայնագրի կնքմանը՝ վրացական իշխանություններն ամենևին չէին շտապում Հայաստանին հանձնել Վորոնցովկայի և Պրիվոլնոյի շրջանները՝ ըստ հնարավորի խոչընդոտելով դրա իրականացմանը: Եվ միայն Հայաստանի արտգործոժողովում Ա. Մռավյանի վճռակառնության ու հետևողականության շնորհիվ Ղարաքիլիսայի և Ջալալօղլիի տեղական իշխանությունները 1922 թ. հունվարի 14-ին վերջապես կարողացան ՀԽՍՀ գերիշխանությունը հաստատել վերոհիշյալ շրջաններում: Մինչ այդ՝ հունվարի 4-ին, նախորդ՝ 1921 թ. նոյեմբերի 6-ի համաձայնագիրը լրացվել էր նոր որոշմամբ:

Ինչ վերաբերում է հայ-ադրբեջանական տարածքային

վեճերին, ապա այդ առումով խորհրդային և մուսաֆաթական Ադրբեջանի միջև եական տարբերություն չկար: Նպատակը մնացել էր նույնը՝ Հայաստանից գավառները հնարավոր է շատ տարածքներ, ինչին հասնելու համար միջոցների և մեթոդների հարցում խտրականություն չէր դրվում: Սակայն Ադրբեջանի տարածքային նկրտումներն առաջին հերթին ուղղված էին կարևոր հաղորդակցության ճանապարհների: Ինչ խոսք, այդ ամենը բացատրել սեփական ժողովրդի մեջ դարեր ի վեր արմատացած քրջվորական կյանքի սովորույթի պահպանմամբ կամ հողագործների ապահովմամբ՝ անհիմաստ է, քանզի Ադրբեջանին դա չէր մտապահում, այլ իր նվաճողական ծրագրերի իրականացումը՝ այս անգամ արդեն խորհրդային շղարշով սքողված:

Սկսած 1921 թվականից Հայաստանը և Ադրբեջանը ունեցել են վեճեր 61 սահմանային հատվածների վերաբերյալ, որոնց ընդգրկած տարածքը կազմել է 17.816 դեյալտին: Սահմանային 55 հատվածների առնչությամբ Անդրկենտրոնական նախագահությունը հողային հանձնաժողովի ներկայացմամբ արդեն 1929 թ. ընդունել է համապատասխան որոշումներ, որոնց համաձայն՝ 3.754 դեյալտին անցել էր ԱԽՍՀ-ին, 1.061 դեյալտին՝ ՀԽՍՀ-ին: Ակնհայտ է, որ ադրբեջանցիները տիրացել էին ավելի քան 3 անգամ մեծ հողատարածքների:

35.913 դեյալտին ընդգրկող տարածքի շուրջ վեճերը Հայաստանի և Նախիջևանի միջև 1929 թ. դեռևս չէին լուծվել: Նույնն էր պատկերը նաև Հայաստան-Վրաստան 21.000 դեյալտին հողատարածքի շուրջ տարվող վեճում: Վրաստան - Ադրբեջան վեճն ընթանում էր 122.230 դեյալտին հողատարածքների շուրջ, որից 64.337 դեյալտին անցել էր Վրաստանին, 5158 դեյալտինը՝ Ադրբեջանին:

Այդ տարիներին առանձնակի բարդություն էին ներկայացնում դեռևս լուծման կարոտ վեճերը: Առավել սուր էր Դիլիջան-Ղազախ հատվածի Շինիխ-Այրումի շրջանի (15.659 դեյալտին տարածությամբ) պատկանելության հարցը: Նախնական համաձայնություն կնքվել էր դեռևս 1923 թ. ապրիլի 23-ին, սակայն, քանի որ բնականից սահմանագծում չէր կատարվել, խնդրի լուծումը մնացել էր առկախ: 1925 թ. շրջանը կրկին ուսումնասիրել էին հանձնաժողովի մասնագետները, որոնց նյութերի հիման վրա որոշում կայացնելու համար հրավիրված հողային հանձնաժողովի 1925 թ. դեկտեմբերի 10-ի, 12-ի և 25-ի նիստերին Ադրբեջանի ներկայացուցիչները չներկայացան: Վեճը կարծես պետք է լուծվեր հանձնաժողովի 1927 թ. հունվարի 11-ի նիստում, սակայն, փոխադարձ անհամաձայնության պատճառով այն կրկին լուծում չստացավ: Միայն 1929 թ. փետրվարի 18-ին Անդրկենտրոնական նախագահությունը 11.659 դեյալտին հանձնեց Ղազախի, 4000 դեյալտին Դիլիջանի գավառին: Ի դեպ, Բաշքենդին (Արծվաշեն) տրվեց մի ճանապարհ՝ Հայաստանի հետ կապ ունենալու համար, որը հետագայում ևս անցավ ԱԽՍՀ-ին:

Մյուս սահմանային վեճը վերաբերում էր Դարալագյազ-Քուրդիստան 12.000 դեյալտին հատվածին, որը գտնվում էր «Արագեյար» արոտավայրերի շրջանում: Այս հատվածն ամբողջությամբ 1929 թ. փետրվարի 2-ին հանձնվեց Ադրբեջանին:

Ջանգեզուր-Մեղրի-Ջերախլ հատվածում վեճի առարկա էր 16.000 դեյալտին հողատարածություն, որը Անդրկենտրոնականի 1929 թ. փետրվարի 18-ի որոշմամբ սովորականի պես հանձնվեց Ադրբեջանին:

Ադրբեջանին նման պարբերական նվիրատվություններից հետո Հայաստանին անցան միայն Նյուվադի, Էյնաձոր և Թուրգուտ գյուղերը:

Բորչալու-Լոռի-Փամբակի հատվածում տիրող վեճը վերաբերում էր Լոք-Լալվարի լեռնաշղթայի 21.000 դեյալտին տարածություններին: Ի դեպ, արժե հիշատակել, որ այս վե-



ճերը կարգավորել փորձող հանձնաժողովների կազմը շատ արագ էր փոփոխվում: Սկզբում այն գլխավորում էր Գ. Ստուրուան, ապա՝ Մ. Բաղիրովը, որին 1929 թ. փոխարինեց Ս. Յակուբովը: Ընդ որում՝ աշխատանքներն ավարտելու վերաբերյալ այդ հանձնաժողովին հատկացված ժամկետներն անընդհատ երկարաձգվում էին:

Յոգուտ Յայաստանի ընթացք չէր ստանում նաև գոյության ունեցող սահմանային վեճը Լենինական - Ախալքալաք հատվածում:

Բորչալու-Լոռի-Փամբակ հողային վեճին Անդրկենտրոնումը մանրամասնորեն անդրադարձավ 1929 թ. սեպտեմբերի 2-ին: Յայաստանի և Վրաստանի միջև հաստատվեց նոր սահմանագիծ, որով վիճելի համարվող տեղամասերի մեծ մասն անցավ Վրաստանի ենթակայության ներքո:

Բորչալու - Ղարաքիլիսա շրջանի վեճերը լուծող հանձնաժողովը Թողրիայի գլխավորությամբ 1933 թ. հունիսի 26-ին վերջնականապես որոշեց Չանախչի, Աղբյուրփի և Բողածոր գյուղերը հանձնել Վրաստանին: Յիշեցնենք, որ հայկական այս գյուղերը 1929 թվականին հանձնվել էին Յայաստանի ենթակայությանը: Վերոհիշյալ որոշումը հաստատվեց Անդրկենտրոնումի կողմից, ուր տնօրինում էր Ֆ. Մախարաձեն: Հանձնաժողովի որոշումը, որքան էլ տարօրինակ է, ստացավ նաև Յայաստանի կենտրոնումի հավանությունը: Վրացական կողմի պաշտպանության դիրքերում էր Անդրկովկասի հողժողովումստը: Լոռու անտառներից ապօրինաբար օգտվելու վրացիների ձգտումները խանգարել փորձող Ղարաքիլիսայի անտառտնտեսությանը հրահանգվեց ենթարկվել հիշյալ որոշումներին: Յայաստանի իշխանությունների թողտվությանը և «բարյացակամությանը» հակառակ՝ ակտիվ էր վրացական կողմը, որն ամենատարբեր հարցերի կապակցությամբ համապատասխան դիմումներ էր հղում ՎԽՍՀ կենտրոնումի նախագահի մակարդակով: Բազմաթիվ քննարկումներից հետո խնդիրը կարգավորվեց 1934 թ. օգոստոսի 14-ին, երբ հայկական կողմին տալով մի քանի փոքր խոտհարքներ՝ Անդրկենտրոնումի հանձնաժողովը «Վանքի թալա» կոչվող 100 հեկտար անտառամասը հանձնեց Վրաստանին: Վրացական իշխանությունները Աղբյուրփի, Չանախչի, Բողածոր գյուղերը շտապ կարգով կցեցին Օփրեթի և Խոժոռնիի կոլտնտեսություններին:

Ինչ խոսք, միանշանակ խոսել Յայաստանի ղեկավարության անվերապահ զիջողականության մասին՝ չի կարելի: Այսպես՝ դեռ 1925 թ. օգոստոսի 13-ին Անդրերկրկումի նախագահությունը, լսելով Ա. Երզնկյանի՝ Լոռի-Փամբակ-Բորչալու հատվածի վեճերի մասին գեկույցը, ՎԿ(Բ)Ա կենտրոնումի հանձնարարեց ընթացք տալ բարձրացված հարցերին: 1926 թ. մարտին Յայաստանի հողժողովումը սահմանամերձ անտառներից հայ գյուղացիների օգտվելու առթիվ հարց բարձրացրեց, որը, սակայն, Անդրկենտրոնումի նախագահության կողմից մերժվեց: Վերջինիս նախագահը Մ. Յխակայան էր:

Յայաստանի հողժողովումստի դիմում-բողոքները լավագույն դեպքում Յայաստանի շրջանակներից այն կողմ չէին անցնում:

Յարկ ենք համարում հիշատակել երկու ուշագրավ փաստաթղթի մասին ևս: Վրաստանի տիրապետության ներքո գտնվող Ջիլիգայի գյուղացիները 1924 թ. մարտին դիմել էին իշխանություններին Յայաստանին միանալու, կամ իրենց նախկին գյուղ տեղափոխելու խնդրով: Խնդիրը դրական լուծում չստացավ, Լոռի-Փամբակի գավառումի նախագահությունը 1924 թ. մարտի 26-ին մերժեց այդ դիմումը: (Ջիլիգան Յայաստանին անցավ հետագայում):

Առկա էր նաև հակառակ երևույթը: Այսպես՝ Լոռի-Փամբակի Ներքին և Վերին Քյորփիլու գյուղերի միջնորդել էին իրենց տարածքը Վրաստանի կազմում մտցնելու մասին:

Յայաստանի կենտրոնումի նախագահությունը 1926 թ. նոյեմբերի 3-ին Անդրկենտրոնումի խնդրեց հիշյալ միջնորդությունը չընդունել, քանզի այն հետևանք է հողային վեճերի: Վեճերի կարգավորումը հանձնարարվեց հողժողովումստին:

Յայ-վրացական սահմանային կնճիռը գնալով խորանում էր՝ ընդունելով մեծ չափեր, իսկ խնդրի լուծումն անընդհատ ձգձվում էր: Վեճի առարկան հիմնականում Լոք-Լավարի շրջանն էր: Ի դեպ, ուշագրավ է, որ այդ հարցում միջնորդ «դատավորի» պարտականությունները դրվեցին Բաղիրովի վրա: Քաշքշուկը շարունակվեց մինչև 1929 թ. աշուն: 1929 թ. սեպտեմբերի 2-ին Լոք-Լավարի և Լոռի-Բորչալու հատվածի հարցը «կարգավորվեց» Անդրկենտրոնումի նախագահության որոշումով:

Ջիլիգայի գյուղացիների՝ Չանախչի գաղթելուց հետո Գիլիկի 159 դեսյատին հատվածը թողնվեց Վրաստանին: Նման բախտի արժանացավ նաև Շահնագար հայկական գյուղի կողմից վիճարկվող 580 դեսյատին հատվածը: Վիճելի ընդհանուր հողերից հայերին տրվեց ընդամենը 70 դեսյատին հողատարածք: Փաստերը վկայում են, որ 1930-ական թվականներին Լոռու հայապատկան հողերի ճակատագիրը որոշող հանձնաժողովի ղեկավարներ Թողրիան, Դոգադովը, Բունիաթգադեն ամեն ինչ անում էին Յայաստանի շահերը ոտնահարելու համար: Յավակնությունները մեծանում էին, նկրտումները՝ դառնում անգուսպ: Յարևանի «եղբայրական» աչքից չէր վրիպել անգամ Ստեփանավանի շրջանում գտնվող Խոջարի նախկին կուսանոցի տարածքը, թեև այս հարցում վրացիները հանդիպեցին Յայաստանի իշխանությունների դիմադրությանը, որով վրացական ոտնձգություններին վերջ տրվեց:

Այսպիսով՝ հայ-վրացական սահմանային վեճերում վրացական կողմը ստանում էր Անդրկենտրոնումի աջակցությունը. նրան սատարում էին նաև Ադրբեջանի իշխանականները: Քոչվոր անասնապահների համար կենսական անհրաժեշտ տարածք ձեռք բերելու պատրվակով՝ նրանք պարզապես իրականացնում էին իրենց նվաճողական քաղաքականությունը՝ ձգտելով որքան հնարավոր է շատ տարածքներ կորզել Յայաստանից: Ավելին՝ ադրբեջանաբնակ այն գյուղերը, որոնք ինչ-ինչ պատճառներով նպատակահարմար էին գտնում միանալ Յայաստանին, խստագույնս հետապնդվում էին: Մասնավորապես, նման քայլեր ձեռնարկվեցին Չանգեթի շրջանում գտնվող 4 գյուղերի նկատմամբ, որոնք ձգտում էին միանալ Ղափանի շրջանին:

Որպես եզակի բացառություն՝ հայկական իշխանությունները երբեմն արգելում էին ադրբեջանցի քոչվորների մուտքը Յայաստանի արտավայրեր:

Այնուամենայնիվ, ինչպես վրացական պարագայում, գյուղերի մասշտաբով հայ-ադրբեջանական սահմանագծումը ևս հիմնականում հօգուտ հայերի չէր: Օրինակ՝ Ջիլիգի-Կոռնիձոր վեճում Անդրկենտրոնումի նախագահությունը 1927 թ. մարտի 31-ին առաջինին տվեց 117 դեսյատին, երկրորդին՝ 56 դեսյատին հող:

Խորհրդային Յայաստանից հողեր կորզելու քաղաքականության գագաթնակետը Անդրկենտրոնումի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստն էր, ուր վեճի առարկա հանդիսացող տարածքների գերակշիռ մասը հանձնվեց Ադրբեջանին:

Ինչ վերաբերում է Յայաստանին, ապա նրա իշխանությունների կողմից, որպես կանոն, ոչ միայն կտրուկ միջոցներ չէին ձեռնարկվում Ադրբեջանի հիրավի ծավալապաշտական նկրտումների դեմ, այլև նպաստավոր պայմաններ էին ստեղծվում, որ հեշտացվեր Ադրբեջանից եկող քոչվորների աշխատանքը: Յուրաքանչյուր տարի Յայաստանի քոչավայրեր բարձրացողների համար, անասունների փոխադրման համար նույնիսկ մնայուն ճանապարհներ էին



կառուցվում: Ավելին՝ աշխատանքները համակարգելու նպատակով հրավիրվում էին համատեղ խորհրդակցություններ քաղաքավորչական աշխատանքները կազմակերպելու համար: Մասնավորապես, այդպիսի միջոցառումներ իրականացվում էին Դիլիջանի և Ղազախի գավառական իշխանությունների կողմից: Հայաստանի կենտրոնական մի ճախագահությունը և ՀԿ(Բ)Կ կենտրոնը բազմիցս քննարկել էին քոչվորների և քոչավայրերի վիճակի բարելավման խնդիրները: Կենտրոնականին կից նույնիսկ ստեղծվել էր Յայլաղ կոմիտե՝ հողժողովոմի տեղակալի գլխավորությամբ: Այս մարմինն արդեն 1932 թ. մշակել էր մեծածավալ ծրագրեր, մանրամասն պլաններ՝ քոչվորների շրջանում կուլտուր-կրթական, բուժ-սանիտարական ընդարձակ աշխատանքներ կատարելու համար:

Այսպիսով Ադրբեջանից և Վրաստանից դեպի Հայաստանի արոտավայրեր բարձրացող հիմնականում ադրբեջանցի քոչվորներին կրթելու և բուժելու գործը հայկական կողմը վերցրել էր իր վրա՝ այդ նպատակով ծախսելով հսկայական գումարներ և պատրաստակամություն հայտնելով արոտավայրերում նույնիսկ կինոնկարներ ցուցադրել: Հիրավի, անասնապահությամբ զբաղվելու համար թուրք քոչվորներն այսօրինակ դրախտային պայմաններ նույնիսկ սեփական երկրում երազել չէին կարող:

Մինչդեռ Հայաստանի և հայ ժողովրդի հանդեպ նույն Վրաստանի և Ադրբեջանի ունեցած վերաբերմունքից կարելի էր միանշանակ եզրահանգել, որ, չնայած այդ երկու հանրապետություններին՝ խորհրդային և կոմունիստական լինելու հանգամանակին, իշխում էր նախկին կառավարիչների մենչևիկների և մուսաֆաթականների քաղաքականությունն ու գործելակերպը:

Այսպիսով Անդրֆեդերացիայի շրջանակներում խորհրդային Հայաստանի տարածքային և հողային վեճերը հիմնականում լուծվեցին հոգուտ «եղբայր» հարևանների՝ Վրաստանի և Ադրբեջանի, իսկ այդ պարագան չէր կարող կայունություն ստեղծել ազգամիջյան և միջպետական հարաբերություններում, ինչը հաստատեց պատմության հետագա ընթացքը:

Տարածքային հարցերը, բնականաբար, քննարկվում էին նաև արտասահմանյան հայ, վրացի, ադրբեջանցի վտարանդիների շրջաններում, մասնավորապես: «Հայրենիք» ամսագիրը հրատարակեց Ա. Արեղյանի «Մենք և մեր հարևանները» փաստառատ և հիմնավորված աշխատությունը, ամբողջությունը խարազանվեց «Յառաջ» թերթում հրատարակված մի շարք հոդվածներում: Ա. Արժրունին հոկտեմբերյան հեղափոխության 15-ամյակին նվիրված հոդվածում գրում էր. «Ներքին սահմանների հարցում խորհրդային կարգերի ժամանակ Հայաստանը մնաց իրավագուրկ վիճակում, նրա շահերը անտեսվեցին: Սահմանային անար-

դարությունները չվերացվեցին, և հայերով բնակեցված Ախալքալաքը, Ղարաբաղը, ինչպես նաև Նախիջևանը մնացին Վրաստանի և Ադրբեջանի բռնապետության տակ: Խորհրդային իշխանությունը ուշադրություն չդարձրեց Վրաստանի դեմ Ախալքալաքի 1925 թ. ապստամբությանը և հենց կոմունիստական կուսակցության ներսում եղած բողոքներին ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում: Ազգագրական, տնտեսական և ռազմական տեսակետով կենսական նշանակություն ունեցող այդ շրջանները մնում են Հայաստանից դուրս, և հույս չկա, որ խորհրդային իշխանությունը կկատարի Անդրկովկասի քարտեզի որևէ վերածնունդ»:

Կեղծելու դարավոր «ավանդույթին» հարազատ էին մուսաֆաթականները, թուրք-ադրբեջանցի քաղաքագետները: Բեռլինում հրատարակվող «Իստիկլյալ» («Անկախություն») թերթը 1932 թ. սեպտեմբերի 1-ի (թիվ 15) համարում հրատարակված «Ինչպես բաժանեցին Ադրբեջանը» հոդվածում, բողոքելով, թե «Ադրբեջանի հենց սրտում հայերի համար ստեղծվել է Ադրբեջանին հազիվ ենթարկվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը»՝ 4.161 քառակուսի կիլոմետր տարածքով և, 1926 թ. տվյալներով, 125 հազար բնակչությամբ, հեզում էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետության ղեկավար Արմենակ Ղարազյոզյանի և Ադրբեջանի ֆինանսների ժողկոմ Թեոդորոս Միրզաբեկյանի միջև ծագած վեճը՝ տարածքային հարցերի վերաբերյալ: «Այդ երկու հայերը որոշել են Հայաստանին միացնել Ադրբեջանի արևմտյան սահմանները, սակայն չեն համաձայնում տակտիկական մեկ հարցում: Միրզաբեկյանը պահանջում է, որ Ղարաբաղի հետ Հայաստանին միացվի նաև Գյանջան, իսկ Ղարազյոզյանը ցանկանում է առայժմ միացնել Ղարաբաղի ավտոնոմիան»:


Թուրք հրապարակախոսը հիշեցնում էր «կարմիրներին», որ Ադրբեջանը չի դառնա ոչ մի տերության կցորդ, «օկուպացիայի ու իմպերիալիզմի թատերաբեմ ոչ մի զավթողական ուժի համար»: «Ադրբեջանը համարվում է անբաժանելի ամբողջական օրգանիզմ», - գրում էր հոդվածագիրը՝ «ամբողջականի» մեջ մտցնելով նաև Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը, ներառելով Վրաստանում և Հայաստանում բնակվող ադրբեջանցիներին՝ նրանցով բնակեցված տարածքները ևս համարելով «ադրբեջանական»:

ԱՇՈՏ ՍԱՅՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Հեղինակի նյութը տողատակերով կարդացեք
«Ուխտ Արարատի» պարբերականի
կայքում՝ www.oukhtararati.com

ՅՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՈՎ - 85

Յուրի Գևորգի Բարսեղով (Բարսեղյան): Ծնվել է 1925 թվականին, Թիֆլիսում: Մահացել է 2009 թվականին, Մոսկվայում: Իրավաբան-միջազգայնագետ: Իրավաբանական գիտությունների դոկտոր: Միջազգային իրավունքի դոկտոր: Ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտը: 1962-68-ին և 1972-84-ին ՄԱԿ-ի քարտուղարությունում (Նյու Յորք) Գլխավոր քարտուղարի տեղակալի օգնականն էր հատուկ իրավաբանական հարցերի գծով: Յուրի Բարսեղովի գիտական աշխատությունները վերաբերում են միջազգային իրավունքի և դիվանագիտության պատմության հարցերին: Մեծ ճանաչում է գտել Բարսեղովի «Տերիտորիան միջազգային իրավունքում» (1958 թ. ռուսերեն) ուսումնասիրությունը, որ տեղ ցույց է տվել, որ ուրիշի հողերի գավթումը իրավաբանական վաղեմություն ունենալ չի կարող: Գրել է նաև աշխատություններ՝ նվիրված Հայաստանում միջազգային իրավական գաղափարների զարգացման, Լեռնային Ղարաբաղի հակամարտության և Հայոց ցեղասպանության դատապարտման խնդիրներին: Տես, Право на самоопределение- основа демократического решения меж-национальных проблем. К проблеме Нагорного Карабаха, Е., 1989. «Обязательная сила права на самоопределение и средства его обеспечения», 1993. (Հայկական Հարց Հանրագիտարան, էջ 78-79)



Պարբերականի այս համարում օգտագործված կոմպենցիաները վերցված են Յուրի Բարսեղովի հետևյալ աշխատությունից՝ Барсегов Ю. Г., Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, Сборник, т. 1, Москва, 2003.



ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՉՆՉԱՅՈՒՄ

Օսմանյան կայսրության ձևավորման և զարգացման պատմությունը սերտորեն կապված է նրա ռազմական կառույցի ձևավորման ու զարգացման հետ: Օսմանցի թուրքերը մշտական նվաճողական պատերազմներ էին վարում, սակայն սկզբնական շրջանում բավարար քանակությամբ ռազմական ուժ չունեին, քանզի փոքրամասնություն էին կազմում իրենց գրաված տարածքներում: Քրիստոնյա հպատակների ռազմական ուժը գործածելու և իրենց ռազմուժի շարունակ աճող կարիքները հոգալու նպատակով՝ սուլթանական իշխանությունները հպատակ քրիստոնյա բնակչության հանդեպ սկսեցին կիրառել մարդահարկ՝ դեվ-չիրմե (մանկահավաք, մանկաժողով): Բացի այդ ռազմագե-

ամիրայական տոհմը: Օսմանյան բանակի հիմնական մատակարարները հայ վաճառականներն էին, ովքեր դարեր շարունակ հոգում էին բանակի պետքերն ու պարենի պաշարների համալրումը: Տարբեր դարերի ընթացքում կայսրությանն իրենց ծառայություններն են մատուցել օսմանյան բանակի նշանավոր մատակարարներ Յոհաննես բեյ Խաճազադը, Աբրահամ չելեբի Ապրոտանը, Հաջի Օհան Եադ-ճեանը, Նորատունկեանները: Վերջիններս երկար տարիներ կրում էին էքմեքչի բաշիե տիտղոսը:

Հայերը երկրի տարբեր ոլորտներում ծառայելուց զատ բարձր պաշտոններ են զբաղեցրել նաև Ռազմական (Պատերազմի) և Նավատորմի նախարարություններում: Նրանցից շատեր ստացել են զինվորական բարձր կոչումներ: Իրենց մասնագիտական հմտությամբ առանձնացել են Յոսեփ Վարդանեանը (Վարդան փաշա), Ստեփան փաշա Ալլանեանը, Անտոն Եալեր փաշա Թընկերեանը: 1839 թ. նոյեմբերի 9-ին սուլթան Աբդուլ Մեջիդ I-ը Գյուլիսանեի արքայական պալատում հռչակեց օսմանյան բարենորոգումների առաջին հրովարտակը՝ Հաթթ-ը Շերիֆը, որը հայտնի է Թանզիմաթ անունով:



Կոչունք մը հայակեր ճիւղներուն, որոնք հայու քրտինքը կը լա- կեն որոճալով հայութեան մահից: 2. Սայիտ Հալիմ, 3. Ահմետ Բիզա, 4. Հիւսէյն ճահիտ, 5. Էնվեր, 6. Թալէաթ, 7. Բահմի, 8. Ճեմալ

րհմների հանդեպ կիրառվում էր նաև փենջեք կոչվող հարկատեսակը, որի միջոցով հպատակ ժողովուրդներից յուրաքանչյուր հինգ հոգուց մեկը հանձնվում էր Օսմանյան կայսրությանը՝ բանակի շարքերը համալրելու համար: Սուլթանական իշխանությունները պարբերաբար բռնությամբ հավաքագրում էին պնդակազմ ու առողջ մանկահասակ տղաների և պատանիների, որոնց, կրոնափոխ անելուց հետո, ուղարկում էին աջեմի (ամփոքր, օտար) գորսմիավորում: Այնտեղ նրանք ձեռք էին բերում ռազմական զինվորներ, փորձառություն, իսկ առավել ուժեղ և ռազմունակ երիտասարդներն ընդգրկվում էին ենիչերիական զորամիավորումում:

Ինքնավարությունների և թուրք բժիշկների սակավության պատճառով՝ Եվրոպայի համալսարաններում կրթություն ստացած հայ բժիշկները սկսեցին ծառայել Օսմանյան բանակում: 1841թ.-ից ոչ մահնեղականներին հնարավորություն տրվեց սովորել Կայսերական զինվորական բժշկական վարժարանում (այսուհետ՝ ԿԶԲՎ), որը հիմնադրվել էր 1838 թ. սուլթան Մահմուդ II-ի արքունի բժիշկ Սամունել Շաշեանի նախաձեռնությամբ: Հայ զինվորական բժիշկներից շատերը դասավանդել են ԿԶԲՎ-ում, նրանց նախաձեռնությամբ հիմնվել է Կայսերական բժշկական ընկերությունը: Հայ զինվորական բժիշկներից շատերը կայսրությանն իրենց մատուցած ծառայությունների համար արժանացել են փաշայի և բեյի տիտղոսների: Նրանցից էին Գաբրիել Փաշա Սևանը (1822-1900), ով օսմանյան ռազմածովային նավատորմի առաջին հայ զինվորական բժիշկն էր, Անտոն փաշա Նաֆիլեանը, Տիրան փաշա Փափագեանը, Արթին բեյ Տելեթեանը, Տիգրան փաշա Փափագեանը և այլոք:

Ենիչերիական զորագնդերը ստեղծվել են 1361-1363 թթ. սուլթան Մուրադ I-ի օրոք և հիմնականում կազմված են եղել բռնի մահնեղականացված քրիստոնյաներից: Հայ մանուկների բազմաթիվ սերունդներ, խլվելով իրենց ազգային միջավայրից, ծառայել են Օսմանյան պետության շահերին: Հայկական ծագում ունեցող ենիչերիների մեջ ի հայտ են եկել այնպիսի անհատականություններ, ովքեր իրենց քաջության և ընդունակությունների շնորհիվ կարողացել են բարձրագույն դիրքեր գրավել Օսմանյան ռազմական և վարչական համակարգում: Նրանցից էին նշանավոր ծովակալ Հալիլ փաշան, զորավար և պետական գործիչ Սուլեյման փաշա Էրմենին, Դամադ Աբրահամ փաշան և այլոք:

Զինվորական բժիշկներից բացի Օսմանյան բանակի տարբեր ստորաբաժանումներում սովոր քիվ են կազմել նաև հայ դեղագործներն ու անասնաբույժները: Թանգիմաթից հետո ևս Բարձր Դուռը հրաժարվեց քրիստոնյաներին համատարած զինվորագրելու գաղափարից և շարունակեց գանձել զինվորագրության հարկը՝ նախ իյանե-ի աքթերիե (օժանդակություն բանակին), ապա՝ բեղել-ի աքթերիե (զինվորագրության փոխարեն): Թեպետ, երբ Օսմանյան բանակը երկրի արևելյան նահանգներում պայքարում էր քուրդ ինքնիշխան ցեղապետերի դեմ, 1847 թ. հայերը կարճ ժամանակով զինվորական ծառայության կանչվեցին կառավարության կողմից:

Թեև շարիաթի սկզբունքներին դեմ էր անհավատների մուտքը «հավատքի բանակ», սակայն օսմանյան իշխանությունները, իրենց պետական շահերից ելնելով, հաճախ անտեսել են կրոնական նորմերը, քրիստոնյաներին գործածելով թուրքական բանակի տարբեր զորատեսակներում՝ յա-յա (հետևակ), լաղըմջը (խրամատ փորող), մեզարջը (զերեզմանափոր) և այլն: Հայերը, որպես վարձկաններ, ծառայել են նաև օսմանյան ռազմածովային նավատորմում:

1864 թ. քաղվեց Հարբեի Զինվորական Վարժարանը: Սուլթան Աբդուլ Ազիզի հրամանով հինգ հայ երիտասարդներ (Գաբրիել Էքնեան, Կարապետ Բարազամեան, Սիմոն Տատեան, Հովեան, Սիմարեան) ընդունվեցին վարժարան, սակայն նրանց չթույլատրվեց հարյուրապետից բարձ աստիճան ստանալ:

Դարեր շարունակ բանակին սպասարկող հայ արհեստավորների մեծ խումբ է եղել կայսրության ցամաքային ուժերում և ռազմածովային նավատորմում: Շատ բարձր է գնահատվել հատկապես հայ զինագործների, թամբագործների, դերձակների և այլ արհեստավորների դերը օսմանյան բանակում:

1908 թ. Սահմանադրության վերահռչակումից հետո հա-



յերը երկրի մյուս քրիստոնյաների հետ միասին Օսմանյան խորհրդարանում պահանջեցին զինվորագրվել և հավասար իրավունքով ծառայել Օսմանյան բանակում: 1910 թ. Օսմանյան խորհրդարանի կողմից ընդունված օրենքով երկրի բոլոր ազգերն ենթակա էին զինվորագրության: 1910 թ. օգոստոսին և սեպտեմբերին հրատարակված զորակոչի հրամանները հայ երիտասարդներն ընդունեցին մեծ ոգևորությամբ: Բազում հայ երիտասարդներ ընդունվեցին Զարբիեի վարժարան և ցուցաբերեցին իրենց կարողությունները զինվորական ասպարեզում: Շատերը ստացան զինվորական բարձր աստիճաններ: Հայ զինվորականները թե՛ Բալկանյան և թե՛ Առաջին աշխարհամարտի ժամանակ աչքի ընկան մարտունակությամբ և բազում քաջագործություններով:

1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին աշխարհամարտը: Օսմանյան բանակ զորակոչվեցին 18-45 տարեկան բոլոր տղամարդիկ, այդ թվում նաև շուրջ 60 հազար հայ տղամարդ, ովքեր միացան մինչև այդ արդեն Օսմանյան բանակում ծառայող հայ զինվորականությանը:

Չնայած բանակում հայ զինվորների համար ստեղծված ծանր պայմաններին՝ նրանք բարձր պատասխանատվությամբ հանձն առան կատարելու իրենց պարտականությունները: Հայ զինվորները Կարնո ճակատում գերի ընկնելու վտանգից փրկեցին Ռազմական նախարար Էնվեր փաշային, ով այդ առիթով զովեստի խոսք ու շնորհակալագիր հղեց Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին:

Սարիզամիչի տակ թուրքական բանակի ծանր պարտությունն առիթ հանդիսացավ հայ զինվորականներին մեղադրելու դավաճանության մեջ: 1915 թ. փետրվարի 12-ին նույն Էնվեր փաշայի հրամանով սկսվեց Օսմանյան բանակի հայ զինվորականության զինաթափումը, որից հետո նրանցից կազմվեցին ամելե թաբուրիները (բանվորական զուսարտակներ) և համալ թաբուրիները (բեռնափոխադրող զու-

սարտակներ): Նույն ժամանակ սկսվեց հայ սպաների մեկուսացումն ու ձերբակալությունները: Դրան հաջորդեց ռազմական նախարար Էնվերի՝ Օսմանյան բանակում ծառայող, հայ զինվորներին ոչնչացնելու մասին հրամանը: Ռազմաճակատում գտնվող հազարավոր հայ զինվորականներ և բանակի մատակարարներ թիկունքում անօրինակ դաժանությամբ սպանվեցին իրենց թուրք զինակիցների կողմից:

Պատերազմի առաջին օրերից զինվորական հիվանդանոցներում ծառայող հայ բժիշկներից շատերն ընկան պատերազմի դաշտում: Ոմանք մահացան իրենց պարտականությունները կատարելիս՝ բժավոր տիֆով վարակված թուրք զինվորներին խնամելու ժամանակ, իսկ շատերն էլ սպանվեցին պարզապես հայ լինելու համար: Ու եթե նրանց մի մասի կյանքն էլ խնայվեց, ապա դրա հիմնական պատճառը ռազմաճակատում թուրք բժիշկների պակասն էր:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տասնյակ հազարավոր հայ երիտասարդների զինվորագրումը և նրանց ծառայությունն Օսմանյան բանակում մեկ անգամ ևս ապացուցում է թուրքական ժխտողականության պնդումների սնանկությունը, թե իբր հայերը հարել են օտարերկրյա բանակներին՝ դրանով իսկ վտանգ ստեղծելով Օսմանյան բանակի թիկունքում:

Հայ զինվորականության զինաթափումն ու ոչնչացումը կայսրության հայ բնակչության դեմ իրագործված ցեղասպանության առաջին փուլը հանդիսացավ: Օսմանյան կառավարությունը, հետևողականորեն ոչնչացնելով արևմտահայության մարտունակ ուժերը, հնարավորություն ստացավ հեշտությամբ ու առանց լուրջ խոչընդոտների իրականացնել հայ բնակչության նախապես ծրագրված տեղահանությունն ու բնաջնջումը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՄԵՐՁՅԱՆ ԺԱՆՍԵՄ - 90

Ժանսեմը՝ Հովհաննես Սեմերջյանը, ծնվել է 1920-ի մարտի 9-ին Սելեզում (Թուրքիա): Երբ երկու տարեկան էր, հայրը վայրագ հարձակման գոհ է դառնում: Մայրը՝ Դեյր-Չորի փրկվածներից, որդու հետ մեկնում է Հունաստան: Հովհաննեսի վաղ մանկությունն անցել է Սալոնիկ քաղաքում: Երբ լրացավ նրա 12 տարին, նա ընտանիքի հետ տեղափոխվեց Ֆրանսիա և մշտական բնակություն հաստատեց Փարիզի Իսի-Լե-Մուլիկո հայաշատ արվարձանում:

Բնատուր տաղանդի տեր Հովհաննեսը մասնագիտացում է Փարիզի ակադեմիաներում: Ստեղծել է շուրջ 6 հազար գեղանկարչական ու գրաֆիկական գործեր: Նրա արվեստում գերիշխողը տխրաշունչ ու հուզառատ մթնոլորտն է, Մեծ Եղեռնի հոգեխռով ակնհայտը:

Ժանսեմն ունի համաշխարհային ճանաչում, արժանացել է բազում պարգևների, իսկ նրա գործերը մշտապես ցուցադրված են մի շարք երկրների (Հայաստան, Ֆրանսիա, Ճապոնիա, Ռուսաստան, Մեքսիկա և այլն) հանրաճանաչ ցուցասրահներում, իսկ Ազունիոյում (Ճապոնիա) գործում է նրա անվան թանգարան: Ժանսեմը միջազգային բարձր պարգևների, նաև «Պատվո լեգեոնի» արժանացած վրձնի վարպետ է:

Նկարիչն իր կտավներին լուծում է տալիս ոչ մեկին կրկնող, նրբագեղ գույների ներդաշնակումներով: Վարպետությամբ կատարյալ, զգայաթթոն ու երգող գծերը ընկալվում են իբրև պատկերի «մարմնի» արյունատար երակներ, իբրև ջութակի մեմբրանա: Արտահայտչական լեզվի այս ինքնատիպությունն է ժանսեմի ստեղծագործության բարձր գնահատման չափանիշը: Դրան զուգահեռ առիթնող է նաև ստեղծագործությունների իմաստային խորությունն ու խորհրդավորությունը: «Թափուր ջահերով», «Յլամարտ», «Դիմակահանդես», «Պար» հայտնի նկարաշարքերում, օրինակ, իրենց հոգնատանջ ու դրամատիկ վիճակների մեջ


Ժանսեմյան հերոսները չեն պարտադրում իրենց վիշտն ու մորմոքը: Նրանք ինքնամիտի են, ասես և՛ ապրում են և՛ չկան: Երևակայության ծնունդ ժանսեմի նկարները դիտողներաշխարհում պայծառանում են բանաստեղծության նման:

Մանկությունից սերող ժանսեմի սրտացավ ապրումները, անկասկած, ենթարկվելու էին բացահայտ դրսևորման: Եվ ահա, նոր դարի առաջին տարիներին ութսունը բոլորած նկարիչը ստեղծում է «Հայոց ցեղասպանություն» նկարաշարը: Իր հոգու հնչել դրոշմը կրող այդ չորս տասնյակ գործերը նա ցուցադրում է Փարիզում, ապա նվիրաբերում է Երևանի Հայոց ցեղասպանության թանգարանին, որոնք մշտական ցուցադրության են հանված այնտեղ: Հայաստանի ազգային պատկերասրահ հասան նաև ժանսեմի շուրջ 500 գունավոր սքանչելի լիտոգրաֆիաները:

Վերջերս մեր հանդիպման ժամանակ, վերհիշելով այդ նկարների վրա աշխատելիս ունեցած իր ապրումները, ժանսեմն ասաց. «Մահվան մղձավանջ կրած ժողովուրդը չի կրնար կորցնել իր հավատը, իր լեզուն, իր հոգևոր կյանքի ուղին: Մոռանալ Եղեռնը, կը նշանակե մոռանալ սեփական կենսագրությունը, կը նշանակե դադարի ազգ ըլլալ: Դժոխքով անցած Հայաստանը կյանքիս մաս կկազմե...»:

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ


Ժանսեմի գեղանկարները տեսնելու գունավոր էջում:





«ՆԱՅԵՐՈՒՆ ՔԱՐԱՅՐԸ»` ՇԵՂԵՎԻՏԵՆ

2008 թ. հրավիրված էի Լոս Անջելեսի Կալիֆոռնիա համալսարանում (UCLA) կազմակերպված «Մուսա լեռ, Քեսար, Դյորտոյոլ» միջազգային գիտաժողովին գեկուցելու: Ինչպես նախորդ ուղևորություններիս ընթացքում, այս անգամ ևս շարունակեցի ժողովրդագիտական պրպտումներս ԱՄՆ-ի հայ համայնքի շրջանում` համալրելու իմ տարաբնույթ գրառումները, որոնք համբերատար հետևողականությամբ կատարել եմ կյանքիս 55 տարիների ընթացքում, ինչպես Հայաստանի Հանրապետության շրջաններում, նույնպես և Սփյուռքի տարբեր հայաշատ կենտրոններում:



2008 թ. ապրիլի 24-ի տխուր օրն էր: Ես, ներքին հուզումս զսպելով, խնդրեցի հյուրընկալողներիցս ինձ հասցնել տեղի հեղինակավոր Ֆերահյան ազգային վարժարանը, որտեղից մեծ ավտոբուսները կազմակերպված կերպով մարդկանց փոխադրում էին Մոնթբելլո թաղամաս` Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին կառուցված հուշարձանի մոտ հարգանքի տուրք մատուցելու:

Ըստ իմ մասնագիտական հետաքրքրասիրության, ավտոբուսում կողքիս նստած մեծահասակ անձնավորությանը սկսեցի հարց ու փորձ անել: Պարզվեց, որ Մարտիրոս Աշուրյանը արմատներով գեթունցի է, ծնվել է 1927 թ. Հայկում: Լիբանանյան պատերազմի թոհ ու բոհի ժամանակ ընտանիքով գաղթել է ԱՄՆ և այժմ թոշակառու է:

Ահա թե ինչ պատմեց նա, որը հենց հուշարձանի մոտ ես գրի առա:

Ուրախալի է, որ հուզիչ ու տպավորիչ այս վկայությունն իր արժանի տեղը կգտնի 700 վկայություններ պարունակող իմ «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապորոզների վկայություններ» հրատարակության պատրաստ հայերեն և օտար լեզուներով հատորների մեջ:

«1915 թ. առաջին զաղթականության ժամանակ, Հայոց ցեղասպանությունն ողջ մնացածները ոտքով քալելով հասել էին Հայկեա և բնակություն հաստատել այնտեղ:

1948-ին ես աշխատում էի «Սիրիլըն Փեթրոյուն քոմիպանիին» մեջ, Փալմիրայի մոտ` Դալլահ անապատում փեթրոլի (նավթ - անգլ.) հոր կփորեցինք:

Հետո մեզ տարին Դաքքայի աջ կողմը դեպի Թըթմորի ճամփան, Դալլահ անունով դաշտ մը կար հոն, հոն ալ հոր փորեցինք: Հետո մեզ տարին Ջեզիրեի կողմը:

1950-ին հոն անգլիացիները քեմփի շինեցին, մեզ ալ հոն փոխադրեցին, դեպի Խաբուր գետի արևելյան կողմը 45-50 մայլ Իրաքի սահմանին մոտ` Ջեբել Սինջար չհասած: Ան Իրաքի մեջ է, մաս մըն ալ Սուրիո մեջ է: Մեր քեմփին անունը «Հունահուեզիե» էր: Ամեն օր կերթայինք հոն փեթրոլի հոր փորելու: Անգլիական «Ես Բի Սի ընկերությունը» մեզի լանչ ուտելիք ճաշ կբերեր: Մենք կուտեհինք, կկտանայինք, մնացածը հովիվ բեղվիներուն կկանչեինք, որ ուտեն: Ամոնք արաբ գնջուներ էին. Ջաբբուրի կըսեին աղ ցեղախմբին: Մենք իրենց լեզվով իրենց կկանչեինք. «Եաուել հենհեն հո` հո` (եկեք հոս)»:

Օր մը արաբ հովիվ մը եկավ, սկսավ ուտել մեր ձգած կերակուրը: Մենք ըսինք.

- Ո՛ր եմ քո ոչխարները:

- Հոս, շատ մոտ եմ, - ըսավ, - Ուարա Նուգրըք էլ Արման (Հայոց Փոս - արաբ.) ետևի կողմն եմ ոչխարներս:

Մենք հետաքրքրվեցինք, ըսինք. - Մեզի ցույց տուր աղ տեղը:

Ես ու ընկերս արաբին հետ գացինք, մոտավորապես մեկ մայլի չափ հեռու էր մեր աշխատած տեղից, Ջըսըր Շեղ-

դաղիե, Խաբուր գետին վրա, դեպի Իրաք տանող կամուրջին մոտ` Զիբիսի կըսեին, քանի որ ժամանակին գերմանացիները փորել էին, որ փեթրոլ հանեն, բայց երբ երկրորդ համաշխարհային պատերազմին Գերմանիան պարտվեց, անոնք, կիսատ ձգած, զնացել էին: Մենք շարունակեցինք անոնց կիսատ ձգած գործը:

Մենք երկու հոգով, ձեռքի լամպով, գացինք, տեսանք, որ քարայր է, մութ է: Ես հետս տոպրակ մը առած էի:

Արաբն ըսավ. «Մենք միշտ կմտանք աս քարայրը, ոսկի ապարանջան, ոսկի ակռաներ, ուրիշ զարդեր կգտնանք, դուրս կելլանք»:

Ուրեմն, մենք գացինք 50-60 մետր ավելի ներս, 10-15 մետր տրամագծով փոս մըն էր: Մեկ կողմը քարայր էր, դեպի Խաբուր գետի կողմը քարայրը կշարունակվեր:

Արաբը մեզ ըսավ. «Մոտ 40 հազար հայ Դեր Ջորեն հրաշքով փրկվածները, 70-80 մայլ քալեցնելով, չարչարելով, անապատի տաք ավազներուն վրա առանց ջուրի, հասցրել են մինչև հոս: Դեր Ջորեն վերջը 50-60 մայլ դեպի հյուսիս-արևելք անապատ է, ջուր չկա, ցանքս չկա: Աղ տեղերեն աղ խեղճերուն ոտքով քալեցնելով, ոսկրացած մարմիններով աղ հայերուն բերել են Ջըսըր Շեղդաղիե փոսին մեջ, որին մի կողմը քարայր կսկսվի, Խաբուր գետին քովը, դեպի հարավ-արևմտյան կողմը քարայրին ելքը Խաբուր գետին կմիանա աղ փոսին ծայրը»:

Աղ փոսը 7-8 մայլ երկարությամբ քարայր մըն էր: Աղ փոսին մեջ լցրել են ողջ-ողջ հայերուն: Աղ մեզի ուղեկցող բեղվինը ըսավ. «Ես հիմա 65 տարեկան եմ և լավ կիիշեմ իմ աչքերով տեսած, թե ինչպես թուրք զաբիթները մացառներ, ծառի ճյուղեր բերին, լցրեցին, կրակի տվին, «արբային էլֆ նաֆար» (40 հազար մարդ - արաբ.)»:


Մենք մեր ձեռքի լույսով և տոպրակով ներս մտանք: Մոտավորապես 200 ֆիթ (ոտնաչափ) ներս գացինք: Մեր ոտքերուն տակ ոտքի-ձեռքի ոսկորներ, գանգեր էին: Սկսանք ոսկորները հավաքել տոպրակին մեջ: Մեր թորչին (ձեռքի լամպ) լույսը պակսեցավ, չկրցանք ավելի առաջ երթալ և թոթալի (վերջնականապես) կորսնվեցանք խորրուբորդ, մութ, հազիվ խարխափելով, իյնալ-էլալով, վերջապես լույսի ճշույն մը երևաց: Ուրախացանք, որ Աստված պատիկ լույս մը ցուցուց և ան մեզի առաջնորդեց դեպի լույս աշխարհ: Ես «Հայր մեր» մը ըսի, խոշոր խաչ մը գծեցի քարայրին առաջը: Տոպրակով ոսկորը տարի անկողնիս տակը պահեցի: Ես ան ոսկորներով տոպրակը պետք է եկեղեցիին տայի: Բայց ան ժամանակ ջահել էի, չգիտեի` ինչ ընել, տարի, մեռած քրոջս գերեզմանին մեջ թաղեցի:

Վերջը, երբ Հայկեա գացի, պատմեցի Ձեթունխանի մեր շրջապատի մարդոց: Բոլորը լսեցին, մեկ մարդ մը ըսավ. «Ես աղ փոսի մեջի քարայրեն դուրս փախած եմ, դիակներուն տակեն դուրս ելած եմ, քանի որ անձրև եկած ջուրերը աղ փոսին մեջ լցված էին և կերթային Խաբուր գետը կթափվեին: Գաղթականության տառապանքեն վերջը հազիվ մենք, որ չոր-ոսկոր դարձած, անչափահաս պատիկներ էինք, որ հազիվ անոթի-ծարավ քալելով ողջ էինք մնացած, թուրքերը մեզ լեցուցին աղ քարայրին մեջ ու կրակի տվին...»:

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ



Հայերի ցեղասպանությունը, որպես մարդկության հանդեպ մեծագույն ոճրագործություն, լիովին հաստատված է աշխարհի տարբեր լեզուներով հրապարակված պաշտոնական փաստաթղթերով, ականատեսների վկայություններով:

Օսմանյան արյունալի վարչակարգը անտանելի է եղել ոչ միայն հայերի՝ այլ նաև մյուս ժողովուրդների համար: Հայերի նկատմամբ թուրքական կառավարողների իրագործած սպանությունները, հալածանքները, կողոպուտը և կրոնական անհանդուրժողականությունը իրականացվել են ավելի քան վեց դար:

Ինչ վերաբերվում է զանգվածային կոտորածներին, ցեղասպանությանը, դրանք իրագործվել են 1894-96 թթ. Հայկական Կիլիկիայում, 1909 թ.՝ Ադանայում, 1915-18 թթ.՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում, 1918-1920 թթ.՝ Արևելյան Հայաստանում:

Հայկական հարցի արդարացի լուծման, Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համար պատմական և իրավական հիմքեր են հանդիսանում Ռուսաստանի կողմից 1917 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունած «Թուրքահայաստանի» մասին դեկրետը և 1920 թվականի օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագիրը:

Ցեղասպանությունը մեծագույն հանցագործություն է մարդկության հանդեպ և դարերի պատմություն ունի: Մարդկային հասարակության գոյության ընթացքում բազմաթիվ ցեղեր ու ժողովուրդներ ենթարկվելով ցեղասպանության անհետացել են պատմության ասպարեզից, սակայն դա չի խանգարել, որ այդ ոճրագործությունը շարունակվի նաև քաղաքակրթության արդի ժամանակաշրջանում: Այդ առումով ցեղասպանությունը կանխելու և հանցագործներին պատժելու խնդիրը կենսական ու հրամայական անհրաժեշտություն է համայն մարդկության համար: Ելնելով դրանից՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1948 թվականի դեկտեմբերի 9-ին ընդունեց «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան: Դրանից քսան տարի անց՝ 1968 թ. նոյեմբերի 26-ին, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց «Պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկրառելու մասին» կոնվենցիան, որի առաջին հոդվածում նշված է. «Ոչ մի տեսակի վաղեմության ժամկետներ, անկախ նրանց իրականացման ժամանակից, չի կիրառվում... պատերազմի հանցագործությունների և մարդկության դեմ կատարված հանցագործությունների նկատմամբ»: Դա նշանակում է, որ ցեղասպանության կազմակերպիչներն ու իրագործողները պատասխանատվության են ենթարկվում նաև մինչ կոնվենցիայի ընդունման ժամանակում կատարած հանցագործության համար:

Ելնելով ՄԱԿ-ի կոնվենցիաներից և միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքներից՝ ներկայումս կարևոր խնդիր է համարվում ոչ միայն հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման, այլև դատապարտման հարցը:

Հարկ է նշել, որ հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման հարցը բարձրացվել է Հայոց Մեծ եղեռնի ամենածանր տարում՝ 1915 թվականին: Այդ ժամանակ հարցի առաջին նախաձեռնողը ցարական Ռուսաստանն էր, որի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազանովը 1915 թ. ապրիլի 12-ին հեռագրում է Փարիզում և Լոնդոնում ռուսական դեսպաններ Իզվոլսկուն և Բենեկեն-դորֆին հետևյալ տեքստով. «Նախարարությունում ստացվել են նոր տեղեկություններ Ասիական Թուրքիայում տիրող անիշխանության և թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածի մասին:

Բարեհաճեք ուղարկել ֆրանսիական (անգլիական) կառավարությանը մեզ և Անգլիայի (Ֆրանսիայի) հետ համա-

տեղ դիմում հրապարակել՝ ուղղված Բ. Դռանը, որի մեջ անձնական պատասխանատվությունը հայերի կոտորածի համար դրվի Թուրքիայի նախարարների խորհրդի բոլոր անդամների, ինչպես և՛ այդ իրադարձությունների հետ առնչվող բոլոր քաղաքացիական ու զինվորական պաշտոնատար անձանց վրա: Ֆրանսիական (անգլիական) կառավարության համաձայնության դեպքում բարեհաճեք պայմանավորվել դիմումի տեքստի կապակցությամբ, որը ցանկալի կլիներ որքան հնարավոր է շուտ հրապարակել երեք երկրներում էլ միևնույն օրը»:

Ռուսական դիվանագիտական նախաձեռնությունը հաջողությամբ է ավարտվում, և 1915 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի մայրաքաղաքներում իրենց պետական լեզուներով հրապարակվում է համատեղ հայտարարությունը հայերի կոտորածների (այն ժամանակ դեռևս չէր օգտագործվում ցեղասպանություն տերմինը) ճանաչման ու դատապարտման մասին:

Դա, փաստորեն, հայերի ցեղասպանության թե՛ ճանաչում, թե՛ դատապարտում էր: Դրանից 80 տարի անց՝ 1995 թ. ապրիլի 14-ին, Ռուսաստանը իր օրենսդիր մարմնի՝ Պետական Դումայի կողմից միաձայն ընդունեց հայտարարություն հայերի ցեղասպանության ճանաչման ու դատապարտման մասին: ՌԴ Պետական Դումայի հայտարարության փաստաթղթերի ծրարը պատրաստել է տողերիս հեղինակը:

Անցած ավելի քան ինը տասնամյակների ընթացքում, ցավոք, չեն վերացել 20-րդ դարի առաջին մեծ ողբերգության՝ Հայոց ցեղասպանության հետևանքները: Երիտթուրքերից հետո նույն ոճրագործությունը շարունակել են քեմալականները, իսկ այժմ՝ 95 տարի անց, ժամանակակից Թուրքիայի կառավարողները աննախադեպ ստով ու կեղծիքով ձգտում են ժխտել մարդկության դեմ կատարված այդ ծանր հանցագործությունը: Հայոց ցեղասպանությունը ժխտելու փորձը աշխարհի ամենամեծ կեղծիքն է ինչպես 20-րդ դարում, այնպես էլ 21-րդ դարում: Հայերի ցեղասպանության հետևանքով նահատակվել է այն ժամանակակալ հայության գրեթե կեսը: Դա անվերադարձ կորուստ է: Բացի դրանից հայությունը կորցրել է իր բնօրրանի՝ իր պատմական հայրենիքի 90 տոկոսը՝ Արևելյան Հայաստանի մեկ մասը, ամբողջ Արևմտյան Հայաստանը, Հայկական Կիլիկիան: Ցեղասպանության թուրքական քաղաքականությունից ու գործողություններից հայությանը հասցված է նյութական հսկայական վնաս:

Այո՛, Հայոց ցեղասպանության գլխավոր հետևանքները Հայրենիքի մեծ մասի կորուստն է, բնակչության ոչնչացումը և նյութական հսկայական վնասը: Այդ հետևանքների վերացումը ենթադրում է բռնազավթված տարածքների վերադարձ և նյութական վնասի հատուցում:

Միայն ցեղասպանության հետևանքների վերացմամբ կարել է կանխել նոր ցեղասպանությունները: Այդ նպատակով առաջարկում են, որ Հայաստանի կառավարությունը իր ներկայացուցչության միջոցով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանին առաջարկություն ներկայացնի ցեղասպանության վերաբերյալ 1948 թ. դեկտեմբերի 9-ի և 1968 թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիաներում որպես լրացում ներկայացնել մարդկության դեմ ուղղված այդ մեծագույն հանցագործության հետևանքների պարտադիր վերացման խնդիրը: Միայն այդպես հնարավոր կլինի մեկընդմիջ տարմա-տախիլ անել այդ մեծագույն չարիքը:

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր



ԱՇԽԱՐՀԸ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ



1915թ., 24 մայիս, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը հայկական կոտորածները դատապարտող համատեղ հռչակագիր ընդունեցին:

1916թ., 9 փետրվար, ԱՄՆ Սենատի որոշում:

1918թ., 4 նոյեմբեր - 12 դեկտեմբեր, Թուրքիայի խորհրդարանը դատապարտեց հայերի կոտորածները:

1919թ., 6 օգոստոս, ԱՄՆ, Կոնգրեսն ընդունեց ակտ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի վերաբերյալ:

1919թ., 8 ապրիլ, 22 մայիս, 5 հուլիս, 1920թ., 13 հունվար, Թուրքիայի ռազմական արտակարգ ատյանը դատապարտեց հայերի կոտորածները և դրանք կազմակերպած մի խումբ բարձրաստիճան թուրք պետական ու կուսակցական գործիչների դատապարտեց տարբեր տարիների բանտարկության, իսկ նրանցից յոթի նկատմամբ կայացրեց մահվան դատավճիռ:

1920թ., 11 մայիս, ԱՄՆ Սենատն ընդունեց թիվ 359-րդ որոշումը:

1920թ., 10 օգոստոս, Ֆրանսիայի Սևր քաղաքում տասներեք պետություններ, այդ թվում՝ Թուրքիան և Հայաստանի Հանրապետությունը, պայմանագիր կնքեցին, որտեղ ստորագրող կողմերն արձանագրեցին Թուրքիայի կողմից հայերի ոչնչացման և տեղահանման փաստերը:

1965թ., 20 ապրիլ և 1972թ., 9 օգոստոս, Ուրուգվայի Սենատը և Ներկայացուցիչների պալատը գլխավոր ասամբլեայի համատեղ նիստում որոշում ընդունեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր սահմանելու, իսկ յոթ տարի անց՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին:

1965թ., 15 հուլիս, ՅԷԼՍԻՆԿԻՈՒՄ տեղի ունեցած խաղաղության կողմնակիցների Համաշխարհային կոնգրեսը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:

1975թ., 9 ապրիլ, ԱՄՆ Ներկայացուցիչների Պալատը համատեղ որոշում ընդունեց, թիվ 148:

1975թ., 24 ապրիլ, Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատը բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր նշելու մասին:

1979թ., Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների հանձնաժողովի 35-րդ նստաշրջանը Օսմանյան կայսրությունում հայերի ջարդը որակեց որպես «20-րդ դարի առաջին ցեղասպանություն»:

1982թ., 29 ապրիլ, Կիպրոսի Հանրապետության Ներկայացուցիչների պալատը հայ ժողովրդի հանդեպ կատարված ոճիրը բնորոշեց որպես ցեղասպանություն:

1983թ., 10 օգոստոս, Կանադայի Վանկուվեր քաղաքում իրավիճակը Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:

1984թ., 13-16 ապրիլ, Փարիզում իրավիճակը ժողովուրդների մշտական ատյանի հատուկ նստաշրջանն ըն-

դունեց հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում:

1984թ., 12 սեպտեմբեր, ԱՄՆ, Ներկայացուցիչների Պալատ, համատեղ որոշում թիվ 247:

1985թ., 23 ապրիլ, Արգենտինայի Ազգային կոնգրեսը որոշում ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին:

1985թ., 2 հուլիս, ՍԱԿ-ի ենթահանձնախմբի 38-րդ նստաշրջանը 1915-1916թթ. հայերի կոտորածները բնութագրեց որպես ցեղասպանություն:

1987թ., 18 հունիս, Եվրախորհրդարանը ընդունեց հատուկ բանաձև «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին»:

1988թ., 22 նոյեմբեր, Հայկական ՍՍՀ Գերագույն խորհուրդը օրենք ընդունեց հայերի 1915թ. ցեղասպանության դատապարտման մասին:

1990թ., 19 ապրիլ, Կիպրոսի խորհրդարանը բանաձև ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին և Ապրիլի 24-ը հռչակեց հայ ժողովրդի ցեղասպանության զոհերի հիշատակի ազգային օր:

1995թ., 14 ապրիլ, Ռուսաստանի Ղաշնության պետական Դուման հայտարարություն ընդունեց հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին:

1995թ., 5 մայիս, Արգենտինա, Սենատը Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշում ընդունեց:

1996թ., 23 ապրիլ, Կանադայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատը որոշում ընդունեց մարդու նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին, յուրաքանչյուր ապրիլի 20-27-ը հայտարարեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

1996թ., 25 ապրիլ, Հունաստանի խորհրդարանը օրենք ընդունեց հայերի ցեղասպանության հիշատակի օր հաստատելու մասին:

1996թ., 11 հունիս, ԱՄՆ, Ներկայացուցիչների Պալատ, որոշում թիվ 3540:

1997թ., 17 ապրիլ, Ավստրալիայի (Նոր Հարավային Ուելս) խորհրդարանի օրենսդիր ասամբլեայի նիստում որոշում ընդունվեց Հայոց ցեղասպանության տարելիցը նշելու մասին:

1997թ., 3 մայիս, Լիբանանի Հանրապետության խորհրդարանը բանաձև ընդունեց Ապրիլի 24-ը որպես հայ ժողովրդի հետ միասնականության օր նշելու մասին:

1998թ., 26 մարտ, Բելգիայի Սենատը որոշում ընդունեց Թուրքիայում ապրող հայերի 1915թ. ցեղասպանության մասին:

1998թ., 22 ապրիլ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանը ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտող որոշում:

1998թ., 24 ապրիլ, Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովը Հայոց ցեղասպանությունը համարեց 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը:

1998թ., 28 մայիս, Ֆրանսիա, Ազգային Ասամբլեան օրինագիծ ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին:

2000թ., 29 մարտ, Շվեդիայի խորհրդարանն ընդունեց բանաձև Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին:

2000թ., 15 մայիս, Լիբանանի խորհրդարանը կրկին ճանաչեց Օսմանյան Թուրքիայում իրականացված հայերի ցեղասպանությունը:

2000թ., 7 նոյեմբեր, Ֆրանսիայի սենատը Հայոց ցեղասպանությունը դատապարտող օրինագիծ ընդունեց:

2000թ., 10 նոյեմբեր, Վատիկանն իր հայտարարության մեջ Հայոց ցեղասպանությունը համարեց 20-րդ դարի հետագա բոլոր սարսափների սկիզբը:



2000թ., 15 նոյեմբեր, ընդունվեց Եվրոպառլամենտի որոշում:

2000թ., 17 նոյեմբեր, Իտալիայի խորհրդարանի ստորին պալատը որոշում ընդունեց Հայոց ցեղասպանության դատապարտման մասին:

2001թ., 18 հունվար, Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովը և Սենատը համատեղ օրենք ընդունեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին: Հունվարի 29-ին Ֆրանսիայի Հանրապետության Նախագահը վավերացրեց խորհրդարանի ընդունած որոշումը:

2001թ., 29 հունվար, Ֆրանսիա, օրենք:

2001թ., 24 ապրիլ, Եվրոխորհրդի օրենսդիր մարմնի հայտարարությունը:

2001թ., 27 սեպտեմբեր, Նորին Սուրբ Օծություն Հովհաննես Պողոս II-ի և Ն.Ս.Օ.Տ.Տ.Գարեգին II-ի համատեղ հռչակագիրը:

2001թ., 10 դեկտեմբեր, Ժնևի նահանգային (Շվեյցարիա) պետական խորհուրդն ընդունեց հռչակագիր, որով ճանաչում է 1915թ. Հայոց ցեղասպանությունը:

2002թ., 28 փետրվար, Եվրոպառլամենտի որոշում:

2002թ., 13 հունիս, Կանադա, Սենատի որոշում:

2003թ., 20 օգոստոս, Արգենտինա, Սենատի որոշում:

2003թ., 15 դեկտեմբեր, Շվեյցարիայի Ազգային խորհուրդը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

2004թ., 18 մարտ, Արգենտինա, Սենատի օրինագիծ:

2004թ., 26 մարտ, Ուրուգվայ, օրենք:

2004թ., 31 մարտ, Արգենտինա, Սենատի հռչակագիր:

2004թ., 21 ապրիլ, Կանադայի խորհրդարանը որոշում ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին:

2004թ., 30 նոյեմբեր, Սլովակիայի ազգային ժողովը որոշում ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին:

2004թ., 21 դեկտեմբեր, Հունգարիայի խորհրդարանի ստորին պալատը միաձայն հայտարարություն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին:

2005թ., 19 ապրիլ, Լեհաստանի Սեյմն ընդունեց որոշում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին:

2005թ., 20 ապրիլ, Արգենտինա, Սենատի որոշում:

2005թ., 14 հունիս, Վենեսուելայի խորհրդարանն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին հայտարարություն:

2005թ., 15 հունիս, Գերմանիա, Պառլամենտի որոշում:

2005թ., 28 սեպտեմբեր, Եվրոպառլամենտի որոշում:

2005թ., 15 դեկտեմբեր, Լիտվայի խորհրդարանը բա-

նաձև ընդունեց Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին:

2006թ., 15 հունվար, Արգենտինա, օրենք:

2006թ., 19 ապրիլ, Արգենտինա, Սենատը հատուկ հայտարարություն ընդունեց Հայոց ցեղասպանության 91-րդ տարեկիցի առիթով:

2007թ., 7 հուլիս, Չիլիի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշում:

2007թ., 10 հոկտեմբեր, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատն ընդունեց 106-րդ բանաձևը:

2007թ., 19 նոյեմբեր, Հարավային ամերիկայի միջազգային խոշորագույն ՄԵՐԿՈՍՈՒՐ կազմակերպության խորհրդարանի լիագումար նիստը, որի անդամներն են՝ Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը, Վենեսուելան և Ուրուգվայը, Մոնտեվիդեոյում (Ուրուգվայ) հաստատեց Հայոց ցեղասպանությունը ճանաչելու որոշումը:

2007թ., 7 դեկտեմբեր, Բուլղարիայի ուղղափառ եկեղեցու սինոդը 1915թ. իրադարձությունները ճանաչեց որպես Ցեղասպանություն:

2008թ., 8 հունվար, Իրապարակվեց Ցեղասպանագետների ասոցիացիայի հատուկ կոչը:

2008թ., 3 մարտ, Բուլղարիայի Ստարա Ջագորա քաղաքի Համայնքային խորհուրդը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

2008թ., 28 մարտ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդում Հայաստանի նախածեռնությանը ընդունվեց բանաձև ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ:

2008թ., 29 փետրվար, Բուլղարիայի Բուրգաս քաղաքի Համայնքային խորհուրդը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

2010թ., 26 փետրվար, Իսպանիայի Կատալոնիայի ինքնավարության խորհրդարանը միաձայն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

2010թ., 4 մարտ, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների կոմիտեն ընդունեց Հայոց ցեղասպանության մասին 252-րդ բանաձևը:

2010թ., 11 մարտ, Շվեդիայի խորհրդարանը ճանաչեց և դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:



ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՍՆԱԿԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍ Է՝ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը մարտահրավեր է Ամերիկայի խղճին», հայտարարել է ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսին՝ չորեքշաբթի օրը ելույթ ունենալով Կոնգրեսի շենքում կազմակերպված Ցեղասպանության հիշատակի արարողությանը: Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի տեղեկագրամը՝ արարողությանը մասնակցել են նաև Ներկայացուցիչների պալատում դեմոկրատ մեծամասնության ղեկավար Սթեյնի Հոյերը, պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանը, հայկական 252-րդ բանաձևի հեղինակ Ադամ Շիֆը, այլ օրենսդիրներ՝ Կալիֆոռնիան ներկայացնող Ջեքի Սփայերը, Աննա Էշուն, Հայ առաքելական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Թաթուլ Մարգարյանը և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը:

Նենսի Փելոսին վերահաստատել է, որ Ներկայացուցիչների պալատում պետք է անպայման ընդունել պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում մարտի 4-ին ընդունված 252-րդ բանաձևը. «Ես ողջունում եմ մեր հանձնաժողովի կողմից թիվ 252 բանաձևի ընդունումը և կոչ եմ անում գործընկերներին՝ կանգ չառնել, մինչև ԱՄՆ ամբողջ կառավարությունը պատշաճ ձևով չճանաչի այդ ոճիրը որպես Ցեղասպանություն: Պալատի դեմոկրատ մեծամասնության ղեկավար Սփեյնի Հոյերը նույնպես կոչ է արել իր գործընկերներին և բոլոր ամերիկացիներին՝ «երբեք չմնալ Ցեղասպանության սովորական վկաների դերում»: Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հովարդ Բերմանն ընդգծել է, որ բոլոր ամերիկացիները պարտավորություն ունեն՝ ընդդիմանալու Ցեղասպանության ուրացմանը: Ադամ Շիֆն, իր հերթին, վստահեցրել է, որ ինքն անձամբ հետամուտ է լինելու Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունմանը Կոնգրեսի երկու պալատներում էլ. «Մենք կհասնենք այս հանցագործության լիակատար ճանաչմանը Միացյալ Նահանգների կառավարության կողմից», շեշտել է Շիֆը: Արարողությանը ներկա այլ օրենսդիրներ նույնպես նշել են, որ իրենք կողմնակից են պատմական արդարության վերականգնմանը:

Դժվար թե Թուրքիան այս «դրական ազդանշանների» մասին էր խոսում, երբ համաձայնեց դեսպան Թանին հետ ուղարկել ու վարչապետի մակարդակով մասնակցել վաշինգտոնյան միջուկային անվտանգության գագաթաժողովին:

Հ. ԱՖՅԱՆ («Ազգ», 23.04.2010)



ԽԱՉԻԿ ԴԱՇՏԵՆՑ-100

Խաչիկ Տոնոյի Դաշտենցը (Տոնոյան) ծնվել է 1910 թվականին, Բիբլիսի նահանգի Խուբ-Բռնաշեն գավառի Դաշտադեն գյուղում: Մահացել է 1974 թվականին, Երևանում: Գրող, թարգմանիչ: Ավարտել է Մոսկվայի օտար լեզուների ինստիտուտի անգլերեն լեզվի բաժինը: Դաշտենցին լայն ճանաչում են բերել արևմտահայության ողբերգությունը և սասունցիների նորոգ կյանքն արտահայտող «Խողեղան» (1950) վեպը, ապա և՛ «Ռանչպարների կանչը» (1979) վիպասքը, որը պատմում XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ ազգային-ազատագրական շարժման մասնակից այն հերոս շինականների մասին, ովքեր անձուրաց պայքարի ելան թուրքական բռնակալների դեմ, և ուն ժողովուրդը ֆիդայի կոչեց:


Նորագույն ապարագրական պայքարի առաջնորդներից եւ գաղափախոսներից՝ ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ, ԳԵՎՈՐԳ ԱՃԵՄՅԱՆ, ԼԵՎՈՆ ԵՐԿԱԹ, ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆՅԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ՓԱՇԱԲԵԶՅԱՆ...

Լևոն Երկաթ (1916-1990):

Նահատակվել է ԱՄՆ-ում, 1990-ի ապրիլի 2-ին:

Չայտնի հասարակական - քաղաքական գործիչ, հրապարակախոս, ով իր մեծ ներդրումն է ունեցել Նորագույն զինյալ ազգային-ազատագրական պայքարում:

Չայկական ժողովրդային շարժման ներկայացուցիչն էր ԱՄՆ-ում:



Կարապետ Փաշաբեյյան (1921-1983): Նահատակվել է 1983-ի մարտի 12-ին, իր դռան շեմին, թուրքական հատուկ ծառայության լրտեսների արձակած փամփուշտներից: Նրա կյանքը համակ նվիրում ու զոհողություն էր Չայկական ժողովրդային Շարժմանը եւ նրա միջոցով Նորագույն զինյալ ազգային ազատագրական պայքարին:

Կարապետ Փաշապեյյանի խօսքերէն

«Երկար ժամանակ է վեր այն հաստատ համոզումը ունէի թէ հայկական այս դժբախտ կացութիւնը վերջ մը պիտի գտնէր եւ մեր ժողովուրդը պիտի ծնէր յեղափոխականներ, որոնք պիտի յեղաշրջէին այս կացութիւնը եւ արծարծէին Չայ դատը:

Ահավասիկ այսօր, եօթը տարուան մէջ կը տեսնեմ սաստկացումը յեղափոխական պայքարին՝ ի խնդիր հայ ժողովուրդին, Չայ դատին ու Չայաստանի ազատագրութեան»:

«Չայաստան», թիւ 57-58, Օգոստոս, 1983


Լույս է տեսել «ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ ՓԱՐԻԶՈՒՄ» գիրքը՝ քարգմանությունը և հրադարակումը՝ Գրիգոր Զանգիկյանի

Հատված խմբագրի խոսքից ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ՈՒՆՏԱՎՈՐԸ

Գուրգեն Յանիկյանի բռնարարքի լուրը կայծակի արագությամբ տարածվեց աշխարհով մեկ: Սփյուռքի ամբողջ հայությունը կամենում էր ամեն կերպ սատար կանգնել իր անվեհեր հայրենակցին. ստեղծվեց Յանիկյանի պաշտպանության կոմիտե, վարձվեցին փաստաբաններ, բացվեց հիմնադրամ, որի հաշվին մուտքեր էին արվում աշխարհասփյուռ հայության կողմից: Սակայն ծերունի վրիժառուին դեռ սպասում էր ամենամեծ դառնությունը, որը մատուցեցին որոշ վայ հայրենակիցներ: Շուտով նա պարզեց, որ իր շուրջը վխտացող կոմիտեականներից շատերը նորօրյա խաչագողներ են ընդամենը, որոնք հավաքվել են դրամի և իր բռնարարքի շնորհիվ համբավ ձեռք բերելու համար: Հիասթափված ծերունին հրաժարվեց բոլորից՝ դատարանում մեղմեցնակ ներկայացնելով հայության դատը: Իսկ ամերիկյան դատարանը, տեղի տալով Թուրքիայի ճնշումներին, ամեն ինչ արեց ծերունի վրիժառուին խելահեղ ոճրագործ ներկայացնելու համար և կայացրեց ցմահ ազատազրկման դատավճիռ:

Ազգային խայտառակության նման մանրամասներից

հարկադրաբար են անդրադառնում, քանի որ այն ուսանելի նախադեպ հանդիսացավ ֆրանսահայ համայնքի համար՝ «Վան» գործողությունն իրականացրած տղաների դատավարությանը Փարիզում պատշաճ և ըստ ամենայնի պատրաստվելու գործում: Եվ որքան զայրույթ ու հիասթափություն է հարուցում Գարգեն Յանիկյանին խարխուլ մակույկով թուրք-ամերիկյան դաշինքի հորձանուտին հանձնելու հանգամանքը, այնքան հպարտություն ես ապրում՝ թերթելով «Վան» գործողության դատավարության արձանագրությունները, որոնք այս գրքով ներկայացվում են ընթերցողին:



ԿԱՐՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Գրականագետ



Երկու խոսք՝ Գուրգեն Յանիկյանի երեսնյան հուշի, Գուրգ Աճեմյանի եւ Միսոն Միսոնյանի հոդվածների առնչությամբ

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը մեծ կարևորություն էր տալիս դատավարություններին, երբեմն ավելի, քան գործողություններին: Միգուցե դա պայմանավորված էր նրանով, որ Գուրգեն Յանիկյանի դատավարության ժամանակ ՀԱՀԳԲ-ի հիմնադիրները տեսան եւ հասկացան, թե ազատագրական պայքարի արդյունավետության տեսակետից որքան մեծ նշանակություն ունի ցանկացած դատավարություն, որը հնարավոր է լինում իր տրամաբանական ավարտին հասցնել: Գուրգեն Յանիկյանի դեպքում, ավա՞ղ, այդպես չեղավ: Յանիկյանը, գրեթե, մեն-մենակ մնաց ամերիկյան արդարադատության եւ թուրքական պետական ճնշումների դեմ-հանդիման: Սփյուռքի կուսակցությունները, չըմբռնելով հերոս հայի գործի կարեւորությունը, հեռու պահեցին իրենց, այսպես կոչված, Յանիկյանի գործից: Վերջինս կուսակցական չէր: Ինչի հետեւանքով ձեռքից բաց թողնվեց Հայկական հարցի եւ Հայոց ցեղասպանության հետապնդման համար ստեղծված շատ բարենպաստ մի հնարավորություն:

Շատերը հետագայում զղջացին ու խոստովանեցին իրենց գործած սխալը, այդ թվում՝ Գուրգեն Յանիկյանի դա-

տախազ Միլերը, բայց եղածը եղած էր. ծերունի հերոսին դատապարտեցին ցմահ բանտարկության՝ հնարավորություն չտալով նրան իր դատավարությունը վերածելու թուրքական պետության դեմ իրականացված արդարադատության: 1975-ին այդ մասին էին գրում Գեուրգ Աճեմյանն ու Միսոն Միսոնյանը «Սփյուռք» պարբերականի էջերում, ճգնելով հասնել Յանիկյանին պաշտպանելու, ինչը նույնն էր թե՛ Հայկական պահանջատիրությունը պաշտպանելու համահայկական ջանքերի մեկտեղմանը: Խնդիրն այսօր էլ արդիական նշանակություն ունի:

ՀԱՀԳԲ-ն նույն սխալը թույլ չտվեց: ՀԱՀԳԲ-ի մարտիկների ցանկացած դատավարություն, ճիշտ է, մեծ ջանքեր խլեց կազմակերպությունից, այդ թվում՝ Հայկական ժողովրդային Շարժումից, Քաղբանտարկյալների Պաշտպան Հանձնախմբից, բայց դրանք արդարացված էին, որովհետեւ այդ դատավարությունները շատ մեծ ընդգրկում էւ արծագանք ունեցան նորովի հունավորելով զինյալ ազատագրական պայքարը: Այդպիսի դատավարություններից մեկն էլ «Վան» գործողության չորս մարտիկների դատավարությունն էր Փարիզում:

ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆԻ ԵՐԵՒԱՆՅԱՆ ՀՈՒՇԵՐԸ

«Հայկական օդանավով հասա Երևան: Չէի հավատում, երբ լսում էի օդաչուի խոսքերը հայերեն: Միրոս լցվում էր ուրախությամբ:

...

Մի դեպք պատահեց Երևանում, որն ինձ փաստեց, որ իմ ընտրած ուղին ու ծրագրած գործողությունը ճիշտ են:

Մի առավոտ վաղ էի արթնացել եւ նստած պատուհանի առաջ՝ նայում էի դեպի Արարատը: Օրը պարզ ու սքանչելի էր: Նոր բարձրացող արևն իր ճառագայթներով լուսավորել էր մեր սրբության գագաթը, որը ծածկված էր ծյունով: Ամեն ինչ տեսարանը փոխվում էր, և կարծես արևի ճառագայթները շոյում էին նրա ծյունագարդ գագաթը, որը հազարավոր զանազան գույնի արտացոլումներով արևին վերադարձնում էր իրեն տված համբույրները: Այս չէր, որ ինձ զարմացրեց ու անչափ ուրախացրեց:

Հյուրանոցից ոչ հեռու փոքրիկ տնակներ կային: Բնակիչներն արդեն բակում էին և պատրաստվում էին գործի գնալ: Իմ ուշադրությունը գրավեց գլուխը շալով փաթաթած մի կին, որը մառանից դուրս էր քշում մի կով: Երբ կինը տեսավ փայլող Արարատի գագաթն ու արևի ճառագայթների արտացոլումը, մոռացավ իր կովը, հպարտությամբ բարձրացրեց գլուխը, նայելով դեպի լեռը՝ խաչակնքեց ու մի քանի վայրկյան սառած նայում էր տեսարանին:

Մի՞թե այս մի փաստը բավական չէ հրամայելու աշխարհին, որ վերադարձնեն մեզ մեր լեռը, որի վրա, ըստ ավանդության, Նոյյան Տապանն է իջել:

Այս տեսարանից հետո հասկացա, թե ի՞նչ է ամեն մի

հայի համար նույնիսկ կոմունիստական Հայաստանում, մեր Արարատը, որը տաճիկներին են նվիրել խաբեբա միջոցներով:

Այցելեցի Միսոնիկյանի անվան գրադարանը, որին տարիներ առաջ ուղարկել էի երկուական օրինակ անգլերեն լեզվով Ամերիկայում հրատարակած իմ հինգ գրքերից:

Կառավարիչը ոչ միայն 15 րոպեի ընթացքում բերեց իմ բոլոր գրքերը, այլև հրավիրեց գրադարանի մի խումբ պաշտոնյաների ու նրանց ներկայացրեց գրքերի հեղինակին:

Մոտ կես ժամ շատ սիրալիր խոսակցություն ունեցա նրանց հետ: Մանավանդ ուրախացա, երբ մի երկուսը հայտնեցին, որ այս կամ այն գիրքը կարդացել են: Հետաքրքրվեցի, թե արդյոք գրքերս ընթերցողներ ունե՞ն: Ներկաներից մեկը, ցույց տալով գրքերից երեքը, ասաց, որ սրանք ավելի են պահանջվում կարդացողների կողմից, քան մյուսները: Ես բավականացած էի, զուր տեղը չէի ուղարկել:

Իմ Երևան այցելելու որոշված 15 օրն աննկատ անցավ:

Ծանոթագրություն

1. Տես, «Նպատակ և ճշմարտություն», Երևան, 1999, «Տիգրան Մեծ» հրտ., էջ 49:



Նուրեթին Բայքալ. «Աբդուլլահ Գյուլն ու Ռեջեփ Թայիփ Էրդողանը պատրաստ են ճանաչել Հայոց ցեղասպանությունը»
«Հարյուր թուրքերից մոտ տասը համաձայն են հայերի հետ, քսանը հայերի դեմ են տրամադրված և յոթանասունն անտարբեր են այդ ժողովրդի հանդեպ», - հաղորդեց Ավստրալիայում բնակվող բնիկ թուրք Նուրեթին Բայքալը PanARMENIAN.Net ի թղթակցի հետ զրույցում: Նա ընդգծեց, որ հայերին հարկավոր է ակտիվացնել ազգային մտածելակերպը, եթե նրանք ցանկանում են հասնել Ցեղասպանության ճանաչմանը: Նա ասաց նաև, որ **առաջին հերթին Թուրքիան ցանկանում է լուծել քրդերի հարցը, իսկ հետո արդեն՝ հայերի**. «Հնարավոր է, որ այդ երկու հարցերը միաժամանակ կլուծվեն»: Նուրեթինն ընդգծեց նաև, որ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլն ու վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը պատրաստ են ճանաչել Հայոց ցեղասպանությունը, սակայն նրանք վախենում են չստանալ Թուրքիայի բնակչության աջակցությունը: /PanARMENIAN.Net/ 24 ապրիլի, 2010 թ.



ԵԱՆԻԿԵԱՆԻ ՀԱՐՑՈՎ



Գևորգ Աճեմյան

Եանիկեանի պաշտպանութեան գործին մէջ պատուաւոր դուրս չկրցանք գալ, ամէնէն առաջ՝ Ամերիկայի Զայութիւնը, որ սովորաբար իրեն բաժին ինկած բոլոր գործերուն մէջ միշտ առաւելագոյն յաջողութիւնը կարծանագրէր:

Հրանդ Սիմոնեանի նամակները այդպէս կը վկայեն աւա՛ղ:

Հայ ժողովուրդին աննահանջելի պարտականութիւնը էր պաշտպանել Եանիկեանը, վասնզի ծերունագարդ հերոսը յանուն իր ժողովուրդին գործած էր արարքը, որ Հայ Դատի լուծման ճանապարհին նոր ձեւ մըն էր, ճշմարիտ նորարարութիւն, որ շքեղ խօսքերու փոփոխութիւն փոխարէն մեր հեղուկ մտածումներուն մէջ կը խառնէր մետաղի փոշի, առաջին փոշիները:

Անհատական ոճին մեծ հաւատացողներէն չենք եղած, ինչպէս Գ. Եանիկեանի արարքին վաղորդայնին յայտնած ենք այս էջերէն, բայց չենք կրնար առաւելագոյն չափով չպաշտպանել մէկը, որ յանուն հայ ժողովուրդին գործեց իր արարքը, ամէնէն անձնուրաց, անշահախնդիր եւ տեսլապաշտ ոգիով:

Յետոյ, անհատական այս ոճը, ինչպէս յետագայ օրերը ցոյց տուին, Հայ Դատի հետապնդման գործը դրաւ անելի կենսունակ, անելի իրատես եւ անելի գործարար ճանապարհի մը վրայ: Մանաւանդ, ցոյց տուաւ ճշմարիտ տեղը, ուրկէ պէտք է նետել կամուրջ՝ խօսքի եւ գործի միջեւ: Եանիկեանի արարքը Հայ Դատին գործը հանեց իր հանքէն, մաքրեց փոշիներէն ու այլ խառնուրդներէն:

Պէտք է պաշտպանել Գուրգէն Եանիկեանը: Եանիկեանի արարքը չի սկսիր այն օրը, երբ ահաբեկումի ենթարկեց երկու թիւրք պաշտօնատարներ, այլ դատարանին մէջ, ամերիկեան դատարանին մէջ, ուր պէտք է աճի ու բարգաւաճի եւ լսելի դառնայ միջազգային ականջներուն: Սանթա Պարպարայի Ամերիկեան դատարանը պէտք է վերածուի համալսարանի մը պատմութեան ամբիոնին՝

Սանթա Պարպարայի Ամերիկեան դատարանը պէտք է վերածուի համալսարանի մը պատմութեան ամբիոնին՝

ամերիկեան եւ այլ ժողովուրդներուն դասախօսելու թիւրքին կատարած ցեղասպանութիւնը եւ այլ բաներ, զորս մենք մեզի կը մենախօսենք:

Մե՛ծ ամօթ մը պիտի ըլլայ մեր ժողովուրդին, եթէ դատարանին մէջ անփառունակ վախճան մը եւ ելք մը ունենայ Եանիկեան: Պարտուողը մենք պիտի ըլլանք, հայ ժողովուրդը, խօսքերու եւ զգայուն արտայայտութիւններու մեր երազախաբութեան մէջ:

Սողոմոն Թեղիբեանի գործը շքեղ յաղթանակ դարձաւ որքան Թալէթի դիտապաստ ինկած օրը, նոյնքան գերմանական դատարանին մէջ, երբ ցեղասպան թիւրքին կարելի եղաւ հազցնել իր բռնաշահակը եւ զայն գլխիկոր Ստամպոլ վերադարձնել:

Սանթա Պարպարայի բանտին ու դատարանին մէջ միանակ պէտք չէ թողուլ Եանիկեանը, միանակ մնալու եւ միանակ գործելու այս մեծ ու ծերունի սիրահարը, որ, ինչպէս գիտենք եւ ինչպէս կը վկայեն լուրերը, կուզէ միանակ մնալ, իր անհատական ոճով, արհամարհելով փաստաբաններն ու հանգանակուած գումարները:

Ի՞նչ կը նշանակէ Եանիկեան պաշտպանելու համար ի խորոց սրտի նուիրութեամբ գումարները վերադարձնել, փաստաբաններու տեսակին համար տարակարծիք ըլլալ եւ այլ մանր-մունր բաներու համար կազմալոյծ ու անդամալոյծ ըլլալ: Իր արարքին առեւ միանակ՝ երկու թիւրքերու դէմ, որ ցեղասպաններու արիւնէն գնդիկներ ունէին իրենց երակներուն մէջ, պիտի մնայ նաեւ միանակ դատարանի առջեւ՝ թիւրք պետութեան գաղտնի տրամադրած վարկերով գօտեպնդուած փաստաբաններու եւ այլ մարդոց բազմութեան առջեւ:

Մինչև ե՞րբ պիտի շարունակենք սրբազան գործերու պահուն պառակտուած մնալ:

Ափսո՛ս, մեծ պահերու կրակը չի կրնար հալեցնել մեր տկարութիւնները եւ չի զօդեր մեր ճեղքերը:

Ամերիկեան դատարանին առջեւ պարտուողը Եանիկեանը պիտի չըլլայ, այլ մեր ժողովուրդը, մեր Նահատակները....

ԳԵՈՐԳ ԱՃԵՄԵԱՆ
«Ափիւռք», թիւ 2, 21.01.1975:

Գևորգ Աճեմյան (1932-1998), սփյուռքահայ մտավորական, գրող, հրապարակախոս: Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի հիմնադիրներից:

ԽՄԲԱԳՐԻ ՕՐԱՏԵՏՐԷՆ

Մենք՝ հայերս, պարտուեցանք Սանթա Պարպարայի դատարանին մէջ:

Թուրքը յաղթանակեց, արդէն կը յաղթանակէ 1071 թուականէն ի վեր, երբ խորտակեց Մանազկերտի դռներն ու պարիսպները 900 տարի առաջ:

Պարտուեցանք ամբողջական կերպով՝ բարոյապէս եւ նիւթապէս:

Երջանիկ օրերուն գէթ կը յաղթանակէինք բարոյապէս: Այս անգամ նախ՝ բարոյապէս պարտուեցանք, շատ փոքր ռազմադաշտի մը մէջ, որ Սանթա Պարպարայի դատարանն սրահն էր:

Բան պիտի չկորսնցնենք. մի՛ վախնաք, կորսնցնելիք բան չունինք, վաղը՛նք կորսնցուցած ենք մեր կորսնցնելիքները: Թրքահայաստանը ամբողջութեամբ արդէն կորսնցուցած ենք, վերադիրներով՝ Կարս ու Արտահան, մենք՝ Թրքահայաստանը բարենորոգելու համար միայն ճամբայ ելողներս:

Եանիկեան պիտի մնայ բանտը: Դատապարտուած է ցկեանս բանտարկութեան, 78 տարեկանէն ետք: Բարեբախտաբար պատիժները ի գօրու են ոչ թե անցած, այլ գալիք տարիներու համար: Բանտարկութեան տարիներու թիւը պիտի որոշէ Եանիկեանի հոգեական կորովը: Մաղթենք, որ բանտի իր խուցին մէջ երկար ապրի Եանիկեանի հոգեական կորովը: Մաղթենք, որ բանտի իր խուցին մէջ մէջբերենք ու գոչենք. «Ֆերարա-Սանթա Պարպարա, եթէ քար քարի վրայ չմնայ, հայ մարդու մը անունը փառքիդ մեծագոյն տիտղոսը պիտի ըլլայ...»:

Եանիկեանի հետ բանտ կը մտնէ, դատապարտուելով իբրեւ առաջին կարգի յանցաւոր, հայ ժողովուրդի գոյատեւելու կամքը:

Մենք կողբանք այս «բանտարկեալը» եւ ո՛չ 78 տարեկան ծերունի մենամուրը...

Եանիկեանի արարքին առաջին իսկ օրէն թերեւս հայ մամուլին մէջ առաջինը եղանք Եանիկեանի հարցին արձա-

զանքողը՝ այդ արձագանքին ետին որոնելով «արձագանքողները»...

Ըսինք՝ չենք հաւատար անհատական ոճին ազգային դատ հետապնդելու մեծ ճանապարհին. Եանիկեան մենամուլի մենամարտը կը մղէր. անցած է Դաւիթ-Գողիաթեան մենամարտով ազգային ճակատագիրը վճռելու երանելի ժամանակը:

Ըսինք՝ Եանիկեանի արարքը առիթ պիտի ընծայէ Եանիկեանի անձէն աւելի մեր ազգային բազկերակի քննութեան...

Ուրեմն, Գուրգէն Եանիկեան իր արարքով դարձաւ փորձաքար մը մեր ազգային կամքն ու կարողականութիւնը արժեշահելու:

Ահաւասիկ, «քննութեան» արդիւնքները՝ պարզ, ամփիճելի եւ աղաղակող.

1. Հայկական Դատ կուզենք հետապնդել բանաւոր կերպով, այսինքն՝ խօսքով, մամուլով, ակումբի բեմէն կամ եկեղեցիի խորանէն, բակէն, ուխտի սեղաններէն: Բթացած են արարք գործելու մեր զգայարանքները:

2. Միակամ չենք Հայկական Դատը հետապնդելու: Փա՛ստ. Եանիկեանի Պաշտպան Յանձնախումբը, որ կազմուած էր երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներէն, լուծուեցաւ առանց պատճառի, ափսո՛ս, առանց նոյնիսկ տեսակետի տարբերութեան. այլ պարզապէս մեծ փաստաբան մը (Ֆորմէն) նշանակելու առթիւ: Իր միակ «հրաշագործութիւնը» եղաւ մէկ շաբթուան մէջ մեր հոյակապ ժողովուրդի նուիրաբերած 40.000 տոլարները... Ետ դարձնել:

3. Մեր ժողովուրդը՝ «մեծ համրը», ազնիւ է, նուիրաբերող է մանաւանդ տրամադիր գործելու եւ տալու յանուն Հայութեան եղած բոլոր գործերուն:

4. Հայ անաղարտ երիտասարդութիւն մը առաջ եկած է՝ մեր օրերու գերագոյն բարեբախտութիւնը մեր ժողովուրդին, որ դժգոհ է ազգային ծերացած գործելակերպէն եւ նոր ուղիներ, նոր ու թարմ ոճ կորոնէ ազգային ծառայութեան իր թափին համար: Եանիկեանով աւելի խանդավառ է, քան «կարգախօսներէն»:

5. Ամենէն կարեւոր յայտնութիւնը, այսինքն՝ փորձաքարի քննութեան մեծ արդիւնքը, եղաւ այն իրողութիւնը, որ հայ ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութիւնը՝ Սփիւռքի թէ Հայաստանի, ջերմ ու խորունկ սէր արտայայտեց Եանիկեանի հանդէպ: Մեկ շաբթուան մէջ եւ միայն մէկ շրջանէն (Գալիֆորնիա) նուիրաբերեց 40.000 տոլար: Հապա, եթէ ամբողջ Հայութեան առիթ տրուէր մասնակցելու նուիրաբերութեան, կրնամք վստահեցնել, որ առնուազն 1.000.000 տոլար կարելի պիտի ըլլար գոյացնել, եթէ անոր կարիքը զգացուէր:

Երեւոյթը սքանչելի է եւ այլապէս ուշագրաւ, եթէ ի մտի ունենանք, որ Եանիկեան բացարձակապէս անկուսակցական էր:

6. Եանիկեան մը, ճիշդ է, թեւիկեան մը չէր, երկուքը տարբեր ժամանակներու մէջ ապրեցան ու գործեցին, տարբեր էին մանաւանդ իրենց գոհերը, բայց կրնայինք Եանիկեանը պաշտպանել թեւիկեանի պէս եւ անոր շնորհիւ թեւիկեանի մերձ աթոռ մը, քանի որ Եանիկեանն ալ կը գործէր յանուն Հայութեան եւ յանուն հետապնդման Միեւնոս Ար-ԴԱՐՈՒԹԵԱՆ:

7. Մեր կուսակցութիւնները կրաւորական դիրք բռնեցին Եանիկեանի հանդէպ:

Պատճառները... չենք ուզեր ենթադրական պատասխաններ տալ: Բարեբախտաբար չդատապարտեցին: Գոհանանք ատով: Անկուսակցական մը անկէ աւելի բախտաւոր չէր կրնար ըլլալ:

Հայ ժողովրդական երգերով փառաբանուած ազգային մեծ հերոսն իսկ՝ Զօր. Անդրանիկ, աւելի բախտաւոր չեղաւ իր անկուսակցական շրջանին: Եւ եթէ միւս կողմը թիչ մը թի-

կունք կանգնեցաւ անկուսակցականացած Անդրանիկին, այդ իսկ կուսակցական ոճ մըն էր մարդ փառաբանելու ի վնաս հակառակորդին եւ... ի շահ իր կողմին: Եանիկեան անհատապէս իր արարքով որեւէ կուսակցութեան պատիւ ու շահ չէր բերեր:

8. Մեր բարեկամն ու աշխատակիցը՝ Եանիկեանի դատաւարութեան մեր աշխատակիցը Լեւոն Երկաթ, իր նամակին մէջ ուշագրաւ ակնարկ մը ունի. Եանիկեան պարտուած է գրեթէ մատնութեամբ մը (աւելի ծանր վճիռ ստանալով) իրեն Պաշտպան Յանձնախումբի անդամներէն մէկուն գրած մէկ յորուածին պատճառով, Սանթա Պարպարայի «Սանթա Պարպարա» թերթին մէջ, բնական է՝ անզլերէնով: Տեսէք, թէ ի՞նչ կը գրէ Լեւոն Երկաթ. «Դժբախտաբար հայ անունին պատուաբեր չէր այդ դրոյսապատճառը, որ ձեռք առնուած էր ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ ՄԵԿՈՒՆ՝ «Սանթա Պարպարա» թերթին մէջ յօդուածով մը, զոր ԴԱՍԱԽԱԶԸ ԶՈՐԱԿՈՐ ԶԷՆՔ ԴԱՐՉՈՒՄՑ ԻՐ ԶԵՆՔԸ»:

Բնական է՝ ընդդէմ Եանիկեանի: Այստե՞ղ պիտի հասնէինք:

Եթէ այս ոճով պաշտպանած ըլլայինք Սողոմոն Թեւիկեանը կամ Թորաքեանը, անոնց բաժինը պիտի ըլլար անմիջական գնդակահարութիւն եւ ոչ թէ իրենց 78 տարիներէն ետք... ցկեանս բանտարկութիւն:

Կորսնցուցինք մէկ առիթ մը:

Եանիկեանը մեծ պիտի ըլլար ոչ թէ իր արարքով, 1973 Յունուարի օր մը, այլ ԴԱՏԱՐԱՆԻՆ ՄԷՉ, ամերիկեան դատարանին մէջ:

Եանիկեանի Աւարայրը դատարանը պիտի ըլլար:

Հայ ժողովուրդը սակայն մէկ օրէ աւելի չի սիրեր մնալ Աւարայրներու մէջ, 451 թուականէն սկսեալ:

Արդ, ի՞նչ պիտի ընենք Եանիկեանի դատապարտութենէն ետք:

Նուերնե՞ր պիտի դրկենք ծերունագարդ մենամուլին:

Մեր չըրածներո՞ւն համար պիտի զղջանք:

«Իմաստութի՞ւն» պիտի հաստատենք մեր չկամութեան մէջ:


Բայց, մարգարէութիւն, չընենք, յաջորդ Եանիկեանի հանդէպ ի՞նչ դիրք պիտի որդեգրենք:

Նո՞յնը:

- Այս անգամ թող որ մարգարէութիւն ըրած ըլլանք - որ Եանիկեանը պիտի չունենայ իր յաջորդը:

Հայ ժողովուրդը պարտական կը մնայ հոգեհանգիստ մը Գ. Եանիկեանին՝ նախագահութեամբ ո՛չ Խորէն Կաթողիկոսի եւ ո՛չ Վազգէն Կաթողիկոսի, այլ համեստ տէրտէրի մը...

Մաղթենք, որ հոգեհանգիստ մը չընենք... Հայկական Դատին, որ ճակատագրուած է կուսակցական բազուկներով օրօրուելու, մինչեւ, որ մտնէ խոր քուն:



Սիմոն Սիմոնյան

ՄԻՍՈՆ ՄԻՍՈՆԵԱՆ

«Սփիւռք», թիւ 2, 21 Յունուար 1975

Սիմոն Սիմոնյան (1914-1986) սփյուռքահայ մտավորական գրող, հրապարակախոս, «Սփյուռք» շաբաթաթերթի հիմնադիր և խմբագիր: Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի ստեղծումից անմիջապէս հետո մասնակցել է նրա գաղափարական և քաղաքական գծի ամրապնդմանը:



ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՑ. «ՍԵՎԱՆ» ԶՈՎԱՏ

«Սևան» ջոկատի հրամանատարը Սուրիկ Սարգսյանն էր, շտաբի պետը՝ դպրոցի տնօրեն Գագիկը (Դրո): Հետագայում ջոկատի հրամանատարությունն իր վրա վերցրեց Սամվել Գևորգյանը: Սուրիկ Սարգսյանը հրամանատարական ավելի բարձր պաշտոնի անցավ: Ազգային-ազատագրական պայքարի հենց առաջին օրերից Վարուժ Ադիլխանյանը, Սոկրատ Սարգսյանը, Գագիկ Մանուկյանը, Էդիկ Մանուկյանը, Վազգեն Պետրոսյանը, Հայկը, Արայիկը, Վաղինակը, Հրանտը, Վարուժը, Արկադիին և շատ ուրիշներ ուղքի ելան՝ պաշտպանելու հայրենիքը:

1992 թ. օգոստոսի 20-ին՝ ժամը տասնմեկին, Մարտակերտի շրջանի Վանք, Վաղուհաս գյուղերի ազատագրման ժամանակ տղաներից Ավոն, Գագոն, Վարուժը, Էդիկը, Հայկը և ջոկատի հրամանատար Սամվել Գևորգյանը, մոտ տասը հոգի, գնացին հետախուզության: Անտառում էին, երբ նրանց մոտեցան վեց հոգի: Մեկ մետր հեռավորության վրա կանգնեցին և ռուսերեն ասացին, որ եկել են բանակցելու: Այդ ժամանակ Գագիկը թե՛

- Տղե՛րք, ծուղակն ենք ընկել, սրանք թուրքեր են, զգույշ մնացեք:

Մերոնք չհասցրեցին ավտոմատները լիցքավորել, երբ երկու կողմերից կրակ բացեցին: Այդ խառը պահին Էդիկն ու Վարուժը հասցրին պատասխանել կրակոցներին: Երկու թուրքի Վարուժը խփեց, մնացածներն իրենց գցեցին թաքստոցը: Թշնամին փորձում էր շրջապատել նրանց: Աջ թևից վիրավորվեց հրամանատարը: Նրան, իր կամքին հակառակ, հանեցին մարտադաշտից, քանի որ արյունաքամ էր լինում: Սկսվեց նահանջը: Էդիկը, Վարուժն ու Աբոն չհասցրեցին դուրս գալ օղակից. թուրքերը երեք ռոնակ գցեցին նրանց վրա: Հասկացան, որ ուզում են իրենց գերել: Իր ջոկատով օգնության եկավ Աթանեսյան Սեյրանը: Նա գրոհեց թշնամու գերազանցող ուժերի վրա, հասավ տղաներին:

- Է՛, Մուխ, լսո՞ւմ եք մեզ:

Չորակից Մուխը թե՛ «Լսում եմ»:

- Երբ լսեք մեր կրակահերթը, դուրս կգաք,- վերևից ձայնում է Սեյրանը:

Կրակահերթից հետո նրանք կրակելով դուրս եկան: Վարուժը կանգնել էր ճանապարհի կենտրոնում և իր կրակահերթով տղաներին օղակից դուրս գալու հնարավորություն էր ապահովում: Շրջապատումից դուրս գալով՝ Էդիկը վազեց Սեյրանի մոտ ու բացակայեց:

- Կեցցե՛ս, մեր փրկիչ,- ու ավտոմատի փամփշտակալը անմիջապես լիցքավորելով՝ սկսեց Սեյրանի հետ կրակել թշնամու ուղղությամբ: Կռիվը շարունակվեց մեկ ժամ: Համկարծ լսվեց Գագիկի ձայնը:

- Տղե՛րք, Ալբերտը զոհվել է, հասե՛ք:

Էդիկը, Վարուժը, Գագոն մարտադաշտից կարողացան հանել Աբոյին: Սեյրանի հմտության և խիզախության շնորհիվ ճակատամարտի ելքը որոշվեց հօգուտ հայերի:

Ղարաբաղում հաց չկար: Ստեփանակերտում հողին էին հանձնում Բեկոր Աշոտին՝ Արցախի հերոսին: «Սևան» ջոկատը սգի մեջ էր: Թաղման արարողությունը զուսպ էր, ոչ այնքան մարդաշատ. շատերը մարտադաշտում էին:

«Բալուջա» ջոկատի շտաբի պետ Կամո Բարսեղյանը հուղարկավորությունից հետո վերադարձավ Ստեփանակերտ և այնտեղ հանդիպեց «Սևան» ջոկատի հրամանատար Սուրիկ Սարգսյանին: Հանդիպման ընթացքում վերջինս պատմեց զարհուրելի մի դեպքի մասին, որին ակամատես էր եղել:

- 1992 թ. Մարտակերտի Սարսանգի ջրամբարի համար կատաղի մարտեր էին մղվում, - պատմում էր Սուրիկը: - Կարճ դադար էր տրված: Ումուղլա գյուղի և Թարթառ գետի մոտերքում էինք: Առաջիկա մարտական գործողություններին մասնակցելու համար ազատամարտիկները կարգի էին

բերում իրենց զենքը, հանդերձանքը: Ջոկատը գերի էր վերցրել վաթսուն թուրքերի: Հարցաքննելուց հետո նրանց ուղարկեցին Ղարաբաղի գլխավոր շտաբ: Ծանր վիրավոր իր որդու հետ գերի էր ընկել նաև մի տարեց թուրք: Մինչև գերիներին գլխավոր շտաբ ուղարկելը վիրավոր թուրքի հայրը մոտենում է մեր ամենահաղթանդամ տղաներից մեկին և առաջարկում, որ իր տղային մատաղ կանի, եթե իրեն ազատ արձակեն: Նրա այդ տարօրինակ խնդրանքը որպես կատակ ընդունելով՝ մեր ազատամարտիկը ասում է, որ չի հավատում նրան:

Այստեղ է, որ կատարվում է անսպասելին. վիրավոր թուրքի հայրը մի քանի վայրկյան մտորելուց, ծանր ու թեթև անելուց հետո, չգիտես որտեղից, հանում է թաքցած դանակը: Անբացատրելի մի հանդիսավորությամբ ձախ ծունկը դնում որդու թիկունքին, ձեռքի մեջ փնջում վիրավոր զավակի զանգուր մագերը և դանակը մի քանի անգամ սահեցնում կոկորդի վրայով...: Այնուհետև, ի ցույց ներկայեցրի, կտորձ գլուխը մի քանի վայրկյան օդում պահելուց հետո՝ բաժ ուզում: Ոչ այնքան խորը փոս փորում, հողով ծածկում որդու գլուխը և սկսում արդրեջաներեն ինչ-որ բան երգել: Վերջացնելով հուղարկավորության նմանօրինակ արարողակարգը՝ նա նորից մոտենում է մեր ամենահաղթանդամ ազատամարտիկին, հավանաբար կարծելով, թե նա է հրամանատարը, և խնդրում, որ, այնուամենայնիվ, հարգի իր խնդրանքը և ազատ արձակի...:

Տարդ, գաղթ, բազմաթիվ մահեր տեսած, հարազատներ կորցրած շուրջ յոթանասուն ազատամարտիկ և նրանց շրջապատող քաղաքացիներ այս տեսարանից քար էին կտրել: Ձարհուրելի այս պատկերից մոլորվել ու ապշահար կանգնել էր անգամ վրիժառու Չոլը՝ Գագիկ Մանուկյանը: Ինչ իմանար, որ մի քանի ամիս անց՝ 1993 թ. փետրվարին, Սարսանգի ջրամբարի համար մղված մարտերում նմանատիպ որդեսպան - թուրքի զնդակից կընկնի նաև ինքը՝ Չոլը:

Գրեթե բոլոր ընկերները մասնակցեցին Չոլի հուղարկավորությանը: Ազատամարտիկները, նրանց հարազատները լուռ սզում էին իրենց հերոսի մահը: Բաբիկ Սուքիասյանը, գերեզմանից մի քանի քայլ հեռանալով, սկսեց հեկեկալ: Վառեց ծխախոտը, հայացքը դեպի երկինք ուղղեց, խորը շունչ քաշեց, ականջ դրեց Սևանի ալիքների խշշոցին: Հավանաբար, մտաբերեց անցած թեժ մարտերը: Հետո աչքերը կկոցելով, նայեց կղզու սուրբ Աստվածածին եկեղեցու զմբեթի խաչին՝ փորձելով պատկերացնել, թե ինչպես էր Աշոտ Երկաթը խռով հոգով ու հուսախաբ ինքն իրեն բանտել և ոչինչ չէր ուզում ձեռնարկել:

Երբ զոհ էին տալիս, ցավից ու կսկիծից տղաները զսպանակի պես սեղմվում էին, պնդանում և լռելյայն քայլում ընտրելով ճշմարիտ ճանապարհը: Նրանք գիտեին իրենց անելիքը...



ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՐԲԵՋԱՆԻՆ

Սկիզբը՝ թիվ 2/13-ում

ԵԱՀԿ շրջանակներում մշտապես գործող միջազգային կոնգրեսի կազմակերպչություն, նկատի ունենալով 1992 թ. կեսերին Թուրքիայի ցուցաբերած ռազմական ակտիվությունը Ղարաբաղյան հակամարտության գոտում, ՄԱԿ-ին, պետությունների ղեկավարներին և աշխարհի բոլոր երկրների հասարակայնությանն ուղղված դիմում ընդունեց, որում ասվում էր. «Վերջին ժամանակներս Թուրքիայի Հանրապետության ղեկավարները հանդես եկան մի շարք կտրուկ հայտարարություններով, որոնք չի կարելի դիտել այլ կերպ, քան տարածաշրջանի կոնֆլիկտին բացեիքաց միջամտելու փորձ, կանգ չառնելով ռազմական ուժի գործադրման առջև: Այդ հայտարարությունների հիմքում ընկած են Նախիջևանից եկող այն հաղորդումները, թե Հայաստանի Հանրապետությունը զինված հարձակում է ծավալել Նախիջևանի Հանրապետության դեմ:

Տարածաշրջանում խաղաղարար առաքելություն իրականացնող միջազգային կոնգրեսը շտապ կարգով հետաքննություն անցկացրեց, որը ցույց տվեց, որ հարձակման մասին հաղորդումները ոչ մի հիմք չունեն...

Ստուգմամբ պարզվել է, որ փոխհրաձգումները հրահրել է ադրբեջանական կողմը և դրանք կանխամտածված օգտագործել քաղաքական հիստերիա տարածելու համար: Ինչպես երևում է Նախիջևանի Հանրապետության որոշակի շրջանակներին ձեռնտու չեն Ղարաբաղյան կոնֆլիկտի քաղաքական կարգավորման նախանշվող միտումները, և նրանք գիտակցաբար շիկացնում են կրքերը, ձգտելով հարևան Թուրքիայի բռնաթափանցման միջոցով իրականացնել իրենց հեռու գնացող ծրագրերը...

Այն կարող է հանգեցնել «Հյուսիս-Հարավ» լայնամասշտաբ պատերազմի, ինչը լուրջ սպառնալիք է բովանդակ մարդկության համար:

Եվրոխորհրդակցության շրջանակներում գործող մարդու իրավունքների միջազգային կոնգրեսը դիմում է Միացյալ ազգերին, աշխարհի բոլոր պետություններին, հաստատականորեն կոչ անելով, անհրաժեշտ ներգործություն ունենալ Թուրքիայի Հանրապետության ղեկավարության վրա չնտածված հապճեպ քայլերից նրան զգուշացնելու նպատակով, որոնք կարող են խորացնել «Հյուսիսի և Հարավի» հակասությունները և նրանց դուրս բերել ուղղակի առնակատման: Թուրքիայի Հանրապետությունը, եթե իրոք մտադիր է միանալ համաեվրոպական և համաշխարհային գործընթացներին, ապա պետք է հաստատականորեն հետևի ՄԱԿ-ի մշակած մարդու իրավունքների ապահովման և միջպետական հարաբերությունների հիմնարար սկզբունքներին»:

Ակնհայտ է, որ ելնելով իր քաղաքական շահերից, Թուրքիան հոգուտ Ադրբեջանի ուղղակիորեն չէր ներգրավվի հակամարտության մեջ, քանզի այն չէր մտնում Անկարայի պլանների մեջ: Անկարայում լավ հասկանում էին, որ նման համաձայնագրի կնքումը մարտահրավեր էր հանդիսանալու ոչ միայն Ռուսաստանին, այլև տարածաշրջանի մյուս երկրներին, որոնք, անպատասխան չէին թողնելու թուրքադրբեջանական ռազմական պակտի առաջին քայլերը:

ԽՍՀՄ փլուզումից հետո՝ թուրքական արտաքին քաղաքականության այսպես կոչված «էֆորիկ» փուլի ավարտից հետո, Անկարայում ավելի սթափ մոտեցումներ գրանցվե-

ցին կովկասում և Կենտրոնական Ասիայում առկա ուժերի հարաբերակցության նկատմամբ:

Այդ է վկայում թեկուզև այն հանգամանքը, որ Ադրբեջանի հետ հարաբերություններում Թուրքիան խուսափում էր այնպիսի քայլերից, որոնք կարող էին իր քաղաքականությունը կախման մեջ դնել Ադրբեջանի գործողություններից: 1992 թ. հուլիսին Թուրքիայի արտգործնախարարի տեղակալ Օզդեմ Սանբերքի Բաբու կատարած պաշտոնական այցելության ժամանակ ադրբեջանական կողմից առաջարկ եղավ փոխադարձ անվտանգության պայմանագիր նախապատրաստել, ինչը կտրականապես մերժվեց թուրք պաշտոնյայի կողմից:

Մյուս կողմից, չպետք է անտեսել Թուրքիայի կողմից ռազմական օգնության հետագա տրամադրմանը խանգարող փաստերի նշանակությունը: Նախ՝ Շուշիի ազատագրումից հետո ադրբեջանական բանակին տրված թուրքական ռազմամթերքի տրամադրման փաստն անվիճելի դարձավ և գրանցվեց միջազգային դատորդների կողմից: Մյուս կողմից՝ ադրբեջանական բանակի անհաջողությունները և թուրքական հեռակետերում մարզվելուց հետո ռազմական գործողություններին մասնակցելուց ադրբեջանցի զորակոչիկների խուսափումը, խորը հիասթափություն պատճառեցին Անկարային: Այսպես, 1993 թ. հունիսի 24-ին՝ հայկական ուժերի հուժկու հակահարձակման օրերին, թուրքական «Հյուրիյեթ» օրաթերթը դառնությամբ գրում էր, որ ադրբեջանցի սպաներն ու զինծառայողները, թուրքական Երրորդ բանակի զորամասերում վերապատրաստվելուց հետո վերադառնալով հայրենիք, կան փախել են ռազմաճակատից, կան սկսել են զբաղվել զինվորականության հետ բոլորովին չառնչվող գործերով: Մեկ այլ հոդվածում նույն թերթը նշում էր, թե Թուրքիան ազերիներին զենք է տվել հայերի դեմ կռվելու համար, մինչդեռ նրանք այդ զենքը մինչև այժմ օգտագործում, նկատի առնելով Սուրբ Հուսեյնովի Բաբու կատարած ռազմարշավի հետևանքով Ադրբեջանում տեղի ունեցած խժոժությունները: Հոդվածագիրը ստիպված փաստում էր, որ «Թուրքիան հայ աշխարհագրայինների հանդեպ բացարձակ գերակշռություն ունեցող ադրբեջանական զինված ուժերի կրած պարտության համար որևէ պատասխանատվություն չի կրում: 1993 թ. վերջերին նույն «Հյուրիյեթ»-ի վկայմամբ, Թուրքիայի տրամադրած ռազմական օգնության չարաշահումների ու վատնելու փաստերը նկատի առնելով, թուրքական կառավարությունը Բաքվին զգուշացրել էր՝ դրանց կրկնությունը բացառելու համար:

Ի վերջո, չնայած Անկարայում լավ գիտակցում էին, որ թուրքական կողմի «պասսիվությունը» շատ թանկ կնստի թյուրքալեզու երկրների հետ իր հետագա հարաբերությունների զարգացման և դրանցում իր ազդեցիկ դերի վերապահման առումով, «երկրորդ Կիպրոսի» կրկնման գայթակությունն իր տեղը զիջեց իրատեսական և սթափ քաղաքական հաշիվներին: Վստահությամբ կարելի է մշել, որ ապագայում թուրքական ռազմական և ռազմատեխնիկական օգնությունը Ադրբեջանին շարունակվելու է և Թուրքիան անմասն չի մնա Ղարաբաղյան հակամարտության ոլորտում նոր պատերազմական գործողությունների վերսկսման դեպքում:

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԳՅՈՒԼԸ ՍՏԵՂՈՒՄ Է ԱՐՏԱՍԱՀԱՆՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԴՂԵՄ ՍՓՅՈՒՌԻ
Թուրքիայում, նախագահ Աբդուլլահ Գյուլի հաստատած որոշմամբ, կստեղծվի «Արտասահմանցի թուրքերի և ազգակցական միությունների» վարչություն, որը կունենա 101 աշխատակից, 3 փոխնախագահ և իրավասու կլինի աշխատանքներ իրականացնել Թուրքիայից դուրս ապրող թուրքերի հետ, լուծել նրանց խնդիրները, զարգացնել ցեղակցական, սոցիալական, մշակութային, տնտեսական հարաբերությունները: Որոշ թուրքական լրատվամիջոցներ նշում են, որ վարչությունը ստեղծված է որպես հայկական սփյուռքին հակակշիռ ուժ: /www. azg.am/ 06.04.2010 թ.



ՅՈՎԻԱՆՆԵՍ ՄԱՐՏԻԿԵԱՆ. «ԿՅԱՆՔԻ ՊԱՅՔԱՐԸ»



Մարդ անհատին նկարագիրը կը բացայայտուի այն վերաբերմունքով, զոր ան կը ցուցաբերէ իր ազգին եւ անոր հետապնդած մեծ նպատակներու իրագործման հանդէպ: Եթէ ընդունինք, որ մարդկային կեանքը յարաճուն նուիրումի եւ մնալուն զոհաբերութեան շարք մըն է, կը յանգինք այն եզրակացութեան, որ այդ բազմաբնոյթ զոհաբերութեանց

մէջ ամենէն հիմնականը առնչուած է ժողովուրդներու ազգային դատին եւ արդար պահանջատիրութեան հետ:

Այս տեսանկիւնէ դիտուած՝ Յովհաննէս Մարտիկեան անձնաւորութիւն մըն է, որուն զոհաբերութեանց առանցքը իր ժողովուրդին արդար դատն է. դատ, որուն կը ծառայէ բազմապիսի անհատական միջոցառումներով: Ինծի համար հաճելի անակնկալ մը եղաւ, երբ իմացայ, որ ան խմբագրած է հատոր մը «Կեանքի Պայքարը» խորագրով: Անկեղծօրէն ըսած, նախապէս տեղեակ չէի, որ ան ունի գրելու շնորհք, վասն զի կը կարծէի, որ ան մխրճուած է ճարտարարուեստական եւ տնտեսական այնպիսի նախաձեռնութիւններու մէջ, որոնք կը խլեն իր ամբողջ ժամանակը: Յիշեալ գրքին յառաջաբանը գրելու պատիւը ինծի վիճակուեցաւ: Ուստի, նման պարտականութիւն մը կատարելէ առաջ պէտք է կարդայի գիրքը: Բայց, հարց կու տայի ես ինծի որպէս պատմագիր, թէ ի՞նչ է իմ կապս նման յուշագրութեան մը հետ, որ առնչուած է հեղինակին անմիջական մասնագիտութեան՝ ճարտարարուեստին հետ: Բայց գրքին ընթերցումէն, վերջ, բոլոր տեսակի հարցադրումները նահանջեցին եւ բացայայտուեցաւ հեղինակին միտք բանին:

Արդարեւ, հոս տեղին է յիշել այն իմաստուն խօսքը, որ կ'ըսէ. «Կանխակալ կարծիք պէտք չէ յայտնել որեւէ հարցի մասին, երբ զայն չենք ուսումնասիրած իր ելութեան մէջ. կշռադատելու իրաւունքը կ'ունենանք այն ատեն միայն, երբ մարդ կը ծանօթանայ տուեալ իրականութեան հետ, այնպէս ինչպէս, որ է ...»: Ահա՛, այս ըմբռնումով, պատիւն ունիմ ընթացք տալու մարդու մը, որ հաւատք ունի իր ժողովուրդին եւ բարեկամ ժողովուրդներու արդար դատին նկատմամբ:

Գրքին բովանդակութեան անցնելէ առաջ, իմ անձնական կարծիքս այն է, որ այս հատորը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ հայ եւ արաբ բարեկամութեան համառօտ հանրագիտարան մը...: Որքան ճանջցայ մարդը հեղինակին մէջ, այնքան իմ մօտ արմատացաւ այն համոզումը, որ հեղինակը ինքնավստահ եւ յուսահատութիւն չճանցող անձնաւորութիւն մըն է: Ան օժտուած է պողպատեայ կամքով մը, որ աւելի զօրաւոր է քան բոլոր այն զէնքերը, որոնք սպանեցին, թալանեցին եւ տարագրեցին իր ժողովուրդին շուրջ երկու միլիոն զաւակները:

Յեղինակը այն մարդն է, որ կը խոնարհի միայն ճշմարտութեան առջեւ նկարագրի բացառիկ գիծ, որ յատուկ է միայն տիպար մարդոց...: Անոր աշխոյժ գործունէութիւնը կը նմանի իր հայրենի լեռներէն բխող յորդահոս աղբիւրներուն, զորս չյաջողեցաւ ցամքեցնել դարաւոր թշնամին: Ահա՛, նկարագիրը այս սուրիացի քաղաքացիին, որ հեղինակն է յիշեալ հատորին: Իր պապերուն առաքինութիւններով թրծուած այս քաղաքացին, իր կեանքի ամբողջ տեւողութեան ընթացքին հաւատարիմ մնաց իր ակունքներուն եւ ընթացաւ նոյն փշոտ ճանապարհէն: Ան թափանցեց իր ժողովուրդի անցեալէն ներս, սերտեց այդ անցեալը, ականջ տուաւ իր խղճի ձայնին անմասն հարազատութեամբ եւ որոշեց

արծագանգել ապագայի ազդու ձայնին...:

Այս գրքով, նախ եւ առաջ, հեղինակը անդրադարձած է մանկութեան օրերուն, որոնք իրենց տրտմաթախիծ յուշերով իր ելութեան մէջ դրոշմած են վրիժառութեան եւ հատուցման պահանջատիրութեան զգացումը, որ բողոքի բուռն ցասում մըն է թուրք բարբարոսներուն, 1915-ին գործադրած աննախընթաց ցեղասպանութեան դէմ:

Յովհաննէս Մարտիկեան ասպարէզ իջած է իր կեանքով եւ կամքով ու բոլոր հնարաւորութիւններով ոսոխին դէմ պայքարելու վճռականութեամբ: Հալէպ քաղաքին մէջ կայք հաստատելէ վերջ, խոր անկեղծութեամբ ան կը նկարագրէ արաբ ժողովուրդին ցուցաբերած սիրալիկ վերաբերմունքը եւ հովանաւորութիւնը՝ հանդէպ վտարանդի հայ տարագիրներուն: Ապա, կեանքի պայքարի ընթացքին, հաւատարիմ իր հօրը կտակին, հեղինակը ուզած է երախտահատոյց ըլլալ այն ժողովուրդին, որ ոչինչ խնայեց վերածաղկեցնելու համար դէմքի ժպիտը որբերուն, անտէր երեխաներուն եւ դժբախտացած հայորդիներուն:

Արդարեւ, Արաբական աշխարհի ամբողջ տարածքին վրայ ապրող հայերու հսկայ զանգուածներու առկայութիւնը մի՞թէ մեծագոյն փաստը չէ հայ ժողովուրդի հանդէպ գործուած ահաւոր ցեղասպանութեան, անմարդկային տարագրութեան եւ հողերու բռնագրաւման:

Յեղինակին ազգային արդար հպարտութիւնը կը ցույց գրքին բոլոր տողերուն մէջ. հպարտութիւն մը, որ կը յենու իր հաւատքի ոյժին եւ կամքի զորութեան վրայ, որոնք ներշնչման աղբիւր դարձած են իր ժողովուրդին դարաւոր պատմութեան ընթացքին: Յեղինակին մեծագոյն դրամագլուխը իր բազմապիսի բարեկամներն են, բարեկամներ տարբեր խաւերէ եւ տարբեր մակարդակներէ, զորս պահելու առաքինութիւնը ունի ան: Յեղինակը մէջբերում կ'ընէ սուրիահայ տաղանդաւոր բանաստեղծ Անդրանիկ Ծառուկեանի հետեւեալ պատկերաւոր խօսքը. «Հայերը մորթուեցան թրքական մզկիթներու շուրջին տակ, բայց ամոնք իրենց տունը, դպրոցն ու եկեղեցին, ինչպէս նաեւ իրենց առեւտրական հաստատութիւններն ու ճարտարարուեստի կեդրոնները կառուցին արաբական մզկիթներու քովն ի վեր...»:

Այս է հաւատամքը Յովհաննէս Մարտիկեանին, որ կեանքի ամէն քայլափոխին կ'արտայայտէ իր փոխվրէժի զգացումը հանդէպ անոնց, որոնք ջարդեցին իր ժողովուրդը այնպիսի վայրագ միջոցներով, զորս թուրքին խելապատիկը կրնայ միայն յղանալ: Յեղինակին ապրած կեանքն ու ստեղծագործական աշխատանքը փոխ վրէժն իսկ է, որմէ այսօր կը սարսափի թշնամին: Անոր ճարտարարուեստական իւրաքանչիւր հնարքը թշնամիին երեսն է ի վեր չարտուած փոխվրէժի ելոյթ մը չէ՞ միթէ...: Չէ՞ որ սուրիացի արաբ ժողովուրդն ալ փոխվրէժի զգացումներ ունի հասարակաց թշնամիին դէմ: Ահա՛, այս հոգեբանութեան տեսանկիւնէն դիտուած, ճարտարարուեստի մէջ հեղինակին մուծած նորութիւնները ոչ միայն պատիւ կը բերեն իր անձին եւ զինք ծնող ժողովուրդին այլ նաեւ՝ սուրիական հայրենիքին եւ արաբ ազնիւ ժողովուրդին: Աւելին, հեղինակը շարունակելով կը գրէ. «Եթէ Սթամպուլը ջարդ ու թալան ծրագրած է պատմութեան ընթացքին, ատոր փոխարէն՝ Դամասկոսը եւ Հալէպը իրենց մարդասիրական վերաբերմունքով, փրկութեան եւ ասպնջականութեան խորհրդանիշ դարձան մարդկութեան համար»:

Անոր գործը կարդացողը յստակ գաղափար կը կազմէ Հայոց պատմութեան եւ ջարդերուն մասին ու գիրքը կը վերածուի նոր սերունդի ձեռքերուն մէջ պայքարի զէնքի եւ անոր համար կը դառնայ անտեղիտալի պահանջատիրութեան անրապինդ յենարան:



Հեղինակը բարձրադասակ կը կրկնէ ժողովրդական այն իմաստուն խօսքը, որ կ'ըսէ թէ «Իրաւունքը չի մեռնիր, որքան ատեն որ պահանջատէրը կ'ապրի...»: Ուստի, կը յարէ ան. «Գալիք սերունդները՝ հայ կամ արաբ, պէտք է արթուն պահակներն ըլլան իրենց արդար դատին»: Եւ թէ հայը անմահ է, վասնզի մահը չի վայելէր հայուն: Մահը բառ մըն է, որ գոյութիւն չունի անոր բառարանին մէջ: Իր խիալը եւ ցուցմունքը եղած է անկոտորում պայքար:

Ճշմարտութիւնները քաջաբար արտայայտող անձնաւորութիւն է, ըսած էինք: Հեղինակը, որուն խիզախութիւնը կը կռնի հաւատքի ոյժին եւ կամքի գորութեան վրայ, որոնց առջեւ անգոր կը մնան հակազդելու բոլոր միջոցները:

Արդարեւ, Հովհաննէս Մարտիկեան առիթը ունեցած է շրջապատյոտ մը կատարելու դէպի Ամերիկայի Միացեալ Նահանգները: Ան այցելած է երկրի մեծագոյն քաղաքները, Վաշինկթըն, Պոսթոն, Նիւ-Եորք, Լոս-Անճելըս: Ապա հանգրուաններով ելոյթ ունեցած է, Lou Անճելոսի ATT հեռատեսիլէն եւ ապա Ն. Եորք, Նիւ Ճրքսի եւ Պոսթընի անկախ ծայրահասակներէն, ներկայացնելով սուրիոյ եւ արաբ ազգին ասպնջականութիւնը:

Կրնաք երեւակայել, որ միջազգային սիոնիզմի երկրին մէջ, արհամարհելով հրեական ազդեցութիւնը, ան բարձրագոյն աղաղակած է աշխարհի հզորագոյն պետութեան երկրին մէջ զօրավիզ կանգնիլ հայ եւ արաբ ժողովուրդներու դատերուն, ու քաջաբար պնդած է անոնց իրաւացիութեան անժամանցելիութեան համար: Թերեւս զարմանաք, եթէ անցնենք, որ ան քաջաբար մերժած է ԱՄՆ հաստատուելու քրոջական առաջարկը, վասն զի ան չէ ուզած հեռանալ իր ծննդավայրէն՝ պատմական Հալէպէն եւ Տէր-Ջօրի անապատներէն, ուր առանց շիրիմի կը հանգչին իր տարագիր ու նահատակ պապերը: Մի՞թէ յիշեալ պարագան լաւագոյն փաստը չէ այն հաւատարմութեան եւ երախտագիտութեան, հանդէպ այն երկրին, որ հայուն ապահովեց ինքնորոշման բոլոր ազատութիւնները: Մի զարմանաք: Այն որ հալալ կաթ ծծած է իր մանկութեան, հասակ առնելէ ետք չի կրնար ուրանալ իր ծծած կաթը: Ահա՛, այն տիպար մարդը, որ օրինակ պէտք է ծառայէ ուրիշին...:

Մարտիկեանի յուշագրութիւնը կու տայ սպառնիչ պատասխանը բազմաթիւ հարցերու, որոնցմով կը հետաքրքրուի պրպտող եւ որոնող միտքը: Պատգամի վերածուած պատասխան մը, որ պէտք է փոխանցուի գալիք սերունդներուն, որպէս ճիշտի պարտք, որպէս «ականջի օղ»:

Հեղինակը ունի բազմաթիւ շքանշաններ եւ պատուոյ գիրքեր, որոնց արժանացած է Սուրիոյ մէջ, կամ այլուր: Այդ բոլորը լաւագոյն գնահատականն են այն անկեղծ եւ անվեհեր

մարդուն, որ հպարտութեամբ կը յայտարարէ իր ազգային ու քաղաքացիական պատկանելութիւնը:

Կ'ըսուի թէ պատգամը գանձ է: Արդարեւ, պարագաներ կան, որ պատգամը աւելի արժէքաւոր է քան գանձը եւ աւելի զօրաւոր՝ քան թնդանօթը՝ կամ այլ որեւէ զէնք...:

Գրքին ընթերցումը շարունակելով, կը զգաս որ հեղինակը իր յուշերով ընթերցողին մէջ կ'արթնցնէ այնպիսի կայծեր, որոնք կը բոցկտան այն հոգեւոր կրակով, որ կը կոչուի փոխվրէժի եւ պահանջատիրութեան պայքար:

Թերեւս գտնուին մարդիկ, որոնք չզնահատեն հեղինակին գործունեութիւնն ու ներկայ գիրքը: Այդ հանգամանքը Մարտիկեան շատ բնական կը նկատէ, որպէս թուլամորթ եւ նիւթապաշտ մարդոց հոգեվիճակ:

Եզրափակելէ առաջ, շնորհակալութիւն կը յայտնենք բրեկամիս Հովհաննէս Մարտիկեանին, որ առիթ ընծայեց ինձի կարողալու իր յուշագրութիւնները եւ գրելու ներկայ յառաջաբանը:

Արդարեւ, ես հպարտ եմ հեղինակին հետ ունեցած կապերուս համար: Որովհետեւ, ան բարեկամ մըն է, որ ճաշակած է տառապանքին դառնութիւնը, մերժած է մահը եւ վերականգնելով, այսօր իր խօսքը կ'ուղղէ ոճրագործին, գոչելով. «Մենք պիտի մնանք ցցուած քու դէմ ժայթկող հրաբուխի պէս, մինչեւ, որ դուն ընդունիս ցեղասպանութիւնը, կատարես նիւթաբարոյական հատուցում, վերադարձնելով բռնագրաւուած հողերը՝ իրենց իսկական տէրերուն: Դուն չաջողեցար արմատախիլ ընել մեզ: Չյաջողեցար ջնջել հայ ժողովուրդը պատմութեան էջերէն, ու Հայաստանը՝ աշխարհագրական քարտէսներէն: Այսօր հայութիւնը անցեալ է, ներկայ ու ապագայ միաժամանակ...»:

Ջերմապէս կը շնորհաւորեն հեղինակը իր յարատեւութեան ոգիին եւ զօրաւոր կամքին համար, որոնք զուգորդուելով ծնունդ տուած են այս հատորին, որպէս անշրջելի պատգամ եւ անշիջելի փարոս գալիք սերունդներուն համար: Պատգամ մը, որ ոյժը չի կորսնցնէր ժամանակի հոլովոյթով եւ որպէս փարոս կը մնայ առյաւելտ անմար, որքան ալ զօրաւոր ըլլան բուքն ու բորանը...:

ՍԱԼԷՔ ԶԱՐԻ ԷԼՏԻՆ

«Ուխտ Արարատի» հասարակական նախաձեռնության խորհուրդը և ամսագրի խմբագրությունը շնորհավորում է զինակից ընկերոջ՝ Հովհաննէս Մարտիկեանի 75-ամյակը, մաղթում՝ քաջամողջություն, հաջողություն և նոր հաղթանակներ:

Դիարբեքիի քաղաքապետ. «Աղքատ ենք, որովհետև կորցրեցինք հայերին...»

Թուրքիայի Դիարբեքիի մշակութային հիմնադրամներից մեկի նախաձեռնությամբ կազմակերպված երեկոյին համերգով է հանդես եկել դիարբեքիցի հայտնի երաժիշտ Ջոշուն Սաբահը, ում ողջունել և հանդես է եկել հայտարարությամբ Դիարբեքիի քուրդ քաղաքապետ Օսման Բայդեմիրը:

«Այս ժողովուրդը ավելի շատ տառապելու իրավունք չունի: Մի ժամանակ այս քաղաքում էին մեր հարստությունը, գեղեցկությունը հանդիսացող հայերը և սիրիացիները: Նրանց կորցնելու պատճառով է, որ այսօր մենք աղքատ ենք: Մենք կորցրեցինք: Այս սերունդը արդեն դա զգում է», - նշել է հիմնականում քրդաբնակ Դիարբեքիի քաղաքապետ Օսման Բայդեմիրը:

NEWS.am-ը ավելի վաղ տեղեկացրել էր, որ այս տարվա փետրվարի սկզբին Մարդին քաղաքում կազմակերպված համաժողովի ժամանակ Օսման Բայդեմիրը հանդես էր եկել բավականին համարձակ ելույթով: «Մի ժամանակ Միջագետքում ապրում էին ասորիներ, հայեր, քրդեր, որոնք իրենց կրոնական ինքնությամբ հաջողության, համբերատարության, խաղաղության և զարգացման խորհրդանիշ էին: Սակայն որոշները եկան, մեզ երկար տարիներ ղեկավարեցին և այդ ընթացքում այստեղից մարդիկ ստիպված հեռացան: Սա ասում եմ մեծ ցավով: Դիարբեքիում մնացել է ընդամենը մի քանի հայ ընտանիք, իսկ 120 տարի առաջ նրանք բնակչության 40 տոկոսն էին կազմում: Ոչ մի ներողություն այդ ողբերգությունը չի թեթևացնի: Այո, մեծ ցավ էք ապրել: Դուք ստիպված գնացիք, բայց համոզված եղեք, որ դուք չեք կորցրել, մենք՝ այստեղ մնացողներս ենք կորցրել: Հաջողությունը և խաղաղությունը ձեզ հետ տարաք», - նշել էր Դիարբեքիի քուրդ քաղաքապետը:

/www.news.am/26.03.2010 2 թ.



ԿԱՐԿԱՌԻ ամրոցը Եփրատի արեւմտյան ափին

Եփրատ գետի արեւմտյան ափին էր գտնվում Կարկառ բերդավանը, որին մոտիկ՝ ժայռոտ մի քարաբլուրի վրա, վեր էր խոյացել Կարկառ բերդը, այսօր թուրքերն այն կոչում են Կերկեր քալեսի (Gerger kalesi), հնում Կարկառ բերդավանի տեղում է գտնվել պատմական Կոմագենի Արզամիա (Arzamia) քաղաքը:

1806-ին Յ. Ղ. Ինճիճյանը իր «Նոր Հայաստան» գրքում Կարկառի մասին գրում է. «Գիւղաքաղաք յարեւմտեան եզր Եփրատայ, գրեթէ երկու աուր եւ կիսով հեռի ի Մալաթիոյ եւ նոյնքան յԱրժայէ: Եվ շարունակում է. «ի գլուխ բարձր լերին ունի բերդ քարաշէն»:

Հնուց ի վեր ծանոթ գյուղական էր Կարկառը և մի ժամանակաշրջան հայերի իշխանության տակ է եղել: Ալիշանը նրա մասին գրում է. «Այս ամրոցս էր Կարկառ բերդավան Եփրատ գետոյ ձախակողմը (արեւմտեան), թէ՛ ժայռերով եւ թէ՛ յորձանահոս ջրերով՝ անկասկած եւ անառիկ տեղ մը»: Իսկ Արշակ Ալպոյաճյանը գրում է. «Սամուսատի մօտ՝ Կառկառի մէջ, Փիլարտոս հայր ժԲ դարուն հողատիրութիւն մը հաստատած էր»:

Կարկառը ռազմավարական կարեւոր արժեք ներկայացնող բերդավան էր, նրա առջեւով էր անցնում Եփրատը, որի վրա ռազմական կամուրջ կար, որտեղից հռոմեական զորաբանակներն էին անցնում Արեւելք եւ Միջագետք գնալու համար: Հռոմեական իշխանությունը լավ էր ամրացրել այս շրջանը, պաշտպանում էր կամուրջը եւ ջանում էր այն իր հսկողության տակ պահել: Բյուզանդացիները, իրենց հերթին ևս, որոնց սահմանները Եփրատից այնկողմ էին ձգվում, ջանում էին իրենց ձեռքը պահել կամուրջը եւ Կարկառի բերդը, այն ժամանակաշրջանի հայ իշխանների օգնությամբ պաշտպանել ու կառավարել: Այս իշխաններից մեկը՝ Կոստանդինը, ով մի քանի իշխանների հետ եկել էր Արեւելքից եւ հաստատվել այնտեղ՝ կայսեր հովանու տակ, այս մասին է գրում Սմբատ Սպարապետը. «Եկն եւ Կոստանդին իշխանն Հայոց ի Կառկառ յիսուն հեռելով...»: 1098-1099 թթ. Կոստանդին իշխանը իշխում էր Կարկառի ու նրա հարակից շրջանների ու վրա: Կոստանդինը մեծ սխալ է գործում, միաբանվելով Անտիոքի Պաղտին կոմսի հետ, սպանում է Եղեսիայի Թորոս Կյուրապաղատին, «եւ միաբանեցուցին զիշխանն հայոց զԿոստանդին եւ սպանին զնա»: Շատ չանցած Կոստանդինի ողբերգական մահվան պատճառը դարձավ նույն Պաղտին կոմսը:

Կոստանդինի ողբերգական մահից հետո՝ 1125-ին, Կարկառ բերդի եւ նրա շրջակայքի վրա իշխում է նրա որդին՝ Միքայելը, ով բերդաքաղաքն իր ձեռքը պահելու համար, ստիպված էր երկար կռիվներ մղել թե՛ արաբ, թե՛ լատին իշխանների եւ կոմսությունների դեմ, որոնցից գլխավորն ու վտանգավորը Եղեսիայի ճոսլին կոմսն էր: Սա մեծ բանակով գալիս պաշարում է Կարկառը: Միքայելը, չկարողանալով դիմադրել, գիշերով թողնում է բերդը եւ ապաստանում Քեսուռում: ճոսլինը գրավում է բերդը, առանց արյուն թափելու, սակայն, ինքն էլ երկար չի կարողանում այն պահել: Երբ Խարբերդի Պալակ ամիրան լսում է, որ Միքայելը Կարկառից հեռացել է, իսկ ճոսլինը առանց մարտի բերդ է մտել, զորաբանակով գալիս ու պաշարում է այն: Կարճ ժամանակ անց սովն ու հիվանդությունը ընկնում են բերդ, ճոսլինը ստիպված պարիսպներից դուրս է գալիս եւ մարտի է բռնվում Պալակի հետ, սակայն, պարտվում է ու գերի ընկնում: Պալակը նրան շղթայակապ տանում է բերդի պարիսպների առջեւով... եւ ստիպում բերդի դռները բացել...: Մաթեոս Ուխայեցին գրում է. «Եւ տարաւ Պալակն զթագաւորն ի դուռն Կառկառայ, եւ նա տայր զԿառկառ ի ձեռս Պալակին»:

Միքայելը՝ Կոստանդին իշխանի որդին, երկար տարիներ հայրենիքից հեռու լինելով, մտածում էր հնար գտնել եւ ազատել հայրենի քաղաքը, ուստի, քաղաքից քաղաք



շրջելով, իր շուրջն է հավաքում հիսուն քաջերի եւ մի օր հանկարծակի հարձակվում է Կարկառի վրա եւ պաշարում: Բերդի թուրք պահապանները ստիպված էին անձնատուր լինել եւ Միքայելի առջեւ բացել բերդի դռները: Միքայելի երազն իրականություն էր դարձել. հաղթանակած, արցունքն աչքերին, մտնում է բերդ եւ գերի վերցնում պահակազունը:

Միքայելը հոր վրեժը լուծում է թշնամիներից, որոնք նրա կենդանության օրոք այլեւս չհամարձակվեցին վերադառնալ Կարկառ, նա շուրջ քսանհինգ տարի՝ մինչեւ մահը, այնտեղ խաղաղ օրեր անցկացրեց: Միքայելի մահվան թվականն ու հանգամանքներն անհայտ են:


Պատմագրության մեջ հիշատակվում է, որ 1149-ին Կարկառ բերդի իշխանն ու տերը Վասիլն է: Վերջինիս խաղաղ օրեր բաժին չեն ընկել. նա ստիպված էր պատերազմել երկրի սահմանների մոտ մեծաքանակ բանակների տեր թուրք ամիրաների, մանավանդ Խարբերդի սուլթանի դեմ: Սա ավելի խորամանակ էր, քան քաջ. եւ մի օր, երբ Վասիլը Կարկառից դուրս է գալիս, Խարա Ասլան հանկարծակի է բերում նրան եւ գերեվարում: Խարա Ասլանը Վասիլին շղթայած բերում, ցույց է տալիս նրա զավակներին ու կնոջը, որոնք բերդում սպասում էին Վասիլի վերադարձին: Բերդի պահակազորը ստիպված էր դեսպաններ ուղարկել սուլթանի մոտ եւ իրենց իշխանին ազատ արձակելու խոստում առնել: Խարա Ասլանն ընդունում է պայմանները եւ հարգում տված խոստումը: Բերդապահներն անվնաս հեռանում են Կարկառից, իսկ Վասիլը մնում է Խարա Ասլանի մոտ, մի առ ժամանակ ծառայում վերջինիս ու մեծ պատիվների արժանանում:

Եգիպտական սուլթանը 1283 թ. Մարաշի հետ միասին գրավում է նաեւ Կարկառը: Հետագայում Կարկառը գյուղաքաղաք էր՝ Խարբերդի նահանգի Մալաթիայի գավառում: 20-րդ դարի սկզբներին ուներ 100 տուն հայ բնակիչ, եկեղեցի: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կարկառի հայերի մի մասը բնաջնջվեց, իսկ մնացածը՝ բռնությամբ մահմեդականացվեց:

ՁԵՄԱՍ ԲԱՂՂԱՅԱՆ

Գրականություն

1. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ա-Դ,
2. Հ. Միքայել Վ. Յովհաննեսեան, Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները, Վենետիկ, 1970 թ.,
3. Ռոբերտ Էդվարդս, «Հայկական Կիլիկիայի ամրությունները», ԱՄՆ, 1987 թ.:




Գեղանկարները՝ ժանսեմի





Ա Ա Ղ Ղ Ա Ա Ղ Ա Ա



Դրոսի Դարուչի Ասակի. Երաժշտ. Էդգար Հովհաննիսյանի

Երբ չի ծնում ե՛լք ու ճար,
Դեմերեն ե՛ն գրվում հեար:
Աչապես ճարեց, արեցակեց
Ասրգարապարի ճարեր ճե՛ն:

Կրկներգ-

Ջանգե՛ր, զոզանցե՛ն,
Արբապան ֆաջերի՛ն կանչե՛ն
Աչա արգար պարից:
Աերունցե՛ր, զո՛ւ չե՛ց ճանաչե՛ն
Ասրգարապարից:

Ախարարից զանձ առանձ,
Աչապե՛ց ծի պակ կանց առանձ,
Ո՛ր ջունչ առանձ՝ ջունչերս քանձ
Ասրգարապարի պարի քանձ:

Կրկներգ-

Ջանգե՛ր, զոզանցե՛ն,
Արբապան ֆաջերի՛ն կանչե՛ն
Աչա արգար պարից:
Աերունցե՛ր, զո՛ւ չե՛ց ճանաչե՛ն
Ասրգարապարից:

Բարչ ճե՛ն չընկանձ, ճե՛ն ծի ջր կանձ,
Ա՛նե՛ն չհանցանձ, զե՛ն կզանձ՝
Երբ քան քանցե՛ր, ահապանցե՛ր՝
Ո՛ր ճե՛ր հոցու պարբեր քանձ:

Կրկներգ-

Ջանգե՛ր, զոզանցե՛ն,
Արբապան ֆաջերի՛ն կանչե՛ն
Աչա արգար պարից:
Աերունցե՛ր, զո՛ւ չե՛ց ճանաչե՛ն
Ասրգարապարից:

Maestoso e poco pesante

mf Secco, molto cresc.

S.
A.
Coro
T.

B. 1. երբ չի վը - ճում ելք ու ճար, խենր - երն են գրու - ճում հը - ճար.
2. Ա - վա-րայր-ից...

Ժամանակին, երբ քննարկվում էր Հայաստանի Հանրապետության համար նոր հիմն ընտրելու հարցը՝ մենք մտածում էինք, որ դա կարող է լինել «Սարդարապատը» խոսք Պարույր Սևակի, երաժշտությունը՝ Էդգար Հովհաննիսյանի: Հիմա, ավելի քան համոզված ենք, որ դա միակ տարբերակն էր և է, այնքան ժամանակ, քանի դեռ չի վերականգնվել Հայաստանի տարածքային ամբողջականությունը և խաղաղությունն ու խաղաղ համակեցությունն չի հաստատվել տարածաշրջանում: («Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև նախաստորագրված երկու Արձանագրություններում ներառված կետերի բովանդակության մասին», 29.09.2009)